

ՀՈՎՀ ԲԱՂԿԱՍԱՐՅԱՆ

ՀՈՒՏՈՐԱԿԱՆ
ԽՈՍԱՔԻ ՈՒԺԸ

ՀՈՎՀ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՀՌԵՏՈՐԱԿԱՆ ԽՈՍՔԻ ՈՒԺԸ

ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ
ՍՈՎԵՏԱԿԱՆ ԲԱՂԱՔԱԿԱՆ
ՀՌԵՏՈՐԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ
ՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ
ՄԱՍԻՆ

Երևան «Հայաստան» 1987

Գրախոս՝ Խ. Հ. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Խմբագիր՝ Մ. Գ. ՄԵԼԻՔՈՆՅԱՆ

Բաղդասարյան Հ.

Բ 242 Հոետորական խոսքի ուժը: Համառոտ
ակնարկ սովետ. քաղ. հոետոր. արվեստի
տես. և պրակտիկայի մասին/Խմբ.՝ Մ. Գ.
Մելքոնյան.— Եր.: Հայաստան, 1987.—
215 էջ.

Սույն աշխատությունը համառոտ ակնարկ է սովետական
ժամանակակից քաղաքական հոետորական արվեստի պատ-
մության, տեսության և պրակտիկայի մասին: Գրքում օգ-
տագործված են հեղինակի նախորդ աշխատություններում
եղած որոշ նյութեր, որոնք վերամշակվել և լրացվել են
կուսակցության XXVII համագումարի, ՍՄԿԿ Կենտկոմի
1985 թ. ապրիլյան և 1987 թ. հունվարյան պլենումների
որոշումների լույսով:

Նախատեսվում է դասախոսների, պրոպագանդիստների,
կուսակցական ու պետական աշխատողների համար:

Բ 460200000
701 (01)-87 15—87

ԳՄԴ 83.97

Յուրաքանչյուր պրոպագանդիս-
տի ու յուրաքանչյուր ազիտա-
տորի հմտությունը հենց այն
է, որ լավագույն կերպով ներ-
գործի տվյալ լսարանի վրա,
ներա համար հայտնի ճշմարտու-
թյունը դարձնելով ըստ հնարա-
վորին ավելի համոզիչ, ըստ
հնարավորին դյուրին յուրաց-
վող, ըստ հնարավորին ավե-
լի ակնբախ ու հաստատ տպա-
վորվող:

Վ. Ի. ԼԵՆԻՆ

Խոսքով վառիր մարդկանց սըր-
տերը:

Ա. Ս. ՊՈՒՇԿԻՆ

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Դասախոսի, պրոպագանդիստի, ագիտատորի, ուսուցչի, կուսակցական և պետական աշխատողի համար, նրանց համար, ովքեր իրենց նվիրել են մեր մարդկանց կոմունիստական դաստիարակության, նրանց սոցիալիստական աշխարհայացքի ձևավորման շատ շնորհակալ և շատ պատասխանատու գործին, չափազանց կարևոր է դյուրըմբռնելի ու գեղեցիկ, հուզիչ և համոզիչ, բովանդակալից և պատկերավոր խոսելը, հոետորական արվեստին տիրապետելը:

Խոսք... «Խոսքը մարդկային ուժի կորավարն է»: Խոսքի նշանակությունն այսպես պարզ ու հստակ, այսպես կարճ ու դիպուկ է բանաձևել Վլադիմիր Մայակովսկին:

Մարդուն ուղղված խելամիտ, անկեղծ, ճշմարտացի խոսքը միտք է արթնացնում, կարգացնում մարդկանց նախաձեռնությունը, համոզում, եթե պետք է համոզել, դաստիարակում թերությունների նկատմամբ անհաշտ վերաբերմունքի ոգով, զգաստության կոչ անում:

Այսօր, երբ կուսակցությունը երկիրն էապես առաջ է տանում պատմական վարձագման ներկա փուլի խնդիրներին համապատասխանող վերակառուցման, արագացման, կադրային քաղաքականության կատարելագործման ուղիով, երբ երկրի հասարակական կյանքը բնորոշվում է սովետական մարդկանց քաղաքական ակտիվությամբ, նրանց կրթվածության և պահանջմունքների պգալիորեն աճած մակարդակով, ավելի ու ավելի մեծ նշանակություն է ստանում մասսաների մեջ տարվող առավել մատչելի, առավել հասկանալի, առավել պարզ ու կենդանի խոսքը՝ հոետորական խոսքը:

Մենք նպատակ չունենք հանգամանորեն խոսելու հոետորական արվեստի մասին: Դա մեծ, ծավալուն թեմա է, հատուկ ուսումնասիրության և ուսումնառության առարկա, որ ավանդվում է երկրի մի շարք բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Ուլում ենք ընդհանուր գծերով ցույց տալ, թե իրենից ի՞նչ է ներկայացնում հոետորական արվեստը, որոնք են այդ արվեստին տիրապետելու հիմնական միջոցները:

Հոետորական արվեստի մասին հնում հայերեն լույս են տեսել առանձին աշխատություններ: Մեր օրերում այդ հարցին անդրադարձել են Մ. Ասատրյանը, Հ. Ասլանյանը, Ս. Արևշատյանը, Մ. Մելքոնյանը, Պ. Պողոսյանը:

Սույն աշխատությունը նպատակ ունի ինչ-որ

չափով լրացնել այդ հարցի վերաբերյալ հայերեն լեզվով գրականության պակասը:

Օգտագործված են մարքսիստական դասականների, կուսակցական, պետական և հասարակական ականավոր գործիչների ասույթները հոետորական խոսքի, պերճախոսության մասին, ինչպես նաև տարբեր ժամանակների մեծ մտածողների, գրողների, գիտնականների խրատական ասացվածքները, թևավոր խոսքերը և աֆորիզմները:

Աշխատության համար ուղեցույց են հանդիսացել կուսակցության XXVII համագումարի ծրագրային փաստաթղթերը, համագումարից հետո տեղի ունեցած ՍՄԿԿ Կենտկոմի պլենումների նյութերը, գաղափարախոսական աշխատանքի մասին

ՀՌԵՏՈՐԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ

Հոետորական արվեստը հին, շատ հին պատմություն ունի: Այդ մասին հիշատակություններ կան դեռևս մեր թվարկությունից առաջ IX—VIII դարերում:

Հոետորական արվեստի մասին գիտեին Հին Եգիպտոսում, Ասորեստանում, Բաբելոնում, Հընդկաստանում, Չինաստանում: Սակայն ժամանակակից հոետորական խոսքի ավանդույթներն սկիզբ են առնում գլխավորապես Հին Հունաստանի և Հռոմի հոետորական արվեստից:

Հոետորական արվեստը հատկապես մեծ կատարելության հասավ Աթենքում՝ հին ստրկատիրական աշխարհի ամենադեմոկրատական պետության մեջ և բուռն ծաղկում ապրեց մեր թվարկությունից առաջ 5-րդ դարի վերջերին և 4-րդ դարում, երբ Հունաստանը գտնվում էր քաղաքական և տնտեսական կյանքի մեծ վերելքի շրջանում:

Հունաստանում ճարտասանության առաջին ուսուցիչներն եղել են սոփեստները, որոնք գրում

էին վանազան ճառեր, ձեռնարկներ և աշակերտներին ստիպում էին բերանացի սովորել: Նրանք ավելի շատ ուշադրություն էին դարձնում ճառի տեխնիկական միջոցներին ու շարադրանքին, քան դրա բովանդակությանը և տրամաբանությանը:

Հին Հունաստանի ամենաականավոր հոետորը և քաղաքական խոշոր գործիչը Դեմոսթենեսն էր (384—322 թթ. մ. թ. ա.): Նա իր ճառերում հույներին կոչ էր անում պայքարել հանուն դեմոկրատական Աթենքի անկախության և ապատության: Դեմոսթենեսից բացի Հին Հունաստանը տվել է ականավոր հոետորների մի փայլուն համաստեղություն՝ Պերիկլես, Իսոկրատես, Էսքինես և ճարտասանության այլ վարպետներ:

Հոետորական արվեստի զարգացման Հին Հունաստանի շրջանի արդյունքները հանրագումարի է բերել անտիկ աշխարհի մեծագույն մտածող Արիստոտելը (384—322 թթ. մ. թ. ա.) իր «Հոետորիկա» առաջին գիտականորեն հիմնավորված աշխատության մեջ:

Հունաստանում քաղաքական և դեմոկրատական ապատության անկման հետ միասին անկում ապրեց նաև հոետորական արվեստը:

Մեր թվարկությունից առաջ երկրորդ դարից սկսած հոետորական արվեստն իր երկրորդ «ուկե դարն» ապրեց Հռոմի ստրկատիրական հանրապետությունում:

Հին Հռոմում արվեստների մեջ առանձնապես տարբերակում էին երկու արվեստ՝ լավ պորավարի արվեստը և հոետորի արվեստը: Հոետորությունը համարում էին արվեստների թագուհի, հոետորներին ոսկե արձաններ էին ձուլում կենդանության օրոք և փառաբանում ու մեծարում նրանց:

Հին Հռոմի ականավոր հոետորներ են Կատոն Ավագը, Գրակքոս եղբայրները, Մարկուս Անտոնիոսը և ուրիշները:

Վերջապես հանրապետական Հռոմի պետական և քաղաքական ականավոր գործիչ, փիլիսոփա, գրականագետ և իրավաբան Մարկուս Տուլլիուս Ցիցերոնը (106—43 թթ. մ. թ. ա.), որի անունն ընդմիջտ մտել է պատմության, մասնավորապես համաշխարհային կուլտուրայի պատմության մեջ որպես նաև հռչակավոր հոետոր և հոետորական արվեստի մեծագույն տեսաբան:

Ցիցերոնի մասին նրա ժամանակակիցներից մեկն ասել է. «Երկինքը Ցիցերոնին երկիր է ուղարկել, ըստ երևույթին, նրա համար, որպեսզի նրանով օրինակ տա, թե ինչ աստիճանի պորեղ կարող է լինել խոսքը» (Морилло А. и Дебена Г., Судебные ораторы в древнем мире, стр. 113):

Ցիցերոնը որպես հոետոր երևույթ էր անտիկ աշխարհում, և որպես այդպիսին՝ մնաց դարերի պատմության մեջ: Եվ պատահական չէ, որ դեռևս իր կենդանության օրոք նրան կոչել են լատինա-

կան պերճախոսության և գրականության հայր, իսկ XVIII դարի ֆրանսիական բուրժուական մեծ հեղափոխությունը Ցիցերոնին բնութագրել է որպես քաղաքական ականավոր հոետոր: Ցիցերոնին բարձր է գնահատել ռուս մեծ գիտնական և բանաստեղծ Մ. Վ. Լոմոնոսովը:

Ռուս դեկաբրիստները, հանձին Ցիցերոնի, տեսել են որպես Հռոմի հանրապետության ավատության համար պայքարող մարտիկի:

Ժամանակին Հուլիոս Կեսարը Ցիցերոնի մասին ասել է. «Նրա հաղթանակն ու փառքի պսակները առավել արժանավոր են պորավարի հաղթանակից և փառքի պսակներից, որովհետև հոմեական ոգու սահմաններն ընդարձակողը նախապատվելի է նրանից, ով ընդարձակել է հոմեական տիրապետության սահմանները» (Утченко С. Л. Цицерон и его время, М., 1973, стр. 387):

Ցիցերոնի՝ դարերի խորքից մեկ հասած շատ մտքեր հիմա էլ հնչում են թարմությամբ և շատ օգտակար են այսօրվա հոետորին: Հռոմի հանրապետության պաշտպանությանը և Կատիլինայի դավադրական գործունեության դեմ ուղղված նրա ճառերը հոետորական խոսքի, կրթտության և համովածության անգերապանցելի օրինակներ են:

Ահա, այդ ճառերից մի հատված. «...Այստեղ, սենատում, ես տեսնում եմ մի քանիսին, որոնք (երեկ գիշեր) այնտեղ քեզ հետ էին: Օ՛հ, անմահ աստվածներ: Որտե՞ղ ենք մենք գտնվում:

Ինչ քաղաքում ենք ապրում: Ո՞ր պետության մեջ ենք բնակվում: Այստեղ, կրկնում եմ, այստեղ, մեր մեջ, պարոնայք սենատորներ, այս ամենամեծարելի և ամենահեղինակավոր ժողովում, որին հավասարը ոչ մի բան դուք չեք գտնի ամբողջ տիեզերքում, ներկա են գտնվում մարդիկ, ովքեր խորհում են իմ և ձեր կործանման մասին, մեր քաղաքի և ամբողջ աշխարհի կործանման մասին»:

Մարիետա Շահինյանը գրել է. «Կարդում ես այս կրթոտ խարապանումները և հիշողությանդ մեջ ականա հառնում են լատինական կլասիկան, Ցիցերոնի ձառերը Կատիլինայի դեմ. այնքան նրանք նման են ըստ կառուցվածքի, պայրույթի, սառնաշունչ կրակի» (**Մարիետա Շահինյան, Չորս դաս Լենինից, Երևան, 1975, էջ 170**):

Հանրապետության անկումից հետո Հոռմում քաղաքական հոստորությունը ոչ միայն հարգի չէր, այլև հալածվում էր հոռմեական կայսրերի կողմից:

Միջին դարերում՝ խավարամոլության և սխուլաստիկայի ժամանակաշրջանում, նույնպես հոստորական արվեստը խոր անկում ապրեց: Զրիստոնեության ազդեցության ուժեղացման հետևանքով լայն տարածում ստացան կրոնաբարոյական բնույթի ձառերը:

XVIII դարում տեղի ունեցած քաղաքական իրադարձությունները, հատկապես ֆրանսիական բուրժուական հեղափոխությունը, շատ բանով նպաստեցին հոստորության վերականգ-

նրմանը և վարգացմանը Եվրոպայի մի շարք երկրներում՝ Անգլիայում, Գերմանիայում, Իտալիայում, Ավստրիայում: Այդ ժամանակվա աչքի ընկնող հոստորներ էին Կրոմվելը, Պիտտը, Բրայտը, լորդ Ջոն Ռասսելը, Գլադստոնը, Պալմերստոնը, Պառնելը...

Նոր ժամանակներում նշանավոր հոստորներ են եղել ֆրանսիական մեծ լուսավորիչները՝ Վոլտերը, Մոնտեսքյոն: Հայտնի են ֆրանսիական հեղափոխության շրջանի դատական ու քաղաքական հոստորներ Դանտոնը, Միրաբոն, Մարատը, Ռոբեսպիերը:

XIX դարը մարդկությանը տվեց այնպիսի հռչակավոր հոստորներ, ինչպիսին են Կարլ Մարքսը և Ֆրիդրիխ Էնգելսը, որոնք հոստորական արվեստում նոր ուղղություն մտցրին, նոր խոսք ասացին: Մարքսին ու Էնգելսին է պատկանում բանվոր դասակարգի հոստորական արվեստի հիմնադրի պատիվը: Նրանք մշակեցին այդ արվեստի գիտական հիմունքները, ելան ընդդեմ վերացական ու վերամբարձ խոսքի, փքուն ու մանվածապատ դատողությունների: Նրանց ձառերն ու ելույթները տարբերվում էին իրենց գաղափարական խոր համոզվածությամբ և կրքոտությամբ, երկաթյա տրամաբանությամբ, ապագայի նկատմամբ վառ հավատով, միաժամանակ աչքի էին ընկում լեզվի և ոճի պարզությամբ ու հստակությամբ, պատկերավորությամբ և արտահայտչամիջոցների հարստությամբ:

«Մի ուրվական է շրջում Եվրոպայում՝ դա

կոմունիստի ուրվականն է»։ «Թո՛ղ դողդողան տիրող դասակարգերը կոմունիստական հեղափոխության առաջ։ Պրոլետարները ոչինչ չունեն կորցնելու այդ հեղափոխության մեջ՝ բացի իրենց շղթաներից։ Իսկ ձեռք կբերեն մի ամբողջ աշխարհ»։ Մարքսի և Էնգելսի հանձարեղ երկի՝ «Կոմունիստական կուսակցության մանիֆեստի» այս մտքերը ոչ միայն ծրագրային դրույթներ են, այլև հոետորական խոսքի անգերապանցելի օրինակներ։

Փայլուն հոետորներ են եղել Մարքսի և Էնգելսի ժամանակակիցներ Ավգուստ Բեբելը, Վիլհելմ Լիբկնեխտը, Պոլ Լաֆարգը, Ժան Ժորեսը, Էժեն Պոտյեն, Էռնստ Ջոնսը, Ժյուլ Գեդը և ուրիշներ։ Նրանք կրեցին Կ. Մարքսի ու Ֆ. Էնգելսի՝ որպես մեծ տեսաբանների և տաղանդավոր հոետորների, բարերար ավզեցությունը, շարունակեցին նրանց գործը և իրենց հերթին օրինակ դարձան հոետորների նորանոր սերունդների համար։

Նրանց ելույթներն ու ձառերն աչքի էին ընկնում սահուն լեզվով, խոր բովանդակությամբ և զգացմունքներով։

Ռուսաստանում հոետորական արվեստը ծնունդ է առնում XVII դարի սկզբներին։ Այդ ժամանակներին են վերաբերում «Հոետորիկա» առաջին ռուսական դասագրքերը։

Ռուսաստանում հոետորության կարգացումը խոշոր չափով կապված է մեծ գիտնական Մ. Վ. Լոմոնոսովի անվան հետ։ Նրա գրչին է պատկանում «Краткое руководство к краснор-

речию» (1748) աշխատությունը, որը մեծապես նպաստեց ռուսական հոետորական արվեստի հետագա առաջընթացին։

Հոետորական խոսքի մեծ վարպետներ եղան ռուս հեղափոխական դեմոկրատներ Գերցենը, Բելինսկին, Չերնիշևսկին, Դոբրոլյուբովը։

Նշանավոր հոետոր էր ռուս պատմաբան, Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր Տ. Ն. Գրանովսկին, որին կոչել են ձարտասանության Պուշկին։

XIX դարի երկրորդ կեսին Ռուսաստանում կարգանում է նաև դատական ձարտասանությունը (Ա. Ֆ. Կոնի, Ֆ. Ն. Պլևակո և ուրիշներ)։

XIX դարի վերջին քառորդը և XX դարի սկիզբը բնութագրվում են Ռուսաստանում դասակարգային հսկայական տեղաշարժերով։ Զաղաքական պայքարի ասպարեզ է դուրս գալիս բանվոր դասակարգը։ Այդ պայմաններում հոետորի կենդանի խոսքը հսկայական նշանակություն է ստանում։ Եվ ահա ծնունդ է առնում նոր, պրոլետարական, հեղափոխական պերձախոսությունը, որը պարզ ու հասկանալի ձևով մասսաներին է հասցնում ճշմարտության խոսքը, նրանց պայքարի հանում հանուն իրենց իրավունքների։

Պրոլետարական հեղափոխությունը ծնում է բոլշևիկ հոետորների մի փայլուն համաստեղություն։

Ռուսաստանում մարքսիստական գաղափարների տարածման գործում իր տեսական-պրոպա-

գանդիստական փայլուն ճառերով աչքի ընկավ ականավոր հոետոր Գ. Վ. Պլեխանովը:

Հեղափոխության հոետորների դրոշակակիրը, դարի մեծ հոետորը Վ. Ի. Լենինն էր:

Լենինը եղավ հոետորական արվեստի նոր դպրոցի, ժողովրդական տրիբունի դպրոցի ստեղծողը: Մտածված պլան, բովանդակության խիստ գիտականություն, ձևի պարզություն ու մատչելիություն, ձևակերպումների հստակություն, խոր համովածություն՝ այդպիսին են Լենինյան հոետորական դպրոցի հիմնական գծերը:

Լենին-հոետորն աչքի էր ընկնում իր մարտաշունչ կուսակցականությամբ, մարքսիստական աշխարհայացքի անաղարտությունն անձնվիրաբար պաշտպանելու մշտական պատրաստակամությամբ ու հմտությամբ: Լենինի՝ որպես հոետորի, պրոպագանդիստի և ագիտատորի աշխատանքի ոճը, նրա ելույթները, դասախոսությունները, հոդվածներն ու ճառերը խոսքի վարպետությամբ, հրապարակախոսության անգերազանցելի օրինակ են:

Ահա թե ինչ է վերհիշում կոմունիստական կուսակցության և սովետական պետության ականավոր գործիչ Ե. Դ. Ստասովան. «Վլադիմիր Իլյիչն արտաքուստ շատ հասարակ էր խոսում: Նա սովորաբար հետ ու առաջ էր քայլում, երբեմն բթամատերը մտցնում էր բաձկոնակի թևքատակերը, երբեմն պարզած ցուցամատով առաջ էր նետում աջ ձեռքը: Հետագայում, լսե-

լով Պլեխանովին, ես նրան ակամա համեմատում էի Վլադիմիր Իլյիչի հետ: Պլեխանովը փայլուն հոետոր էր, խոսում էր գեղեցիկ, ձայնի ցածրացումով և բարձրացումով, բազմաթիվ ժեստերով, արտիստի նման, բայց նա չունեւ տրամաբանության Լենինյան ուժը, համոզելու ուժը» (Ленин—мастер революционной пропаганды, Госполитиздат, М., 1965, стр. 44):

«...Լենինն ավելին էր, քան հոետորը,— գրել է Լենինի ժամանակակից, կուսակցության հին անդամ Ի. Ֆ. Պոպովը,— նա լիովին իշխում էր ձեր մտքերին, գտնում դրանք, ըմբռնում հենց դրանց ծագման պահին» (նույն տեղը, էջ 73):

Ժողովրդի ծոցից դուրս եկան այնպիսի բանվոր-հոետորներ, ինչպիսին են Պ. Ա. Ալեքսեևը, Ս. Ն. Խալտուրինը, Ի. Վ. Բաբուշկինը, որոնց ելույթները բոլշևիկյան կրթոտության, կոմունիստական համովածության, ամեն կարգի շահագործման և ճնշման նկատմամբ ատելության փայլուն վկայություններ են եղել. ժողովրդին ոտքի հանել հանուն լուսավոր ապագայի, հանուն լավ կյանքի:

Հասարակությանը, նրա վարգացման վանապան փուլերում, միշտ անհրաժեշտ են եղել վառ անհատականություններ, կրակոտ հոետորներ, որոնք լավագույն ձևով դրսևորել և պաշտպանել են առաջադիմական գաղափարները: Այսպես, Հոկտեմբերյան հեղափոխությանը նախորդած տարիներին և հեղափոխությունից հետո իրենց հոետորական տաղանդը դրսևորեցին Յա. Մ.

Սվերդլովը, Ֆ. Է. Ջերժինսկին, Ս. Գ. Շահոև-
յանը, Ս. Մ. Կիրովը, Վ. Վ. Կուլբիշևը, Գ. Կ.
Օրջոնիկիձեն, Մ. Ի. Կալինինը, Ա. Վ. Լուևա-
չարսկին և ուրիշներ:

Լենինյան տիպի այդ հոետորների բոցաշունչ
ճառերն ու կրքոտ ելույթները ժողովրդին կոչում
էին ընդդեմ հին կարգերի, հանուն նոր կյանքի,
մարքսիզմի ուսմունքը պաշտպանում էին ամեն
տեսակ թշնամական ոտնձգություններից և հար-
ձակումներից:



Հայաստանում հոետորական արվեստի պատ-
մության լուսաբանումը հատուկ ուսումնասիրու-
թյան քնագավառ է: Բավարարվենք միայն ասե-
լով հետևյալը:

Հայաստանում հոետորական արվեստը մուտք
է գործել շատ վաղուց՝ մ. թ. ա. առաջին դա-
թում, Տիգրան II-ի ժամանակներում: Այդ մասին
են վկայում դեռևս հեթանոսական ժամանակնե-
րից մեկ հասած մեր ժողովրդական վեպերն ու
առասպելները, ավելի ուշ մեր բանահյուսական
գլուխգործոց «Սասունցի Դավիթ» դյուցազնա-
վեպը, մեր հարուստ մատենագրությունը, միջ-
նադարյան հայ նշանավոր պատմիչների երկե-
րը, Նարեկացու «Մատյանը»:

Ճարտասանության տարածմանը նպաստե-
ցին քրիստոնեության մուտքը Հայաստան և հա-
յոց այբուբենի հայտնագործությունը Մեսրոպ

Մաշտոցի կողմից: Ինքը՝ Մաշտոցը, ապա և
Սոմսես Խորենացին, Եղիշեն, Ղապար Փարպեցին,
Եզնիկ Կողբացին եղել են խոսքի իսկական վար-
պետներ:

Հոետորական արվեստի տարածման և վար-
գացման մասին է խոսում այն փաստը, որ Սա-
հակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի ջանքերով
ստեղծված առաջին հայկական դպրոցներում
հոետորական արվեստը եղել է դասավանդվող
առարկաներից մեկը:

Հոետորական արվեստի տեսությունը Հա-
յաստանում սկզբնավորվել է թարգմանություն-
ներով: Հայտնի է, որ Մխիթարյան միաբանները
ժամանակին թարգմանել են Ցիցերոնի ճառերը:

Հայ մտավորականները հնում մեծ հետաքրք-
րություն են հանդես բերել հոետորական
խոսքի նկատմամբ, գրել քերականագիտական և
ճարտասանական աշխատություններ:

ՀՌԵՏՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Որոշ մարդկանց մոտ արմատացել է այն
կարծիքը, թե հոետորական ոճն արհեստական է,
շինծու, վերամբարձ: Հոետոր ասելով պատկե-
րացնում են մի մարդու, որն ընկնում է խոսքի
«արտաքին գեղեցկության», ֆրազների հետևից,
մոռանալով բովանդակությունը:

Դա թյուրիմացություն է, ցավալի թյուրիմա-
ցություն:

Իհարկե, կան այնպիսիները, որոնք, հանուն գեղեցիկ ֆրակի, կոհում են խոսքի իմաստը, տուրք են տալիս ոչ բնական, արհեստական ոգևորության և խանդավառության:

Կան: Սակայն խոսքն իսկական հոետորության, իսկական պերճախոսության մասին է, այն պերճախոսության, որը գերում է իր բովանդակությամբ, պարզությամբ և հակիրճությամբ, հասանելի է և հասկանալի, պատկերավոր և ներգործուն, բոցավառ և ներշնչող, ուղիներ է գրտնում դեպի յուրաքանչյուր ունկնդրի սիրտը, նրա մեջ նպատակին հասնելու ձգտում առաջացնում:

Հոետորական արվեստը տվյալ ժողովրդի հոգևոր կյանքի մի մասն է: «Հնում և նորագույն ժամանակներում,— նկատել է Ա. Պ. Չեխովը,— ճարտասանությունը հանդիսացել է կուլտուրայի ուժեղագույն լծակներից մեկը... բոլոր լավագույն պետական մարդիկ, լավագույն փիլիսոփաները, բանաստեղծներն ու բարեփոխիչները միաժամանակ եղել են լավագույն հոետորներ» (Чехов А. П., Соч., т. VIII, стр. 499):

Հոետորական արվեստը սովետական մարդկանց գիտական-մատերիալիստական աշխարհայացքի ձևավորման գործոն է: Այն կոչված է նպատակելու մարքսիստական-լենինյան տեսության պրոպագանդանը, աշխատավորներին գաղափարայնության, քաղաքացիական պարտքի և պատասխանատվության, բարոյական անաղարտության, հայրենասիրության և ինտերնացիոնալիզմի ոգով դաստիարակմանը, ՍՄԿԿ ներքին

և արտաքին քաղաքականության խոր և բավականորմանի պրոպագանդանը:

Ավելի կոնկրետ՝

Հոետորությունը ուսմունք է գեղեցիկ և ազդու խոսելու կանոնների մասին. արվեստ է, որը հետապնդում է բավամարդ լսարանին համոզելու կամ ներշնչելու նպատակ, խոսքի ուժով մասսաների վրա ներգործելու, հանուն որոշ գաղափարների նրանց մոբիլիզացնելու հզոր վենք է, քաղաքական պայքարի կարևորագույն գործիք:

Գաղափարախոսական աշխատանքում մասսայական ինֆորմացիայի միջոցների՝ մամուլի, հեռուստատեսության, ռադիոյի հետ մեկտեղ շատ կարևոր դեր է պատկանում կենդանի խոսքին՝ քաղաքական պրոպագանդայի և ագիտացիայի բանավոր խոսքին: Այն եղել և մնում է մեր կուսակցության գործունեության կարևոր ոլորտ՝ մասսաների հետ մշտական կապի ամրապնդման, նրանց կուսակցության շուրջը համախմբելու ակտիվ ձև:

Պասախոսությունը, վեկուցումը, պրոպագանդիստի կամ ագիտատորի ելույթը, այդ ամենը հոետորական խոսքի տարատեսակ է՝ անմիջականորեն ուղղված լսարանին, ունկնդրին:

Հոետորական արվեստի շատ տեսակներ կան՝ քաղաքական, քաղաքական-պառլամենտական, դատական, գիտական-դասախոսական, ռավական, ներբողական, բեմական-գեղարվեստական, խրախճանքի, դամբանական: Այստեղ խոսքը

հիմնականում գնում է քաղաքական հոետորութ-
յան մասին: Քաղաքական հոետորական արվես-
տը միշտ կապված է եղել նրան ծնող միջավայ-
րի պայմանների հետ, այն բանի հետ, թե որ դա-
սարկարգի շահերին է նա ծառայում:

Եվ այսպես, ո՞րն է հոետորական արվեստի
նշանակությունը, որո՞նք են նրա խնդիրները:

...1942 թվականի խոր աշնանը, պատերազմի
թեժ օրերին, Երևանի պետական համալսարանի
պատմության դասախոս, պրոֆեսոր Վահան
Ռշտունին նամակ է ստանում ռազմաճակատում
գտնվող իր նախկին մի ուսանողից:

Ուսանողը գրում է. «Սիրելի իմ պրոֆեսոր.
գիշեր է, նստած եմ բլինդաժում. սպասում եմ.
շուտով մարտի ենք գնալու. ի՞նչ կլինի ինձ հետ՝
չգիտեմ: Եվ ահա որոշեցի գրել Ձեզ, գրել և
խոստովանել, որ այսօր էլ, շատ տարիներ անց,
իմ մեջ վառ ու անմոռանալի հուշեր են մնացել
Ձեր դասախոսությունների մասին: Հավատացե՞ք,
պրոֆեսոր, այդ հուշերն ինձ ոգեշնչել են կա-
մավոր ռազմաճակատ գնալ, կռվել և, եթե հարկ
լինի, կյանքս անգամ չխնայել հայրենիքի փրո-
կության և ազատության համար»:

Այս ոչ եզակի փաստը ցույց է տալիս, թե
ինչպես դասախոսի ամբիոնից հնչած խոսքը եր-
կար տարիներ պահպանում է իր դաստիարակ-
չական ազդեցությունը և նույնիսկ ծանր փոր-
ձությունների ժամանակ կարող է ոգեշնչել հայ-
րենասիրական սխրանքների:

Խոսք... «Խոսքի ուժն անսահման է: Հաջող
բառը հաճախ բավական է եղել կանգնեցնելու
փախուստի մատնված զորքին, պարտությունը
վերածելու հաղթանակի, փրկելու երկիրը» (Է.
Փիրարդեն):

Լավ է ասել ռուս բանաստեղծը՝

Խոսքով կարելի է սպանել,
Խոսքով կարելի է փրկել,
Խոսքով իր հետևից
Գնդեր տանել:

Ամեն մեկն իր անձնական փորձից գիտի, թե
ինչպիսի դրական ազդեցություն կարող է ունե-
նալ մարդուն ասված մխիթարական և հուսա-
դրող խոսքը և, ընդհակառակը, ինչպիսի սպա-
նիչ ազդեցություն կարող է գործել սառնաշունչ
խոսքը:

Խոսքով կարելի է մարդուն վեր բարձրացնել
և ցած նետել, ամոքել և խոցել, ոգևորել և թևա-
թափ անել, ներել և պատժել:

Վերջապես, ինչպես հայկական առածն է
ասում. «Խոսք կա՝ բան կշինի, խոսք կա՝ բան
կբանդի»:

Ահա թե ինչու՞մն է խոսքի ուժը, հոետորա-
կան արվեստի ուժը:

Խոսքը հոետորի հիմնական պենքն է, նրա
մտավոր և բարոյական վարճացման ամենազգոն
ցուցանիշը, ընդհանուր կուլտուրայի լավագույն
ցուցանիշը:

Խոսքի պարզ ու հստակ արտասանությունը ոչ միայն քաղաքական հոռետորների՝ դասախոսների, մեկնաբանների, պրոպագանդիստների, ագիտատորների, այլև դերասանների, մանկավարժների, ասմունքողների, հաղորդավարների մեծագույն արժանիքն է, ունկնդրին գրավելու և գերելու կարևոր պայմանը:

Լև Տոլստոյի արտահայտությամբ՝ «Խոսքը մտքի արտահայտությունն է... Ուստի պետք է համապատասխանի այն բանին, ինչ արտահայտում է»: Խոսքն արտացոլում է միտքը:

Խոսքի ուժով հոռետորը կոչված է ներգործելու սովետական մարդու մտքի, կամքի, զգացմունքի, հոգեբանության վրա, այն հաշվով, որ հասարակության ամեն մի անդամ կոմունիստի կառուցումը համարի իր սրբապան, իր հարապատ գործը, նրան տա իր սրտի կրակը, տաղանդի ամբողջ ուժը:

Մեր հասարակության տնտեսական, սոցիալական և հոգևոր կյանքում կատարված արմատական փոփոխությունների հիման վրա կազմավորվեց մարդկանց պատմական նոր ընդհանրություն՝ սովետական ժողովուրդը: Մեր երկրի անցած ուղու կարևորագույն արդյունք է սովետական մարդը, որի կոմունիստական աշխարհայացքի ձևավորման գործում մեծ դեր է պատկանում հոռետորական արվեստին: Ներկայումս մեր երկրում կարդացվող դասախոսությունների քանակը մոտենում է աստղաբաշխական թվի: Ամեն օր կարդացվում է ավելի քան 60 հազար

դասախոսություն, տարեկան 22 միլիոն: Ունկընդիրների թիվը հասնում է մեկ միլիարդի:

Հոռետորությունը բարձր են գնահատել բոլոր ժամանակների առաջադեմ մարդիկ, ընդգծել մասսաների վրա կենդանի խոսքով ներգործելու նրա դերն ու նշանակությունը:

1905 թվականին Ժնևից ականավոր բուլշևիկ հոռետոր Ա. Վ. Լունաչարսկուն ուղարկած մի նամակում Լենինը գրում է. «Նրանց ժողովներում պակասում են հոռետորները: Չկա մեկը, որ ոգեշնչի... Եվ ամբողջ գործը տուժում է... Անձնական ներգործությունը և ժողովներում ունեցած ելույթը չափապանց շատ բան են նշանակում քաղաքականության մեջ: Առանց դրանց չկա քաղաքական գործունեություն» (Լենին Վ. Ի., ԵԼԺ, հ. 47, էջ 65—66):

Մեր կուսակցության ամբողջ պատմությունը ցույց է տալիս, թե ինչպես մարտական, սուր, ճշմարտացի խոսքը միջոտ էլ եղել է մեծ ուժ, որն օգնել է նրան՝ ժողովրդին ոտքի հանելու գեղեցիկ ապագայի համար, սոցիալիստական հասարակարգի ստեղծման համար:

«Ցարիպմի դեմ մղված պայքարի շրջանում,— ասում է եմ. Ցարոսլավսկին,— քանի՛, քանի՛ անգամ է պատահել, որ բուլշևիկ ագիտատորի խոսքը բանվորների ժողովում ցաք ու ցրիվ է արել գործադուլի, ցույցի անհրաժեշտության վերաբերյալ ամեն տեսակ տարակուսանքներ: Մի անգամ չէ, որ ագիտատորի խոսքը ցրել է հետամնացների տատանումները, բուլշևիկյան փոք-

րաթիվ ավանգարդի շուրջը համախմբելով առաջ է տարել նրանց: Քանի՛, քանի՛ անգամ է եղել, երբ բանվորների ու գյուղացիների դեմ ուղղված ցարական պինվորների սվինները ցած են իջեցվել, հենց որ պինվորներին է դիմել կուսակցական ազիտատորը կրթոտ խոսքով»:

1917 թվականին, պատմության դժվարին, շրջադարձային պահին, երբ վճռվում էր հեղափոխության բախտը, բոլշևիկյան խոսքը վճռական դեր խաղաց աշխատավորական լայն մասսաներին կուսակցության շուրջը համախմբելու և հակահեղափոխական կուսակցությունների էությունը մերկացնելու համար:

Քաղաքացիական պատերազմի շրջանում բոլշևիկ ազիտատորի խոսքը հնչում էր որպես ահապանգ և մարտի կոչում: Մարդիկ սոված էին, մերկ ու ոտաբոբիկ, բայց ոգևորությամբ, գիտակցությամբ էին լսում ազիտատորի յուրաքանչյուր բառը և մարտի նետվում:

Ազիտատորի, պրոպագանդիստի կենդանի, մարտական խոսքը հսկայական դեր խաղաց հիտլերյան վավթիչների ջախջախման գործում: Պատերազմի ահեղ տարիներին սովետական հոետորական արվեստը մամուլի և ռադիոյի հետ միասին հաջողությամբ մերկացնում էր գերմանական ֆաշիզմի ավազակային, թալանչիական էությունը, դաստիարակում էր ատելության պգացում ստրկացնողների և ճնշողների նկատմամբ, կուսակցության բոցաշունչ խոսքը հասցնում էր յուրաքանչյուր սովետական մարդու մտքին ու

սրտին, ժողովրդին պայքարի կոչում ընդդեմ ֆաշիստական վավթիչների, հանուն հաղթանակի: Պրոպագանդիստի և ազիտատորի խոսքը պինվորներին օգնում էր խորապես ըմբռնելու մարտական խնդիրները, պարտքն ու պատասխանատվությունը հայրենիքի բախտի և ճակատագրի համար. կենդանի խոսքը հնչում էր մարտերի ընդմիջումներին, մարտի նախապատրաստման, բուն մարտի ժամանակ՝ մղելով անօրինակ սխրագործությունների: Ինչպես այդ օրերին ընդգծել է «Պրավդան», Կարմիր բանակը պինված էր ոչ միայն տանկերով, ինքաթիռներով, ավտոմատներով, այլև բոլշևիկյան հոետորի խոսքով:

Այո՛, լիակատար համոզմունքով կարելի է ասել, որ Հայրենական պատերազմում հաղթեցին ոչ միայն մեր հզոր զենքը, սովետական մարդկանց հայրենասիրությունը, անկոտրում կամքն ու անսասան հավատը, այլև բոլշևիկյան բոցաշունչ խոսքը, կուսակցության մարտական կոչերն ու լուզունգները:

Հետպատերազմյան տարիներին հոետորական արվեստը դարձավ պատերազմի հետևանքով երկրի ավերված ժողովրդական տնտեսության վերականգնման համար աշխատավորների ուժերը մոբիլիզացնելու, կոմունիստական շինարարության պլաններն իրականացնելու կարևոր միջոց: Այդ տարիներին ստեղծվեց «Գիտելիք» համամիութենական ընկերությունը, որն սկսեց լայն աշխատանք ծավալել գիտելիքների տա-

րածման և դասախոսական պրոպագանդայի պարզացման գործում:

Հետագայում 50—60-ական թվականներին, մեծ ուշադրություն նվիրվեց սովետական հոե-տորական արվեստի, խոսքի կուլտուրայի պրոբ-լեմների ուսումնասիրության պարզացմանը: Յո-թանասուն-ութսունական թվականներին բանա-վոր խոսքի դերը մեր կյանքի բոլոր ասպարեզ-ներում նկատելիորեն աճեց: Այդ տարիներին ՍՄԿԿ Կենտկոմը, ելնելով կուսակցության XXV և XXVI համագումարների ցուցումներից, ընդու-նեց մի շարք որոշումներ դաստիարակությանը կոմպլեքսային մոտեցման, կուսակցական ուսուց-ման, ինֆորմացիայի մասսայական միջոցների և պրոպագանդայի ղեկավարման, բանավոր քա-ղաքական ազիտացիայի դերի բարձրացման, դա-սախոսական պրոպագանդայի հետագա բարե-լավման միջոցառումների, աշխատավորների տնտեսագիտական կրթության դերի ուժեղացման, ճաղափարախոսական, քաղաքական-դաստիա-րակչական աշխատանքի հետագա բարելավման մասին, որոնք խոշոր չափով նպաստեցին հոե-տորական արվեստի գիտական մակարդակի բարձրացմանը, գաղափարախոսական կադրերի վարպետության աճին:

Սոցիալիզմի պայմաններում դասախոսի, պրոպագանդիստի, ազիտատորի կենդանի խոսքը կոմունիստական դաստիարակության, կուսակցության վիթխարի պլանների կա-տարման համար աշխատավորների մոբիլիզաց-

ման, մասսաների մեջ գիտական գիտելիքների տարածման, գաղափարական հակառակորդների դեմ պայքարի արդյունավետ միջոց է, հպոր-վենք:

Դասախոսի, պրոպագանդիստի, ազիտատորի շուրթերից հնչող կուսակցության հաստատական խոսքը՝ հոետորական խոսքը, հատկապես մեծ նշանակություն է ստանում մեր օրերում, երբ լուծվում են կուսակցության և ժողովրդի առջև դրված մեծ ու մասշտաբային խնդիրներ:

Ի՞նչ խնդիրներ են դրանք:

Երկրի սոցիալ-տնտեսական վարզացման արագացում, հասարակական կյանքի բոլոր կող-մերի կատարելագործում, արտադրության նյու-թատեխնիկական բազայի վերափոխում, ամենից առաջ՝ տնտեսական հարաբերությունների հա-մակարգի կատարելագործում, նոր մարդու վար-զացում, նրա կյանքի ու աշխատանքի նյութական պայմանների, հոգևոր կերպարի որակական բա-րելավում, խնդիրներ, որոնց իրականացմանն էլ նպատակամղված է սովետական հոետորի աշխա-տանքը, մեր ամբողջ գաղափարախոսական աշ-խատանքը:

Դասախոսի, պրոպագանդիստի, ազիտատորի խոսքը, որքան էլ որ այն հարուստ լինի իր բու-վանդակությամբ, միայն այն ժամանակ կկա-ռարի իր մոբիլիզացնող և դաստիարակչական-իչը, երբ հազեցված լինի կյանքի խոր իմացու-թյամբ, երբ նրանում ներդրված լինի խոսողի ամբողջ ուժը, նրա վարպետությունը:

Խոսքն այն մասին է, որ հռետորը չի կարող և չպետք է առևտուր անի իր պերճախոսությամբ: Նրանից պահանջվում է ոչ միայն գեղեցիկ, այլև սրտից բխող, սրտի մեջ թափանցող խոսք:

Ահա թե ինչ է ասել ռուս հրապարակախոս Ն. Վ. Ծելզունովը. «Խոսքը միայն այն ժամանակ է հասնում նպատակին, երբ յուրաքանչյուր բանի հետևում պահպանվում է այն ուժը, այն հոգեկան վիճակը, որից առաջացել է այդ խոսքը»:

Հռետորի ելույթը պետք է աչքի ընկնի սոցիալական սրատեսությամբ, թեմայի հիմնական մշակմամբ, պրոֆեսիոնալ վարպետությամբ: Այնտեղ տեղ չպետք է գտնեն ձուռոմ դատարկախոսությունը, ընդհանուր դատողություններն ու վերացական լուրջները, ավելորդ խրատականությունը:

Խոսքի ներգործության ուժը, նշանակությունը մեծանում է, երբ միացվում է երկրի առջև ծառայած քաղաքական, տնտեսական ու սոցիալական խնդիրներին: Միայն այդ դեպքում հնարավոր է արմատախիլ անել խրատականությունը, կենդանի շնչով տոգորել կոչերն ու լուրջները:

Հռետորը միշտ պետք է նկատի ունենա կուսակցության ծրագրային դրույթն այն մասին, որ գաղափարադաստիարակչական և պրոպագանդիստական աշխատանքում անհրաժեշտ է վըճռականորեն արմատախիլ անել հանդիսամուլության, դատարկախոսության, ֆորմալիզմի դժուրսերունդները: Նկատի ունենա և իր աշխատանքի

ձևերն ու միջոցները նպատակամղի երկրի առջև կանգնած խնդիրների կատարման համար մասսաների մոբիլիզացմանը: Պահանջվում է գիտական, իրատեսական մոտեցում ցուցաբերել մեր հասարակական կյանքի լուսաբանման, ինչպես հաջողությունների, այնպես էլ բացասական երևույթների ցուցադրման նկատմամբ:

Կուսակցությունը ձգտում է, որ մեր գործերում ավելի շատ հրապարակայնություն լինի հասարակության կյանքի բոլոր ոլորտների մասին, այնպես որ մարդիկ իմանան և լավը, և վատը, որպեսզի լավը բավմապատկեն, իսկ վատի դեմ անհաշտ պայքար մղեն:

Ունկնդիրն իրավունք ունի դասախոսություններից ակնկալել ցայտուն նյութեր մեր ժամանակի անձնվեր աշխատողների մասին. բանվորի, որը պողպատ է ձուլում, քարածուխ ու մոլիբդեն արտադրում, հողագործի, որը հացահատիկ է աճեցնում և բամբակ հավաքում, անասնապահի, որը կաթ ու միս է տալիս երկրին, գիտնականի՝ քարացածության և հնամուլության դեմ պայքարող այդ անխոնջ մարտիկի մասին, մտավորականի, որ հարստացնում է մեր ժողովրդի հոգևոր աշխարհը: Բոլոր նրանց մասին, ովքեր կյանքի են կոչել նորացման և արարման իրենց եռանդը, իրենց աշխատանքային կենարար ուժը, կենսագործում են երկրի սոցիալ-տնտեսական վարճացման և արագացման բավակողմանի խնդիրները:

Հռետորական խոսքը պետք է ի սպաս դրվի էկոնոմիկայի ինտենսիվացմանը, աշխատանքի

արտադրողականության և սոցիալիստական մըր-
ցության արդյունավետության բարձրացմանը,
գիտատեխնիկական առաջադիմության արա-
գացմանը, ամենուրեք կարգուկանոնի, կապմա-
կերպվածության հաստատմանը, կարգապահու-
թյան ամրապնդմանը, աշխատանքի բոլոր տե-
ղամասերում կադրերի պատասխանատվության
բարձրացմանը:

Պետք է ելնել կուսակցության այսօրվա պա-
հանջներից, այն է՝ բոլոր ուժերն ու ռեզերվնե-
րը մոբիլիզացնել, որպեսզի ապահովվի վստահ
և դինամիկ սոցիալ-տնտեսական զարգացում,
արագացվեն մեր առաջընթացի տեմպերը:



Կուսակցությունը գաղափարախոսական աշ-
խատանքի արդյունավետության բարձրացման
գլխավոր ուղին տեսնում է այն բանում, որ այդ
բնագավառի աշխատողների ջանքերն ավելի մեծ
չափով կենտրոնացվեն հասարակական առաջա-
դիմության ժամանակակից փուլի՝ արագացման
պատմական փուլի առաջադրած արմատական
պրոբլեմների լուսաբանման և պարզաբանման
վրա:

Սովետական հոետորի ելույթների արդյունա-
վետությունը կախված է նրա վարպետության,
պրոֆեսիոնալ պատրաստվածության մակարդա-
կից: Պահանջվում է ելույթների հրապարակա-

խոսական կրթոտություն, մարտականություն և
սկզբունքայնություն:

Կուսակցությունն իր տեսական գործունեու-
թյունը համարում է սոցիալիստական և կոմու-
նիստական շինարարության կարևորագույն շար-
ժիչ ուժերից մեկը: Կուսակցությունը գտնում է,
որ վերակառուցման, արագացման, սովետական
հասարակության որակապես նոր վիճակի հաս-
նելու կուրսի իրագործումն աներևակայելի է
առանց գաղափարատեսական գործունեության
ակտիվացման:

Հասուն սոցիալիստական ենթադրում է ոչ միայն
հասարակական հարաբերությունների ամբողջ
սիստեմի զարգացման բարձր աստիճան, այլև
մարդկանց բարձր գիտակցություն: Սխալ կլի-
ներ կարծել, թե սովետական մարդկանց նյու-
թական պայմանների փոփոխումից անմիջապես
հետո ինքնաբերաբար փոխվում է նաև նրանց
գիտակցությունը: Մարքսիստական-լենինյան
հիմնավոր, կյանքի կողմից հաստատված կոն-
ցեպցիաներից մեկն այն հետևությունն է, թե
մասսաների գիտակցությունը, նրանց հոգեբա-
նությունը փոխվում են ավելի դանդաղ, քան
գոյության նյութական պայմանները:

Ահա թե ինչու կուսակցությունը ձգտում է
մարդու համակողմանի զարգացմանը, որը են-
թադրում է մարդկանց հարաձուլն նյութական և
հոգևոր պահանջմունքների ավելի ու ավելի լրիվ
բավարարում:

Այո՛, նպատակը համակողմանիորեն զարգա-
3 Հովհ. Բաղդասարյան 33

ցած, բառի բուն իմաստով Մարդ դաստիարակելըն է, նրանում ձեռներեցության, բարձր արտադրողականությանը և որակով աշխատելու կենսական պահանջների ձևավորումը:

Հիմա մենք, գրավոր, թե բանավոր, հաճախ ենք գործածում «մեզանում աճել է նոր մարդը» արդեն ստերեոտիպ դարձած ֆրազը: Եվ գործ ենք ածում դրական իմաստով: Բայց բոլո՞ր «նոր մարդիկ» են օժտված մարդկային բարձր առաքինություններով, բոլո՞րն են դաստիարակված, բոլո՞րն են, ինչպես ասում են, «կարգին մարդ»:

Դժբախտաբար, ոչ բոլորը:

Այլապես չէին լինի մեր հասարակության բուն էությանը խորթ և անհարիր այնպիսի երեվույթներ, ինչպիսիք են իրամոլությունը, մասնավոր սեփականատիրական միտումները, խուլիզանությունը, բյուրոկրատիզմը, մարդկանց նկատմամբ անհոգի, անտարբեր վերաբերմունքը: Չէին լինի գողերն ու հարբեցողները, կաշառակերներն ու անաշխատ եկամուտով ապրողները, որոնց դեմ անխնա պայքարի կոչ է անում կուսակցությունը: Իրավացի է ռուս դրամատուրգ Վիկտոր Ռուզովը, որը մեր ամենաանհետաձգելի գործերի մեջ դաստիարակության հարցերը դնում է առաջին տեղը: «Ոչ մի հրահանգ,— ասում է նա,— ոչ մի կարգադրություն, ոչ մի որոշում լրջորեն մեռյալ կետից չեն շարժի բոլոր անհետաձգելի գործերը, եթե մենք՝ համենայն դեպս մեզանից մեծ մասը, չլինենք «կարգին մարդիկ»»:

Մասսաների գիտակցության փոփոխությունը չի կարելի պատկերացնել առանց նրանց հետ կատարվող հետևողական, նպատակասլաց և նպատակամղված գաղափարախոսական աշխատանքի, առանց կոմպլեքսային մոտեցման դաստիարակության ամբողջ դրվածքի նկատմամբ:

Կուսակցությունը պահանջել և պահանջում է նյութական հնարավորությունների աճը մշտապես ուղեկցել մարդկանց գաղափարական և կուլտուրական մակարդակի բարձրացումով, նրանց մտավոր, հոգևոր և բարոյական ձեռքբերումներով:

Առանց բարձր գիտակցության մարդը չի կարող որոշել իր տեղն ու դերը կյանքում: Առանց մարքսիստական-լենինյան աշխարհայացքին տիրապետելու անհնար է մշակել կոմունիստական վերաբերմունք դեպի աշխատանքը, գիտակցական վերաբերմունք՝ դեպի հասարակական պարտքի կատարումը:

Սովետական հոետորի աշխատանքը նոր մարդու կոմունիստական աշխարհայացքի ձևավորման աշխատանքն է, դաստիարակչական աշխատանքն այն սերնդի, որին է վիճակված կառուցելու պայծառ ապագան:

ՍՄԿԿ Կենտկոմի 1985 թ. ապրիլյան պլենումում կրկին ընդգծվեց մամուլի, հեռուստատեսության, ռադիոյի դերն ու նշանակությունը որպես մասսաների կազմակերպման ու դաստիարակության, հասարակական կարծիքի ձևավորման ազդու միջոցների:

«Ինֆորմացիայի միջոցները,— նշվեց պլենումում,— կոչված են խորապես վերլուծելու իրադարձություններն ու երևույթները, բարձրացնելու լուրջ պրոբլեմներ և առաջարկելու դրանց լուծման ուղիներ, համուպելու իրենց բովանդակալիությանը, օպերատիվությանը, ինֆորմացիոն հագեցվածությանը»:

Հոետորական արվեստն ընդհանուր շատ բան ունի ժուռնալիստիկայի, ինֆորմացիայի մասսայական միջոցների հետ, շատ բանով առնչվում է նրանց: Ուստի Կենտկոմի այդ պահանջը հավասարապես վերաբերում է բանավոր պրոպագանդայի աշխատողներին՝ դասախոսին, պրոպագանդիստին, ագիտատորին, բոլոր նրանց, ովքեր լծված են ներկա սերնդի հոգևոր աշխարհի կերտմանը: Նրանք պարտավոր են հաշվի առնել, որ պատանիների ու աղջիկների ժամանակակից սերունդը չի անցել հեղափոխական պայքարի ու կոփման այն դպրոցը, որ անցել է ավագ սերունդը: Նա հնարավորություն չունի իր սեփական փորձով համեմատելու անցյալը ներկայի հետ, պատկերացնելու անցյալի և ներկայի հակադրություններն ու վրկանքները, որոնց վկաներն են եղել նախորդ սերունդները: Ներկա սերունդն անծանոթ է սոցիալիստական մեր մեծ տերության անցած ճանապարհի մեծագործություններին, որոնք վարմանք և հիացմունք են պատճառում:

Կարևորը, ուրեմն, մասսաների հետ հմտորեն աշխատելն է, նրանց գիտակցության, հոգեբա-

նության վրա ներգործելը, մարդկանց տրամադրությունը պայուն կերպով որսալը, հուպող հարցերին ժամանակին պատասխանելը, նրանց ակտիվությունը բարձրացնելը: Կարևոր է, որ յուրաքանչյուր աշխատավոր հասկանա, որ երկրի ժողովրդական տնտեսության պլանների կատարումը, նրա տնտեսական և պաշտպանական հպորության ամրապնդումը կախված է նաև իր աշխատանքային ներդրումից, հասկանա այն պարզ ճշմարտությունը, որ որքան մենք լավ աշխատենք, այնքան լավ կապրենք:

Սովետական հոետորի խոսքը պետք է տոգորված լինի պայծառ լավատեսությամբ, սոցիալիստական հասարակարգի անսպառ հնարավորությունների և առավելությունների, ժողովրդական ստեղծագործության անսպառ ակունքների նկատմամբ հավատով և համուպվածությամբ:

Հոետորի յուրաքանչյուր ելույթ պետք է լինի անկեղծ ու սրտաբաց խոսակցություն բանվորի, գյուղացու, մտավորականի հետ, կենդանի, փոխադարձ շփում կոմունիստների և անկուսակցականների, բոլոր աշխատավորների հետ:

Սովետական հոետորն իր առաջնահերթ խնդիրը պետք է համարի երիտասարդության շրջանում կատարվող աշխատանքը:

Երիտասարդությունը մեր հերթափոխն է, մեր վաղվա օրը, մեր ապագան: Ահա թե ինչու կուսակցությունն այնքան մեծ ուշադրություն է դարձնում նրա՝ ուժերով և ցանկություններով, ձգտումներով և հույսերով, սպասելիքներով ու

երազանքներով լի այդ սերնդի հոգևոր աշխարհի կերտմանը, նրանում սովետական մարդուն արժանավայել բնավորության գծերի պատվաստմանը, սերունդ, որի ուսերին առաջիկա տասնամյակներում կընկնի պատասխանատվություն մեր մեծ ու մասշտաբային գործերի համար, հասարակության բախտի և ճակատագրի համար: Կուսակցությունն ուզում է, որ երիտասարդ սերունդը սեփական վերաբերմունք մշակի կյանքի նկատմամբ, քննադատաբար գնահատի և վերլուծի իր գործերը, իր վարքագիծն ու արարքները, սովորի կյանքն ընկալել իր ամբողջ խորությամբ ու բարդությամբ, խորապես գիտակցի իր դերն ու պատասխանատվությունը երկրի, ժողովրդի հանդեպ, լիովին յուրացնի հայրերի ու մայրերի գաղափարական ու բարոյական հարուստությունը՝ ազնվորեն աշխատելու սովորությամբ, հայրենիքի նկատմամբ հպարտության զգացումը, նրա ծաղկմանն ու բարգավաճմանն անձնական աշխատանքով աջակցելու, նրա պաշտպանությունն ամրապնդելու ջերմ պատրաստակամությունը:

Երիտասարդների համար կարդացվող դասախոսությունները, զեկուցումներն ու վրույցները նրանցում պետք է ձևավորեն մարքսիստական-լենինյան աշխարհայացք, դասակարգային ինքնագիտակցություն, անհաշտ վերաբերմունք այն ամենի նկատմամբ, ինչը հակասում է մեր հասարակության սկզբունքներին, սոցիալական արդարության գաղափարներին, մշակեն օրգա-

նական պահանջ՝ տիրապետելու ժամանակակից գիտելիքներին, ներկայումս երկրում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական արմատական վերափոխումներին ակտիվ, ստեղծագործաբար մասնակցելու կոչ անեն:

Կոմունիստական գաղափարների պրոպագանդան պետք է օգնի երիտասարդ սերնդին ճիշտ հասկանալու հասարակական երևույթները, կոմունիստական բարոյականության սկզբունքները դարձնելու անձնական խոր համոզմունք: Այդ աշխատանքի հիմքում, ինչպես պահանջում է ՍՄԿԿ Կենտկոմը, անհրաժեշտ է դնել մեր կուսակցության և երկրի հերոսական պատմության ուսումնասիրությունը, անցյալի մարտական ավանդույթներով և այսօրվա հերոսապատումով, կոմունիստի հաղթանակի համար սովետական ժողովրդի անձնվեր պայքարի օրինակով դաստիարակելը բուրժուական գաղափարախոսության դրսևորումների, ապոլիտիկության, քաղթենիության նկատմամբ անհամբուստության ուսումնասիրություն պատվաստելը, կուսակցության ու ժողովրդի գործի հանդեպ անսասան հավատով տոգորվելը:

Երիտասարդությունը մնում է երիտասարդություն: Նրա հետ կատարվող աշխատանքն իր ձևերով ու մեթոդներով պետք է լինի բավմալան ու հետաքրքիր, կենդանի ու պատկերավոր: Երիտասարդության առջև հանդես եկող հետտորդ պարտավոր է հաշվի առնել նրա տարբեր խըմ-

բերի առանձնահատկությունները, կրթական մակարդակը, տեղյակությունը, հետաքրքրություններն ու հակումները:



Գաղափարախոսական բնագավառի աշխատողի՝ դասախոսի, պրոպագանդիստի, ագիտատորի համար գրավիչ է ու շնորհակալ սովետական հայրենասիրության թեման:

Ի՞նչ է հայրենասիրությունը:

Հայրենասիրությունը մարդու դարերով ու հազարամյակներով ամրապնդված առավել խոր պագսումն է, անհատնում սերը դեպի իր երկիրը, իր ժողովուրդը, նրա անցյալն ու ներկան, կուլտուրան և կենցաղը, նրա բարօրության համար ոչինչ չխնայելու կամքն ու պատրաստակամությունը:

Սովետական մարդկանց սերը դեպի մեր սոցիալիստական հայրենիքն առաջ է գալիս այն գիտակցությունից, որ մեր երկրում հաստատված է շահագործումից ու ճնշումից ազատ սոցիալական կարգ, այն ըմբռնումից, որ միայն սովետական իշխանությունը մեզ տվեց մարդու բուրքը իրավունքները և մեր բոլոր ուժերն ու հնարավորությունները լայնորեն դրսևորելու հնարավորություն:

Այս թեմայով ամբիոն բարձրացողն ինքը, ամենից առաջ, պետք է տոգորված լինի հայրենիքի նկատմամբ սիրո ջերմ, նվիրական պագսուն:

մով և դրանով վարակի ունկնդիրներին: Մեր երկրի անցած ուղին հարուստ է սովետական մարդկանց հայրենասիրության վառ օրինակներով, որոնք դաստիարակիչ մեծ նշանակություն ունեն:

Կանցնեն շատ տարիներ, կանցնեն տասնամյակներ, բայց երբեք չեն մոռացվի Կրասնոդոնի երիտզվարդիականների անմահ սխրանքը, Ալեքսանդր Մատրոսովի, Ջոյա Կոսմոդեմյանսկայայի, Դմիտրի Կարբիշևի, Մուսա-Ջալիլի, Ջահան Կարախանյանի, Հունան Ավետիսյանի և շատ շատերի արիությունն ու անձնպագսությունը, որոնց համար հայրենիքի ճակատագիրը թանկ էր իրենց սեփական ճակատագրից:

Քսան տարին բոլորած այսօրվա երիտասարդի հայրերն ու պապերը չէի՞ն, որ արյունահեղ պատերազմի տարիներին հանուն հայրենիքի, հանուն այսօրվա երջանիկ կյանքի այրվեցին տանկերում և ինքնաթիռներում, կրծքով փակեցին թշնամու հրակնատը: Այսօրվա երիտասարդի մայրերն ու տատիկները չէի՞ն, որ պատերազմի տարիներին օրական 16 ժամ անընդմեջ կանգնում էին դապգահների մոտ և ամեն ինչ անում հանուն ռազմաճակատի, հանուն հաղթանակի:

Եվ մեր շատ դասախոսներ ու պրոպագանդիստներ հմտորեն են օգտագործում սովետական մարդկանց հայրենասիրության, հարազատ ժողովրդի նկատմամբ պարտքի կատարման վառ դրվագները:

«Գիտելիք» ընկերության Լենինականի դասախոսներից մեկը մեր մեծ հաղթանակի 40-ամյակին նվիրված Վեկուցման մեջ, ի թիվս այլ օրինակների, բերեց նաև հետևյալ սրտառուչ օրինակը: Բելոռուսիայի Վյազմայի շրջանում պատանի հետախույզները գտնում են հրացանի մի պարկուճ, որում պահպանվել էր շարքային Ալեքսանդր Վինոգրադովի պատերազմի ահեղ օրերին գրված տոմսակը՝ թղթի կտորին հանձնված տողերը, որոնք անկարելի է կարդալ առանց խոր հուզմունքի: Տոմսակում ասված է. «Մեզ՝ տասներկուսիս ուղարկեցին Մինսկի խճուղի՝ փակելու տանկերի ճանապարհը: Մենք կայուն կերպով դիմադրում էինք: Բայց ահա մնացինք երեքով՝ Կոլյան, Վոլոդյան և ես՝ Ալեքսանդրս: Թշնամիներն առաջ էին խցկվում: Ընկավ մեզնից ևս մեկը՝ լիտվացի Վոլոդյան: Իսկ տանկերն, այնուամենայնիվ, շարունակում են առաջ շարժվել: Մենք երկուսով ենք, բայց պետք է դիմադրել, քանի դեռ բավականացնում է ոգին, և առաջ չենք թողնի մինչև մերոնց մոտենալը: Եվ ահա մնացի մենակ՝ գլխից ու ձեռքից վիրավորված: Հնարավոր է, որ ես էլ մեռնեմ: Ես Ֆրունզեից եմ, ռուս, ծնողներ չունեմ: Ցտեսություն, թանկագին բարեկամներ»...

«Մեջ բերված դրվագում,— շարունակում է դասախոսը,— սովետական մարդու հերոսությունը, անձնագործությունն ու հայրենիքի հանդեպ պարտքի կատարումը կողք կողքի են և վառ հաստատումը լենինյան այն մտքի, թե՛ ամեն մի

պատերազմում հաղթանակը վերջին հաշվով պայմանավորվում է այն մասսաների ոգու վիճակով, որոնք ռազմի դաշտում թափում են իրենց արյունը»:

Դասախոսի Վեկուցումն ավարտվում է հետևյալ խոսքերով. «Հայրենական մեծ պատերազմը մեր երկրի տնտեսական ու քաղաքական ուժերի ցուցադրումը չէր միայն, այն միաժամանակ սովետական մարդկանց վառ հայրենասիրության, բարոյական և հոգևոր կերպարի ցուցադրումն էր, որը և դարձավ գերմանական ֆաշիզմի դեմ մեր հաղթանակի գլխավոր գործոններից մեկը»:

Սովետական մարդկանց ներկա և զալիք սերունդների համար հայրենասիրության, հերոսության և անձնագործության վառ օրինակ է Չեռնոբիլի ատոմային կայանի վթարի վերացման ծանր ու դժվարին աշխատանքը, որին մեծագույն նվիրումով մասնակցում է սովետական ամբողջ ժողովուրդը:

Հռետորը միաժամանակ պետք է ասի, որ հայրնասիրությունը վերացական հասկացողությունն չէ: Ն. Ա. Նեկրասովի խոսքերով ասած, «Հայրենիքի նկատմամբ սերն ամենից առաջ նրա բարօրության և լուսավորության խոր, կրթոտ ու ոչ անարդյունք ցանկության մեջ է, նրա Կոհասեղանին իր կայքն ու կյանքը դնելու պատրաստակամության մեջ, այն ամեն լավի նկատմամբ ջերմ համակրանքի մեջ և ավնիվ պայրույթի մեջ՝ այն բանի դեմ, ինչը դանդա-

ղեցնում է դեպի կատարելություն տանող ուղին...»:

Հայրենասիրությունը պետք է դրսևորվի կոնկրետ աշխատանքով, խոսքի և գործի միասնությամբ: Այստեղից էլ աշխատանքի նկատմամբ կոմունիստական վերաբերմունքի դաստիարակությունը, «ով չաշխատի, նա չի ուտի» սկզբունքի պրակտիկ կենսագործումը, պայքարը լողերի, պորտաբուլծների դեմ, որոնք ուզում են ապրել հասարակության հաշվին՝ ոչ մի բան նրան չտալով:

Կյանքից վերցրած փաստերով և օրինակներով հարկավոր է ցույց տալ, որ սովետական մարդու բարոյական հատկությունները, հայրենասիրությունը, քաղաքական կուլտուրան դրսևորվում են հենց աշխատանքի, հանձնարարված գործի նկատմամբ, իր հասարակական պարտքի նկատմամբ ունեցած վերաբերմունքի մեջ, այնպես որ, աշխատանքի նկատմամբ, հասարակական պարտքի նկատմամբ ավնիվ վերաբերմունքը, կոմունիստական բարոյականության սկզբունքները դառնան յուրաքանչյուրի անձնական համոզմունքը, նրա ապրելակերպի և վարքագծի նորման, որ, ինչպես Վ. Ի. Լենինն էր հարցը դնում, գիտակից բանվորն իրեն պզա ոչ միայն որպես տեր իր գործարանում, այլև որպես երկրի ներկայացուցիչ և իր վրա պզա պատասխանատվություն նրա համար:

Հարկավոր է միաժամանակ ցույց տալ, որ հայրենասիրության դաստիարակությունն օր-

գանապես շաղկապված է ՍՍՀՄ ազգերի և ազգությունների եղբայրական դաշինքի, նրանց համատեղ աշխատանքի ու պայքարի, ազգային մշակույթների մերձեցման, փոխհատուցման, սովետական ժողովուրդների համախմբվածության ամրապնդման, նրանց սոցիալիստական ինտերնացիոնալիզմի ոգով դաստիարակության հետ, ազգային սահմանափակվածության, ազգային նիհիլիզմի, նացիոնալիզմի և շովինիզմի ամեն տեսակ դրսևորումների նկատմամբ անհաշտվողականության հետ: Միաժամանակ ասել, որ կուսակցությունը պահանջում է խնամքով վերաբերվել բոլոր ազգությունների մարդկանց պզացմունքներին և արժանապատվությունը:

Մենք ապրում ենք բազմապզ երկրում և կուսակցությունն ազգային հարցը դիտել, դիտում և լուծում է միայն լենինյան ազգային քաղաքականության դիրքերից, ինտերնացիոնալիստական դիրքերից:

Մասսայական ինֆորմացիայի և պրոպագանդայի միջոցների ղեկավարների հետ 1987 թ. փետրվարին ՍՄԿԿ Կենտկոմում տեղի ունեցած հանդիպման ժամանակ հնչեցին հստակ ու հաստատակամ խոսքեր. «Մենք կողմնակից ենք բոլոր ժողովուրդների թե՛ ազգային պզացմունքներին, թե՛ պատմության, թե՛ մշակույթի, թե՛ լեզվի նկատմամբ հարգալից վերաբերմունքի, կողմնակից ենք լիակատար և փաստական հավասարության»:

Միաժամանակ նշվեց, որ երբեմն այս կամ այն ժողովրդի ծագման արմատների ուսումնասիրությունը հանգեցնում է պատմության և նրա հետ կապված ամեն ինչի (և ոչ միայն առաջավորի) աստվածացման:

Գաղափարախոսական աշխատանքի խնդիրն է կյանք մտած նոր սերունդներին հետևողականորեն դաստիարակել ինտերնացիոնալիզմի ոգով, նրանց ժամանակակից պատկերացումներ տալ այն մասին, թե որտեղ են իրենք ապրում և ինչպես է հաստատվել մարդկության պատմության այնպիսի հավվագյուտ երևույթ, երբ հարյուրից ավելի ազգեր և ազգություններ ապրում են լավ և համերաշխ:



Կուսակցության գաղափարախոսական աշխատանքում կարևոր տեղ ունի գիտական աթեիզմի սկզբունքների պարզաբանումը, կրոնի հակագիտական էության բացահայտումը:

«Կրոնը ժողովրդի հաշիշն է» (Վ. Մարքս):

«...Ամեն մի կրոն ոչ այլ ինչ է, եթե ոչ այն արտաքին ուժերի ֆանտաստիկ արտացոլումը մարդկանց գլուխներում, որոնք իշխում են մարդկանց վրա նրանց առօրյա կյանքում, մի արտացոլում, որի մեջ երկրային ուժերը վերերկրային ձև են ստանում» (Ֆ. Էնգելս):

«Կրոնը հոգևոր ճնշման մի տեսակն է» (Վ. Ի. Լենին):

Կրոնի ուղեկիցը սնահավատությունն է. Ժան Ժակ Ռուսոյի բնորոշմամբ «...Մարդկային ցեղի ամենասարսափելի պատուհասներից մեկը»: Ոչ մի սկզբունքային տարբերություն չկա «հավատի» և «սնահավատության» միջև:

Լենինը կրոնի դեմ պայքարը համարում էր ամբողջ մատերիալիզմի և, հետևաբար, մարքսիզմի այբուբենը և պահանջում էր մասսաներին **մատերիալիստորեն** բացատրել հավատի և կրոնի աղբյուրը:

Ղեկավարվելով Լենինյան ցուցումներով, ինչպես ՍՄԿԿ Կենտկոմի 1983 թվականի հունիսյան պլենումը, այնպես էլ կուսակցության XXVII համագումարն անհրաժեշտ համարեցին ավելի ակտիվորեն պրոպագանդել գիտամատերիալիստական հայացքները բնակչության շրջանում, ավելի մեծ ուշադրություն դարձնել աթեիստական դաստիարակությանը:

Կուսակցությունը պահանջել և պահանջում է կրոնական նախապաշարմունքների և սնահավատության դեմ պայքարել արտակարգ զգուշությամբ և համբերությամբ:

Համոզիչ, կյանքից վերցված փաստերով ցույց տալով, որ կրոնը մասսաների հոգևոր ճնշման միջոց է, կրոնական բարոյականությունը հակասում է աշխատավորների դասակարգային շահերին, աններդաշնակ է մեր սոցիալիստական, կոմունիստական աշխարհայեցողությանը, դասախոսը, պրոպագանդիստը միաժամանակ աչ-

քի առաջ պետք է ունենան Վ. Ի. Լենինի հայտնի դրույթը. «Կրոնական նախապաշարմունքների դեմ պետք է պայքարել չափավանց՝ զգուշմեծ վնաս են պատճառում նրանք, ովքեր այդ պայքարի մեջ մտցնում են կրոնական պագմունքի վիրավորանք: Պետք է պայքարել պրոպագանդայի միջոցով, լուսավորման միջոցով» (Լենին Վ. Ի., ԵԼԺ, հ. 37, էջ 225):

«Կուսակցությունը, — կարդում ենք ՍՄԿԿ ծրագրում, — գաղափարական ներգործության միջոցներն օգտագործում է գիտամատերիալիստական աշխարհընկալման լայն տարածման համար, կրոնական նախապաշարմունքների հաղթահարման համար, թույլ չտալով հավատացյալների պզգամունքների վիրավորում»:

Կուսակցությունը հանդես գալով խղճի ակառության սահմանադրական երաշխիքների անշեղ կատարման օգտին, միաժամանակ դատապարտում է կրոնի ի վնաս հասարակության և անհատի շահերի օգտագործելու փորձերը:

Կրոնի դեմ պայքարի հուսալի պենքը գիտելիքն է: Եվ դասախոսը, պրոպագանդիստը, ագիտատորը բնակչության, մասնավորապես երիտասարդության մեջ գիտական աթեիզմի սկզբունքների արմատավորմանը պետք է հասնեն ամենից առաջ կրոնի ծագումը, պարզացումը, դրանց պատմական պայմանները գիտականորեն բացատրելու և պարզաբանելու, բնության և հասարակության ուժերի նկատմամբ մարդկանց իշ-

խանության գնալով աճող ապրեցությունը հըմտորեն ցույց տալու միջոցով:

Դասախոսը և պրոպագանդիստը պետք է ելնեն նաև կուսակցության ծրագրային այն դրույթից, թե աթեիստական դաստիարակության կարևոր բաղկացուցիչ մասը մարդկանց աշխատանքային և հասարակական ակտիվության բարձրացումն է, նրանց լուսավորումը, սովետական նոր ծեսերի և սովորույթների լայն տարածումը:

Դասախոսական, պրոպագանդիստական աշխատանքի ևս մի կարևոր բնագավառ: Կուսակցությունը գտնում է, որ սոցիալ-տնտեսական վարձագցման արագացումը, հասարակական կյանքի բոլոր կողմերի դեմոկրատացումը, մասսաների ստեղծագործական ակտիվության բարձրացումն անբաժանելի է սոցիալիստական օրինականության և իրավակարգի ամրապնդումից, սովետական քաղաքացիների սահմանադրական իրավունքների և օրինական շահերի հուսալի պահպանության ապահովումից, սոցիալական արդարության սկզբունքների խստիվ կիրառումից:

ՍՄԿԿ Կենտկոմը պահանջել և պահանջում է անդուլ ուշադրություն նվիրել աշխատավորների իրավական դաստիարակությանը, նրանց մեջ ձևավորել իրավունքների և պարտականությունների միասնության խոր ըմբռնում, բարձր քաղաքացիականություն, սովետական օրենքների և սոցիալիստական համակեցության կանոնների նկատմամբ հարգանք, սոցիալիստական օրինա-

կանության ամեն տեսակ խախտումների նկատմամբ անհաշտ վերաբերմունք:

Այդ խնդիրների իրականացմանն է ուղղված ՍՄԿԿ կենտրոնական կոմիտեի 1986 թ. նոյեմբերի որոշումը՝ «Սոցիալիստական օրինականության և իրավակարգի հետագա ամրապնդման, քաղաքացիների իրավունքների և օրինական շահերի պահպանության ուժեղացման մասին»:

Դասախոսները, պրոպագանդիստները, ազիտատորները կոչված են իրենց ելույթներով մարդկանց մեջ խոր հարգանք դաստիարակելու օրենքի հանդեպ, կոնկրետ, կենդանի փաստերով և կյանքից վերցված վառ օրինակներով ցույց տալու և համոզելու, որ օրենսդրական պահանջների անշեղ կիրառումը համապատասխանում է ինչպես ամբողջ հասարակության, այնպես էլ յուրաքանչյուր սովետական մարդու շահերին, հանդիսանում է մեր իրավակարգի, մեր քաղաքացիների իրավունքների անսասանության վճռական գործոն: Նրանց պարտքն է լուսաբանել, պրոպագանդել և տարածել սոցիալիստական օրինականության և իրավակարգի ամրապնդման ուղղությամբ կուսակցական, սովետական, իրավապահական մարմինների աշխատանքի դրական փորձը:



Ներկայումս գաղափարախոսական աշխատանքի էական առանձնահատկությունը նրանում

է, որ այն կատարվում է սոցիալիստական ու բուրժուական գաղափարախոսությունների սուր հակամարտության պայմաններում:

Եթե 40—50-ական թվականներին հակակոմունիստները հույսը դնում էր վենքի ուժով սոցիալիստական համագործակցության երկրների սոցիալ-քաղաքական սիստեմը փոխելու վրա, իսկ «հոգեբանական պատերազմին» օժանդակ դեր էր հատկացնում, ապա ներկայումս «հոգեբանական պատերազմը», սոցիալիստական երկրների ժողովուրդների գաղափարական վինաթափումը հակակոմունիստի պայքարի գլխավոր ուղղությունն են: Ընթացքի մեջ է սովետական կամ կոմունիստական «սպառնալիքի» առասպելը, որը կոչված է արդարացնելու սպառնալիստությունների մրցավազքը, սեփական ագրեսիվությունը:

Կուսակցության XXVII համագումարն իմպերիալիզմի սանձազերծած «հոգեբանական պատերազմը» որակեց որպես ագրեսիայի, ինֆորմացիոն իմպերիալիզմի հատուկ ձև, որը ոտնահարում է ժողովուրդների սովետականությունը, պատմությունը, մշակույթը: Դա պայքար է մարդկանց մտքերի, նրանց աշխարհըմբռնման, նրանց կենսական, սոցիալական ու հոգևոր կողմնորոշիչների համար:

Համաշխարհային վարձացման նոր փուլին պետք է համապատասխան լինի նաև գաղափարախոսական բնագավառի բոլոր աշխատողների նոր մոտեցումը միջապգային գործերի, մեր երկ-

րի արտաքին քաղաքականության հարցերի նկատմամբ:

Միջազգային քաղաքականության բնագավառում լուծվող խնդիրների մասշտաբայնությունը, խորությունն ու բարդությունը նոր բարձր պահանջներ են ներկայացնում միջազգային թեմաներով հանդես եկող դասախոսներին և պրոպագանդիստներին. նրանց խնդիրն է սոցիալ-քաղաքական երկու սիստեմների աննախադեպ սուր հակամարտության, իմպերիալիստական հետադիմության կողմից սոցիալիստական ընկերակցության դեմ ասնձապերժած «հոգեբանական պատերազմի» պայմաններում լիովին փաստարկված, մատչելի ու համոզիչ ձևով ժողովուրդներին ճշմարտությունն ասել սոցիալիզմի նվաճումների, նոր հասարակարգի առավելությունների, ՍՄԿԿ-ի ու սովետական պետության խաղաղասիրական արտաքին քաղաքականության մասին, վճռական հակահարված տալ բուրժուական ստահոդ պրոպագանդայի զրպարտանքներին, մեր գաղափարախոսական հակառակորդների դիվերսիաներին: Չէ որ «Մենք գործ ունենք դասակարգային փորձված հակառակորդի հետ, որի քաղաքական փորձը բավմազան է, ժամանակի մեջ չափվում է դարերով: Նա ստեղծել է պնզվածեղ պրոպագանդայի մի վիթխարի մեքենա, որը հանդերձավորված է արդիական տեխնիկական միջոցներով, ունի սոցիալիզմն ատողների մի հսկայական վարժեցված ապարատ... Հարկավոր է հարձակողականություն թե՛ այն

բանում, ինչը վերաբերում է գաղափարախոսական դիվերսիաների մերկացմանը, և թե՛ սոցիալիզմի ռեալ նվաճումների, սոցիալիստական ապրելակերպի մասին ճշմարտացի ինֆորմացիան տեղ հասցնելուն» (Գորբաչով Մ. Ա., ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի քաղաքական զեկուցումը Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXVII համագումարին. Երևան, Հայաստան, 1986, էջ 148):

Ուրեմն, այսօր, երբ մարդկությունն ապրում է իր պատմության բեկումնային պահը, երբ կոմունիստական կուսակցությունն ու սովետական պետությունը հետևողական պայքար են մղում իրենց առջև կանգնած խոշորագույն այնպիսի խնդիրների լուծման համար, ինչպիսին միջուկային սպառնալիքի վերացումը և տիեզերքի ռազմականացման կանխումն են, հոետորն իր պարտքը և պարտականությունը պետք է տեսնի խաղաղության համար մեր երկրի կուրսը պրոպագանդելու մեջ, համոզիչ փաստերով և տվյալներով ցույց տա, որ սոցիալիզմն անվերապահորեն մերժում է պատերազմները: Ինչպես ի լուր աշխարհի հայտարարեց ՍՄԿԿ XXVII համագումարը, մեր իդեալը զենքից ու բռնությունից զերծ աշխարհ է, որտեղ յուրաքանչյուր ժողովուրդ ազատորեն ընտրում է զարգացման իր ուղին, իր ապրելակերպը: Մեր երկրի համար խաղաղ գոյակցությունը քաղաքական կուրս է: Մեր կուսակցության և պետության գործունեությունն ապագայում էլ մնում է պայքարն ընդդեմ միջու-

կային վտանգի, սպառազինությունների մրցավազքի, հանուն ընդհանուր խաղաղության պահպանման ու ամրապնդման: Պատերազմի դեմ մղվող ճակատամարտին ակտիվորեն մասնակցելը ՍՄԿ-ն համարել և համարում է իր արտաքին քաղաքական ստրատեգիայի բուն էությունը:

Միաժամանակ հարկավոր է ցույց տալ, որ մեր խաղաղասիրական քաղաքականության պատճառը ոչ թե մեր թուլությունն է, այլ հավատն ու վստահությունը մեր ուժերին, մարդկության բախտի համար բարձր պատասխանատվությունը և ընդունակությունը՝ հարկ եղած դեպքում արժանի հակահարված հասցնելու ամեն մի ունակ շիտի, ամեն մի ագրեսորի:

«Եթե պահանջվի,— ասված է ՍՄԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովի սովետական հեռուստատեսությամբ 1986 թ. օգոստոսի 18-ին արված հայտարարության մեջ,— մենք արագորեն պատասխան կգտնենք, ընդ որում այդ պատասխանը կլինի ոչ այնպիսին, ինչպիսին ակնկալում են ԱՄՆ-ում: Բայց դա կլինի այնպիսի պատասխան, որը կարժեպրկի «աստղային պատերազմի ծրագիրը»»:

Այն ամենը, ինչով այսօր ապրում, հանուն ինչի պայքարում է սովետական ժողովուրդը, պետք է ակտիվ արձագանք գտնի գաղափարախոսական ճակատի աշխատողների սրտերում, դասախոսների, պրոպագանդիստների, ագիտա-

տորների հրապարակային ելույթներում, աշխատավորների հետ նրանց կրույցներում:

Ժամանակը, ՍՄԿ XXVII համագումարի մշակած կուսակցության տնտեսական ստրատեգիայի կուրսը, ՍՍՀՄ տնտեսական ու սոցիալական վարձացման 1986—1990 թվականների պետական պլանում նախատեսված մեծ ու մասշտաբային խնդիրները բանավոր խոսքի բոլոր մարտիկներից պահանջում են ինչպես հարկն է խորամուխ լինել կյանքի մեջ, համարձակորեն ձեռնամուխ լինել մեծապես նոր, բարդ հարցերին, անկեղծ, ճշմարտացի խոսել ունկնդիրների հետ: Վճռականորեն հրաժարվելով դասախոսական, պրոպագանդիստական աշխատանքում դեռևս իրենց զգացնել տվող շաբլոնից, ստանդարտից, դատարկահնչյուն ֆրազից:

Հարկավոր է իմանալ մի պարզ ճշմարտություն. այն դասախոսությունը, որում թարմ, ինքնատիպ միտքը կոհաբերվում է տարրական ճշմարտությունների միալար կրկնությամբ, փչացնում է ոչ միայն ունկնդիրների ճաշակը, աղավաղում թեման, այլև հեղինակավրկում, արատավորում է իրեն՝ դասախոսին:

Ցիցերոնն ասել է. «Իսկական ճարտարախոսը նա է, ով կարողանում է առօրյա բաների մասին խոսել հասարակ ձևով, վսեմ բաների մասին՝ վեհորեն, միջակ բաների մասին՝ այդ երկուսի միջև ընկած ոճով... այդպիսի հոետորը կհասնի խոսքի նաև այլ արժանիքների՝ հակիրճության, եթե դա պահանջի թեման, հաճախ, նաև

պատմելով՝ դեպքերը կծավալի ունկնդիրների հայացքի առջև, հաճախ կաշխատի դրանք պատկերել ավելի վեհորեն, քան կարող էին եղած լինել իրականում: Իմաստը երբեմն ավելի ուժեղ կլինի, քան իրենք՝ բառերը, հաճախ կօգտագործվի վվարթությունը, հաճախ էլ՝ կյանքի ու բնության նմանակումը» (Об ораторском искусстве. М., Госполитиздат, 1963, стр. 38):

Ահա, համառոտակի, հոետորական արվեստի նշանակության, մեր կյանքի այս դինամիկ ժամանակաշրջանում՝ արագացման, փոփոխությունների ժամանակաշրջանում նրա դերի և խնդիրների մասին:

ՀՈՒՏՈՐԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԾԵՐԸ

Ամեն մի դասախոսության, ելույթի, ճառի հիմնական նախադրյալը նպատակասլացությունն է: Առաջ քաշած դրույթները ենթարկել հիմնական նպատակին, ապացուցել ասելիքի գլխավոր գաղափարը՝ դա էլ հենց նպատակասլացությունն է: Հոետորը պետք է պարզ պատկերացում ունենա, թե ինչի համար է խոսում, ինչ նպատակ է հետապնդում իր ճառով, ինչ է ուզում ասել իր ունկնդիրներին: Նա պետք է իր առջև նպատակ դնի լսարանին հաղորդել որոշ գաղափար, որոշակի մտքեր, ունկնդիրներին վարակել որոշ տրամադրությամբ, որոշ էմոցիայով, նրանց մղել պրակտիկ գործերի, խթանել դեպի

ակտիվ մասնակցության՝ կոմունիստական հասարակարգի կառուցման գործին: Հոետորը պետք է համոզված լինի, որ իր խոսքը կարող է ինչ-որ չափով ապդեցություն գործել այս կամ այն իրադարձության ընթացքի վրա:

Պերճախոսության վերջնական նպատակը, դրա արդյունավետության չափանիշներից մեկը, եթե ոչ հիմնականը, համոզելն է: Վերջին հաշվով կարևորն այն է, թե դասախոսի խոսքն ինչ ներգործություն է ունեցել լսարանի վրա, դասախոսին ինչքանով է հաջողվել մարդկանց համոզել իր կողմից առաջ քաշած դրույթների ճշտության մեջ:

Ցիցերոնն ասել է. «Համոզիչ ճառի ամբողջ կառուցվածքը հիմնվում է երեք բանի վրա. ապացուցել նրա ճշմարտությունը, ինչը որ պաշտպանում ենք. դեպի մեզ տրամադրել նրանց, որոնց առջև մենք ելույթ ենք ունենում. նրանց մտքերն ուղղել գործին հարկավոր ուղղությամբ» (Цицерон М. Т., Три трактата об ораторском искусстве, М., 1972, стр. 152):

Մեր ժամանակակցին հարկավոր է ոչ թե տարրական ճշմարտությունների նկատմամբ կույր հավատ, այլ ջերմ համոզվածություն կոմունիստական իդեալների ճշմարտացիության մեջ: Գիտելիքները դարձնել խոր գաղափարական համոզմունքներ, ապա և գործողություններ, մարդու աշխատանքային ու քաղաքական ակտիվության դրդապատճառներ՝ ահա թե ինչ է հարկավոր:

Հավատը խախտելը շատ ավելի հեշտ է, քան համոզմունքը խախտելը: Նա, ով սոսկ հավատում է, կարող է հրաժարվել հավատից, տեսնելով, որ իրականությունը չի համապատասխանում անաշարժ դոգմաներին: Իսկ նա, ով վինված է գիտելիքներով ու փորձով, ով հասկանում է պատմական պարզացման օրինաչափությունները, չի շփոթվի, եթե նրա որոշ պատկերացումներն ու սպասելիքները չեն համապատասխանում կյանքին: Դրա բացատրությունը նա կգտնի կամ իր նախկին հայացքների շրջանակներում, կամ էլ կվերանայի ու կձշտի այդ հայացքները՝ նոր փաստերի լույսով:

Սովետները՝ Հին Հունաստանի ճարտասանության ուսուցիչները, իրենց ճառերով ավելի շատ ձգտում էին դուր գալ, հիացնել, պարմացնել, քան թե համոզել: Մինչդեռ կարևորը համոզելն է:

Կլարա Ցետկինը Վ. Ի. Լենինի զեկուցումներից մեկի առիթով ասել է. «Նրա զեկուցումը համոզելու նրա արվեստի վարպետության նմուշըն է. ճարտարախոսային պաճուճանքների ոչ մի ամենափոքր նշույլ: Նա ներգործում է միայն իր պայծառ մտքի, փաստարկման անողոք տրամաբանության և հեղափոխականորեն տոկուն գծի ուժով: Լենինը չի ուզում շլացնել, գրավել. նա ցանկանում է միայն համոզել: Նա համոզում է և դրանով գրավում»:

Համոզմունքի գլխավոր ասպեկտներից մեկը գիտելիքն է: Մարդը որքան ավելի շատ բան

գիտենա՝ շրջակա աշխարհի, նրա պարզացման օրենքների մասին, նրա գիտակցության մեջ այնքան ավելի քիչ տեղ կմնա կույր հավատի նկատմամբ:

Սակայն գիտելիքը և համոզվածությունն ամենևին էլ նույնը չեն: Գիտելիքը դեռևս աշխարհայացք չէ, ոչ էլ համոզմունք: Գիտելիքը ոչ բոլոր դեպքերում է վերածվում համոզմունքի:

Ուրեմն, համոզել նշանակում է հավաստի փաստերի և փաստարկումների, հիմնավորված ապացույցների, գիտության տվյալների, օրինակների և թվերի, հեղինակավոր կարծիքների միջոցով հաստատել կամ հերքել այս կամ այն դրույթը, վերահամոզել կանխակալ կարծիք ունեցողներին, փոխել նրանց պատկերացումները, եթե դրանք սխալ են:

Մարդիկ միանման չեն, նույն կերպ չեն մտածում, նույն կերպ չեն դատում: Նրանք ունեն բնավորության տարբեր գծեր, տարբեր ապրումներ, գիտակցականության տարբեր աստիճան: Չի կարելի բոլորի հետ, ինչպես հաճախ արվում է, խոսել նույն լեզվով, բոլորին «մի արշինով չափել»: Ինչքան մարդ՝ այնքան բնավորություն. հարկավոր է, ուրեմն, դեպի ամեն մեկի սիրտը համապատասխան բանալի գտնել: Շերտավորված մտեցումը հնարավորություն կտա ավելի լավ և բավակողմանիորեն ճանաչել մարդուն:

Կարելի է և պետք է տիրապետել համոզելու

գիտությանը: Այստեղ առանձնապես մեծ է օրինակի ուժը: Լենինը գտնում էր, որ բանվորին և գյուղացուն համույել կարելի է միայն օրինակով:

Վերջապես համույելու համար համույվածություն է պետք՝ համույողի համույվածությունը: Այո՛, վճռական նշանակություն ունի իրենց՝ դասախոսների, պրոպագանդիստների, ագիտատորների համույվածությունն ու հավատն իրենց ասածի նկատմամբ: Դա շատ կարևոր է: Չի կարելի ասել մի բան, մտածել մեկ ուրիշ բան, անել մեկ այլ բան: Չի կարելի մարդկանց քարույել այն, ինչ ինքդ ժխտում ես: Խոսողն ինքը պետք է խորապես համույված լինի այն գաղափարների ճշտության մեջ, որոնցով ցանկանում և ուզում է համույել ունկնդիրներին: Դասախոսն ինքը պետք է համույված լինի և կարողանա համույել, որ նորի, անհայտի յուրացումն անխուսափելիորեն սուղակցվում է դժվարությունների հաղթահարման հետ և այդ դեպքում հնարավոր են ոչ միայն հաջողություններ, այլև ժամանակավոր անհաջողություններ, որոնք ծագում են այս կամ այն օբյեկտիվ պատճառներից:

Դասախոսը պարտավոր է բազմակողմանիորեն լուսաբանել նոր հասարակարգի կառուցման բարդ ու դժվարին պրոցեսը, մարդկանց ցույց տալ այն լավն ու գեղեցիկը, որ կա մեր կյանքում, մարդկանց մոտ հպարտության և հա-

վատի զգացում առաջացնել կոմունիստական հասարակության կառուցման մեծ գործի նկատմամբ: Միաժամանակ դասախոսը չպետք է լուծության մատնի մեր թերությունները, մեր իրականության մեջ եղած բացասական երևույթները, որոնք մեզ անկեղծ ցավ են պատճառում, որոնք մինչև վերջ բացահայտվեցին ՍՄԿԿ Կենտկոմի 1987 թ. հունվարյան պլենումում: Աշխատավորների հայացքները, նրանց տրամադրությունը ձևավորվում են ոչ միայն մեր նվաճումների, այլև թերությունների, դժվարությունների ազդեցության տակ, այնպես որ սովետական հասարակության վարգացածությունը, հասունությունը չմեկնաբանվի որպես նրա լրիվ կատարելություն, չիդեալականացվի ձեռք բերվածը: Ինչպես նաև ճիշտ չէր լինի աշխատավորության անհանգստությունը և արդարացի վրդովմունքը հարուցող մեր կյանքում եղած բացասական երևույթներում տեսնել միայն «անցյալի մնացուկներ» մարդկանց գիտակցության և վարքի մեջ: Դրա պատճառները պետք է փնտրել նաև այսօրվա պրակտիկայի, այս կամ այն աշխատողի թույլ տված սխալների մեջ, մեր վարգացման իրական պրոբլեմների ու դժվարությունների մեջ, դաստիարակչական գործունեության թերությունների մեջ:

ՍՄԿԿ ծրագրի նոր խմբագրության մեջ նըշված է, որ մեզանում եղած խորթ գաղափարախոսության ու բարոյականության դրսևորումները, բոլոր բացասական երևույթները կապված են

ինչպես մարդկանց գիտակցության ու վարքագծի մեջ անցյալի վերապրուկների, այնպես էլ հասարակական կյանքի տարբեր բնագավառներում գործնական աշխատանքի թերութունների հետ, հասունացած պորբլեմների լուծման գործում թույլ տրված հապաղման հետ:

Դասախոսը, պրոպագանդիստը պետք է ելնի ռեալ կյանքից, ասի, որ մենք երբեմն շտապեցնում ենք մեր իդձերը, փորձում ենք չարդարացված ձևով արագացնել մեր իդեալների իրագործումը, դրանք չկապելով հրատապ խնդիրների ու անմիջական հեռանկարի հետ: Որոշակի սխալներ էին թույլ տրվել նաև մի շարք կոնկրետ հարցերի լուծման ժամկետների առումով:

Այդ մասին ամենայն որոշակիությամբ ասվեց ՍՄԿԿ Կենտկոմի 1987 թ. հունվարյան պլենումում. «Սոցիալիզմի մասին տեսական պատկերացումները շատ բանով մնում էին 30—40-ական թվականների մակարդակի վրա, երբ հասարակությունը լուծում էր միանգամայն այլ խնդիրներ... Սոցիալիզմի մասին լենինյան դրույթները մեկնաբանվում էին պարզունակ ձևով, հաճախ ամլացվում էին դրանց տեսական խորությունն ու նշանակությունը»: Այնուհետև, «որոշակի տարածում էին գտել կոմունիզմի մասին թեթևամիտ պատկերացումները, տարբեր կարգի մարգարեությունները և վերացական դատողությունները: Դա էլ իր հերթին նվազեցնում էր սոցիալիզմի պատմական նշանակությունը, թու-

լացնում սոցիալիստական գաղափարախոսության ներգործությունը»:

Տեսական հարցերի նկատմամբ նման վերաբերմունքը, նշվեց պլենումում, չէր կարող բացասաբար չանդրադառնալ և իսկապես էլ բացասաբար անդրադարձավ հասարակական գիտությունների վրա, հասարակության մեջ դրանց ունեցած դերի վրա: 70—80-ական թվականների ժամանակահատվածում երկիրն սկսեց կորցնել առաջընթացի տեմպերը: Էկոնոմիկայի մեջ, սոցիալական ու հոգևոր ոլորտներում սկսեցին կուտակվել դժվարություններ և չլուծված պորբլեմներ, երևան եկան լճացման և սոցիալիզմին խորթ այլ երեվույթներ:

Այստեղից էլ մեր դասախոսությունների, զրույցների բովանդակության համապատասխանեցման անհրաժեշտությունը տեսական այդ նոր դրույթներին և եզրահանգումներին:

Գլխավորը, սակայն, դասախոսության, ճառի, ելույթի **գաղափարական հագեցվածությունն է:** Հիշենք Վ. Ի. Լենինի խոսքերը՝ «Յուրաքանչյուր դպրոցում ամենակարևորը դասախոսությունների գաղափարական-քաղաքական ուղղությունն է» (Լենին Վ. Ի., ԵԼԺ, հ. 47, էջ 239):

Հին հունական ականավոր հոետոր Դեմոսթենեսն ասում էր, թե հոետորի փառքը նրա «...քաղաքականության ուղղությունն է, որը պետք է համապատասխանի մեծամասնության ցանկությանը, և սերը կամ ատելությունը նրանց, ում սիրում կամ ատում է հայրենիքը»:

Կան գաղափարներ, որոնք արագ ծնվում, արագ էլ կործանվում են: Կործանվում են, որովհետև կենսունակ չեն, չեն արտահայտում աշխատավորական հոծ մասսաների արմատական շահերը, նրանց իղձերն ու նպատակները:

Մարքսիզմ-լենինիզմը կենդանի, հավերժ պարզացող ուսմունք է, որի կենսունակությունը հաստատված է շատ տասնամյակներով, ապացուցված է կյանքի փորձով:

Սովետական հոետորի պարտքն է յուրաքանչյուր ունկնդրի հասկանալի և հասանելի դարձնել մարքսիզմ-լենինիզմի գաղափարների վերափոխիչ մեծ ուժը, կուսակցության պլանների, որոշումների, գործերի իմաստությունն ու նշանակությունը, մարդկանց խանդավառել, ոգևորել և պայքարի կոչել հանուն մարդկության պայծառ ապագայի:

Հոետորի ելույթը գաղափարական բովանդակությամբ պետք է հագեցված լինի ոչ այն իմաստով, որ նա անվերջ, տեղի-անտեղի կրկնի «կուսակցություն», «կոմունիզմ», «հայրենասիրություն», «ինտերնացիոնալիզմ» և այլ բառեր, այլ որպեսպի ելույթում բերված բուն փաստերը, դրանց օբյեկտիվ նկարագրությունը, նկարագրությունից ստացած տպավորությունը ունկնդրին հանգեցնեն այդ գաղափարներին:

Հոետորական արվեստի ուժը նաև **կիրքն է**, նրա հարձակողական բնույթը: Դեռ Հայնեն է ասել՝ ոչ կրքոտությամբ արտահայտված միտքը մարդկանց չի գրավում: Ֆրանսիական գրողներից

մեկի կարծիքով՝ «Կրքերը միակ հոետորներն են, որոնց փաստարկները միշտ համուլիչ են... պարզասիրտ, բայց կրքով տարված մարդը կարող է ավելի շուտ համուլել, քան պերճախոս, բայց անտարբեր մարդը»: Ոգևորությունը և կրքոտությունը հզոր ուժ են տալիս խոսքին:

Սովետական ականավոր գիտնական Ի. Պ. Պավլովը երիտասարդներին ուղղված նամակում, թվարկելով գիտնականի հիմնական հատկանիշները, գրել է. «Երրորդը՝ դա կիրքն է: Հիշեցեք, որ գիտությունը մարդուց պահանջում է նրա ամբողջ կյանքը: Եվ եթե դուք երկու կյանք ունենայիք, ապա դրանք էլ բավական չէին լինի ձեզ: Մեծ լարում և ուժեղ կիրք է պահանջում գիտությունը մարդուց: Կրքոտ եղեք ձեր աշխատանքում և որոնումներում»:

Հավ խորհուրդ է ոչ միայն գիտնականին:

Կրքոտ վերաբերմունքն իրենց գաղափարների նկատմամբ բնորոշ է մեծ մտածողներին: Լինում են դեպքեր, առիթներ, երբ առանց կրքի և վայրույթի չի կարելի խոսել:

Այդ բանի շատ օրինակներ կան Վ. Ի. Լենինի աշխատություններում:

Այն բանից հետո, երբ Կամենևը և Զինովյը մենշևիկյան թերթում հանդես եկան պինված ապստամբության իրագործման մասին բոլշևիկների որոշման վերաբերյալ հայտարարությամբ և դրանով իսկ դավաճանեցին, թշնամիներին հայտնեցին կուսակցության գաղտնիքը, Լենինը կուսակցության անդամներին ուղղված իր նա-

մակում պայրույթով գրում էր. «Ես ինձ համար անարգանք կհամարեի, եթե ես նախկին ընկերների հետ ունեցած անցյալ մտերմության պատճառով սկսեի տատանվել նրանց դատապարտելու գործում: Ես ուղղակի ասում եմ, որ նրանց երկուսին էլ այլևս ընկեր չեմ համարում և թե՛ Կենտկոմի, թե՛ համագումարի առաջ ամբողջ ուժով պիտի պայքարեմ՝ երկուսին էլ կուսակցությունից հեռացնելու համար» (Լենին Վ. Ի., ԵԼԺ, հ. 34, էջ 528—529):

Ահա թե Ցիցերոնն ինչպիսի կրթություն է սկսում իր մեղադրական ճառն ընդդեմ Կատիլինայի, այն Կատիլինայի, որը դավադիր էր և ոտնձգություններ էր անում ամբողջ Հռոմեական պետության դեմ:

«Մինչև ե՛րբ պիտի, վերջապես, չարաշահեմ մեր համբերությունը, Կատիլինա: Դեռ երկա՛ր պիտի համառես քո վայրի խելագարությամբ: Մինչև ե՛րբ դու, վերջապես, մոռանալով ամեն չափ ու սահման, պիտի գոռոպանաս քո հանդրգնությամբ:

...Այսպիսի պարագաներում, Կատիլինա, գնա այն ուղիով, որի վրա ոտք ես դրել, հեռացի՛ր, վերջապես, քաղաքից, դարբանները բաց են. հեռացի՛ր»:

Անկիրք արտասանած ճառը, ելույթը տեղ չեն հասնում, ունկնդրի հավանություն և առարկություն չեն առաջացնում, չեն կպչում նրա ամենազգայուն թելերին:

Խոսքը բովանդակալից և նպատակասլաց չի կարող լինել առանց ուժեղ հուլմունքի և ապրումների: Հուլմունքը խոսողի ներքին վիճակի դրսևորումն է: Արիստոտելն ասում էր, թե ունկնդիրը միշտ համակրում է այն հոետորին, որը խոսում է հուլմունքով:

Տեսնենք, թե ժամանակին ինչ է ասել Մ. Ի. Կալինինը, որը լավ խրատ ու խորհուրդ է նաև այսօրվա հոետորին. «...Եթե ուզում ես տիրել մասսաներին, ապա պիտի վառվես, եթե դու մոտեցել ես լսարանին և ինքդ չես հուլվում, ինքդ ուզում ես քնել, անկասկած լսարանն էլ կլինի քո տրամադրությանը համապատասխան», այնուհետև, «դուք կարող եք ամբիոնից խոսել ամենաշփոթ լեզվով, բայց եթե դուք հուլվում եք, եթե ձեր բարձրացրած հարցերը նշանկություն ունեն, եթե դուք ամբիոնի վրա հարց եք լուծում, մասսան ձեզ հետ միասին կհրապուրվի... սա ասում է այն մասին, որ մասսան ձեր ետևից տանելու համար դուք պիտի վառվեք մասսայի հետ միասին» (Կալինին Մ. Ի., Դաստիարակության և ուսուցման մասին, Հայպետհրատ, 1960, էջ 16—17):

Հոետորը, ինչպես ամեն մի ստեղծագործող, պետք է ապրի նրանով, ինչ ասում է, ոգեշնչվի, ստեղծագործական էքստազի վիճակում լինի, հրճվանք և ուրախություն ապրի:

Պատմությունից հայտնի են ահա այսպիսի փաստեր. «Բորիս Գոգոլնով» ողբերգությունն ավարտելուց հետո Պուշկինը գրել է Վյալեմս-

կուն. «Իմ ողբերգությունն ավարտված է. ես այն կարդացի բարձրաձայն, միայնակ, և ծափ էի վարկում ու գոռում, վա՛յ դու Պուշկին, վա՛յ դու շան որդի»:

Երբ Պ. Ի. Չայկովսկին ավարտել է «Պիկովայա դամա» օպերայի վերջին պատկերը, իր օրագրում գրել է. «Սարսափելի լաց էի լինում, երբ Գերմանը շունչը փչեց»:

Տիմիրյավի անվան գյուղատնտեսական ակադեմիայի պրոֆեսոր Մ. Պ. Ժուկովսկին դրական երևույթ էր համարում այն, որ շատ պրոֆեսորներ դասախոսությունից առաջ հուզվում են: Ասպիրանտներից մեկը մի անգամ նրան ասում է, թե դասախոսության ժամանակ հուզմունքից ձեռքերը դողում են. «Հենց որ դուք դադարեք հուզվել,— պատասխանում է պրոֆեսորը,— իմացեք, որ Ձեր մանկավարժական կարիերան ավարտված է»:

Ականատեսները պատմում են, որ Հովհաննես Աբելյանի նման դերասանը, որը հիանալի գիտեր իր ամեն մի դերը, հուզմունքով և երկյուղածությամբ էր բեմ մտնում: Այլ կերպ լինել չէր կարող. դա հարգանք էր դեպի հանդիսականը և պատասխանատվություն՝ նրա նկատմամբ:

Դասախոսին (խոսքն իսկական դասախոսի մասին է), ինչքան էլ որ նա լավ իմանա նյութը, նույն պզգմունքն է համակում ամբիոն բարձրանալուց առաջ: Հուզվում է և ապրումներ ունենում:

Կուսակցության հին անդամ Լևիտասը պատմում է, թե ինչպես 1920 թվականին նրան վիճակվում է պեկուցումով հանդես գալ Մոսկվայի քաղաքային կազմակերպության կուսակցական ակտիվի ժողովում: Բարձրանալով ամբիոն, նա չափից ավելի հուզվում է և ոչ այնքան հաջող ելույթ է ունենում:

Ժողովից հետո նա Լենինին դիմում է հարցով.

— Վլադիմիր Իլյիչ, Դուք հուզվո՞ւմ եք, երբ ելույթ եք ունենում:

Լենինը, որ պատրաստվում էր գնալու, նայում է բոլոր ներկաներին և կշտամբանքով ասում.

— Մենջևիկները, էսէռները և այլք, երբ ելույթ են ունենում, չեն հուզվում այն պատճառով, որ նրանք մարդկանց, որոնց առջև ելույթ են ունենում, նայում են վերևից... Ես մարդկանց հարգում եմ և դրա համար երբ ելույթ եմ ունենում, իհարկե, հուզվում եմ:

«Սկսելով ձառը,— իր մասին գրել է Ցիցերոնը,— ես հաճախ երկնչում էի. դեմքս գունատվում էր, հուզվում էի ու դողում»:

Ճառն սկսելիս հոետորի հուզմունքն ու ապրումները միանգամայն բնական են և օրինաչափ:

Այժմ այն մասին, թե ինչպես պետք է պատրաստվել հերթական ելույթին: Ելույթին պատրաստվելն սկսվում է թեմայի ընտրությունից, որից շատ բան է կախված:

Դասախոսության, պեկուցման թեմայի ընտ-

րուսթյունը ինքնանպատակ չէ. այն պետք է հուշի ինքը կյանքը, ելնի երկրում և երկրից դուրս տեղի ունեցող կարևոր իրադարձություններից, օրվա հրատապ պրոբլեմներից, համապատասխանի ունկնդիրների շահերին և հակումներին: Թեման չպետք է ծանրաբեռնել: Այն ճիշտ ընտրել նշանակում է զեկուցման մեջ, ելույթում արծարծել առավել կարևոր, առավել հրատապ հարց կամ հարցեր, որոնք տվյալ պահին հետաքրքրում, հուշում են ունկնդրին:

Թեմայի ընտրությանը հաջորդում է թեմայի համար համապատասխան նյութեր և փաստեր հավաքելը: Ելույթում փաստերի դերի և նշանակության մասին դեռ խոսելու ենք, առաջ անցնելով, ասենք, որ որքան հնարավոր է, շատ փաստեր հավաքել, լավ ուսումնասիրել դրանք և դրանցից ընտրել ամենակարևորները, այնպիսիները, որոնք սերտորեն առնչվում են ընտրած թեմային, ասելիքին:

Վ. Ի. Լենինը, դիմելով բոլշևիկյան մամուլի մոռաջին թղթակիցներից մեկին՝ Ի. Վ. Բաբուշկինին և խնդրելով թղթակցություն գրել, հիշեցնում էր՝ «Աշխատեք հավաքել որքան կարելի է ավելի շատ փաստական տվյալներ»: Նույն պահանջը կարելի է ներկայացնել հոգետորին:

Պակաս կարևոր չէ դասախոսության, զեկուցման վերնագիրը:

Վերնագիրը դասախոսության, ելույթի, ճառի անխզելի, օրգանական մասն է, հիմնական գաղափարը, մտքի հակիրճ ու դիպուկ արտահայ-

տույթունը: Այն պետք է ելնի ելույթի հիմնական գաղափարից, լինի հիմնական մտքի պարզ, հակիրճ ու դիպուկ արտահայտությունը: Ինչպես գիրքը, հրապարակախոսական հոդվածը, այնպես էլ դասախոսությունը հաջողված վերնագիր պետք է ունենա: Գրավիչ վերնագիրը չի կարող ունկնդրին չգրավել:

Ամենևին էլ ցանկալի չեն երկար և վերամբարձ վերնագրերը, ինչպես նաև այնպիսիները, որոնք տալիս են սպառիչ պատասխան ելույթի բովանդակության մասին:

Պարզությանը և հստակությանը են աչքի ընկնում մարքսիզմի դասականների գրավոր և բանավոր ելույթների վերնագրերը: Առանձնապես ուսանելի է վերնագրի վրա Վ. Ի. Լենինի կատարած աշխատանքը: Նրա հրապարակային ելույթների, ճառերի և հոդվածների վերնագրերը առավելագույն լակոնիկ են, կարճ ու կտրուկ, աչքի պարնող, ուշադրություն գրավող: Այսպես, օրինակ, «Պետության մասին», «Պատերազմ և հեղափոխություն», «Մոսկովյան ապստամբության դասերը», «Ռուսական լիբերալիզմի վերջին խոսքը», «Հին, բայց հավիտյան նոր ճշմարտություններ», «Արձակված դուման և գլուխները կորցրած լիբերալները», «Սոխակին առականբով չեն կերակրում» և այլն:

Լենինը չէր հանդուրժում անտարբեր, ակադեմիական վերնագրերը: Վորովսկու «Կրկին մի էջ պատմությունից» ոչինչ չասող վերնագիրը Լենինը փոխարինում է քաղաքականապես հագեց-

ված վերնագրով՝ «Բուրժուական համաձայնողականները և պրոլետարական հեղափոխականները»:

Մարքսիզմի դասականները պահանջում էին վերնագրի պարզություն և հստակություն: Մի առիթով էնգելսը նկատել է. «Ես կարծում եմ, որ որքան պարզ և անհավանոտ լինի վերնագիրը, այնքան լավ...»:

Այո՛, վերնագրի մասին հարկավոր է մտածել: Երբեմն դասախոսությունների մասին թերթերի հայտարարություններում հանդիպում ենք ելույթի բովանդակությանը չհամապատասխանող, շաբլոն, հանրահայտ, ստանդարտ, երկար, վերամբարձ, խրթին վերնագրերի, որոնք թուլացնում են հետաքրքրությունը կարդացվելիք դասախոսության նկատմամբ:

Վերջապես հարկավոր է, որ ընտրած թեման համապատասխանի քո էությանը, հակումներին, տարերթին և, որ գլխավորն է՝ համոզմունքներին:

Մի առիթով Մ. Ի. Կալինինն ասել է. «Հասկանալի է, յուրաքանչյուր մարդ ինչ-որ բան ունի, որ յուրահատուկ է միայն իրեն, հաճելի է իր հոգուն: Եթե նա սիրում է ձուկ որսալ, ապա լավ կլիներ, եթե նա երկու հողված գրեր ձկնորսության մասին, որովհետև դա կբխեր նրա հոգուց»:

Ասված է ժուռնալիստի համար: Բայց այդ նույն դեղատոմսը կարելի է առաջարկել նաև հոետորին:

Ցուրաքանչյուր դասախոսություն, պեկուցում,

ելույթ հիմնականում բաղկացած է երեք մասից՝ **ներածություն, շարադրություն, եզրափակում:**

Կարևոր է դասախոսության, ելույթի **ներածական** մասը:

Ջեկուցումը, ելույթը հարկավոր է սկսել գործի էությունից, կամ մի որևէ այլ բանից, որ անմիջապես ուշադրություն հրավիրի:

Այդպիսին էին Լենին-հոետորի ելույթներն ու ձառերը: «Որտեղ էլ Լենինը ելույթ ունենար,— իր հուշերում գրում է Ա. Ա. Անդրեևը,— համագումարում, թե միտինգում, նա հենց առաջին բառերով ամբողջովին ընդգրկում, գերում էր լսարանը. բոլորի հայացքները, ամբողջի ուշադրությունն առանց կտրվելու և մինչև վերջ կենտրոնանում էին Լենինի վրա: Այստեղ դեր էին խաղում հարցի կարևորությունը, անկեղծությունը, ճշմարտության ուժը, խոր համոզվածությունն ու կրքոտությունը, որոնք հնչում էին ձառի հենց առաջին նախադասություններում և միանում էին Լենինի անձնական վիթխարի հղմալքի ու նրա նկատմամբ վստահության հետ»:

Վ. Ի. Լենինի յուրաքանչյուր ելույթի սկիզբը յուրատեսակ դիմում էր՝ ուղղված լսարանին, մարտական կոչ՝ հեղափոխական պայքարի իր պինակիցներին և համախոհներին: Այսպես. «Ընկերներ՛», «Ընկեր բանվորներ՛», «Ընկեր բանվորներ և կարմիր բանակայիններ՛», «Պատանի բարեկամներ՛ և ընկերներ՛»: Լենինը երբեմն իր ձառն սկսում էր ուղղակի հարցով: 1918 թվականի օգոստոսի 23-ին, ելույթ ունենալով Մոսկ-

վայի պոլիտեխնիկական թանգարանի միտինգում, նա դահլիճ է նետում առաջին բացականչությունը՝ «Ո՛րն է մեր ծրագիրը» և պատասխանում:

Հին ժամանակներում հոետորները գործածում էին ճառի ներածության հետևյալ երեք ձևը՝ **արհեստական**, երբ հոետորը ունկնդիրներին աստիճանաբար նախապատրաստում է զբոսավոր թեմային, **բնական**, երբ խոսողն ուղղակի սկսում է շարադրել իր հիմնական միտքը, **հանկարծակի**, երբ հոետորն իր ճառը սկսում է միանգամից, ուժեղ արտահայտություններով:

Ներկայումս, ինչպես նշում է Սուրեն Արևշատյանն իր «Հոետորական արվեստի հիմունքները» աշխատության մեջ, ավելի գործածական են ներածության հետևյալ ձևերը.

Դիմում: Հոետորը պարզապես դիմում է լսարանին որևէ բառով կամ կարճ նախադասությամբ: Այսպես, օրինակ, «Ընկերներ՛ր», «Հարգելի քաղաքացիներ՛ր», «Գերագույն սովետի ընկեր դեպուտատներ՛ր». «Համագումարի մեծարգո պատգամավորներ՛ր», «Արտասահմանյան մեր թանկագին հյուրեր՛ր»:

Ժամանակագրական հարցադրում: Հոետորը նշում է պատմական այն տարեթիվը, երբ տեղի է ունեցել դեպքը: Ահա, օրինակ, դեկաբրիստների ապստամբությանը նվիրված Գ. Վ. Պլեխանովի ճառի սկիզբը.

«Ուղիղ 75 տարի առաջ, 1825 թվականի դեկտեմբերի 14-ին, մի դեպք տեղի ունեցավ Պե-

տերբուրգում, որը խորապես հիացրեց ժամանակակիցներին և արժանի է սերունդների լիակատար ուշադրությանը»:

Հարցի կարևորության ընդգծում: Երբ ելույթն սկսվում է հատկապես շեշտելով շոշափվող հարցի կարևորությունը: Դանտոնն իր ճառերից մեկն սկսում է ահա այսպես.

«Ես առաջարկում եմ բոլոր սպանված քաղաքացիներին չհեռանալ իրենց տեղերից... (բոլոր ներկա եղողները լուռ մնում են իրենց տեղերում): Ինչպե՞ս թե, քաղաքացիներ, մի՞թե ահեղ վտանգի մոմենտին... դուք կարող էիք ցրվել առանց վճռական միջոցներ ձեռք առնելու, որպիսիք ձեզանից պահանջում է ժողովրդական գործի փրկությունը: Հասկացե՞ք, թե որքան կարևոր է ժամանակին ձեռք առնել իրական միջոցներ, որոնք պատժելու են հակահեղափոխականներին, որովհետև տրիբունալն անհրաժեշտ է նրանց համար»:

Պարզ ներածություն: Երբ հոետորը պարզ, հասարակ, անկաշկանդ ձևով սկսում է իր ճառը, ունկնդիրներին հայտնելով իր նպատակը և ճառի թեման: Ահա Լասսալի ճառերից մեկի սկիզբը. «Պարոններ: Ես հրավեր ստացա ճառ ասելու այս հարգելի ժողովում և ընտրեցի այնպիսի նյութ, որն ինքնին պետք է գրավի ձեր ուշադրությունը, որպես ամենաարդիական հարց: Ես խոսում եմ սահմանադրության էության մասին»:

Կիրառելի են նաև ներածության հանդիսավոր, հանկարծակի կամ անսպասելի ձևերը:

Իսկապես, սովորական շաբլոնով սկսվող ելույթը, դասախոսությունը չի կարող անմիջապես գրավել, ուշադրություն կենտրոնացնել: Լսարանն ամենազգայուն բարոմետրն է. լսարանի ուշադրությունը գամվում է միայն այն ժամանակ, երբ ելույթն սկսվում է որևէ անսովոր բանից, մի ինչ-որ ինքնուրույն, կենդանի մտքից և ոչ թե պատրաստի, վաղօրոք կառուցված ֆորմուլներից:

Իսկ առհասարակ պարտադիր է, արդյոք, ներածությունը: Մեծ մասամբ դրա անհրաժեշտությունը լինում է, և դրա սահմանն ունկնդիրների ուշադրության նվաճումն է: Այն բանից հետո, երբ դասախոսն իր վրա է գրավել ունկնդիրների ուշադրությունը, նրանց մեջ հետաքրքրություն է առաջացրել, պետք է առաջ գնա, խորացնելով այդ հետաքրքրությունը, լիովին տիրապետելով լսարանին:

Պահլիճի լուռությունը ունկնդիրների ուշադրությունը գրավելու առաջին քայլն է: Հարկավոր է, ուրեմն, ասելիքն այնպես կառուցել, որ ունկնդիրը շահագրգռվի առաջին իսկ բառերից և նախադասություններից, անմիջապես «նվաճվի» լսարանը, գրավվի ուշադրությունը:

Պասախոսության սկիզբը պետք է լինի առանց մեծադղորդ կամ պարմացնող ֆրազների: Ֆ. Մ. Պոստոևսկին խորհուրդ է տալիս հրապարակալին ձառն ասել, որքան հնարավոր է, ավելի պարզ ու բնական, խոսակցական ձևով:

Ահա սկիզբը Ֆրիդրիխ Էնգելսի Ձեզ հայտնի ձառի՝ արտասանած Կարլ Մարքսի գերեզմանի վրա. «Մարտի 14-ին, կեսօրից հետո, երեքից քառորդ պակաս, դադարեց մտածելուց ժամանակակից մտածողներից խոշորագույնը: Նրան մենակ թողեցինք ընդամենը միայն երկու ռոպեով. մտնելով սենյակ, մենք նրան գտանք բավկաթոռի վրա հանգիստ քնած, բայց արդեն հավիտենապես» (Հիշողություններ Մարքսի և Էնգելսի մասին, Երևան, 1958, էջ 397):

Ահա և Գ. Կ. Օրջոնիկիձեի ձառի սկիզբը, որ նա արտասանել է Բաքվի սովետի հանդիսավոր նիստում, Հայաստանում սովետական կարգերի հաստատման առթիվ, 1920 թ. դեկտեմբերի 1-ին. «Ընկերներ՝ Դժվար թե որևէ տեղ կարելի լինի գտնել ավելի երջանիկ մի դահլիճ, քան այս դահլիճն է: Ինչ-որ յոթ ամսվա ընթացքում այս դահլիճի պատերի ներսում շատ անգամ են հավաքվել Բաքու քաղաքի բանվորները՝ հանդիսավոր նիստերի համար:

Այսօր, հենց այս դահլիճում, Բաքվի պրոլետարիատը ողջունում է Հայկական Սովետական Հանրապետության ծնունդը» (Օրջոնիկիձե Գ. Կ., Ընտիր հոդվածներ և ձառեր, Հայպետհրատ, 1950, էջ 31):

Շատ բան է կախված դասախոսության շարադրանքից, բուն նյութից: Պատրաստվելով ելույթին, դասախոսն իր համար որոշակի պետք է դարձնի երեք բան՝ **ի՞նչ ասել, որտե՞ղ ասել, ինչպե՞ս ասել:** Ելույթը հարկավոր է շարադրել

մտքերի հաջորդականությամբ, հարցերի դասավորությամբ այն հաշվով, որ յուրաքանչյուր հաջորդ հարցը տրամաբանորեն բխի նախորդից:

Չեռնամուխ լինելով նյութի շարադրմանը, պետք է համոզված լինել, որ խոսքը կարող է ինչ-որ չափով ապրեցություն գործել այս կամ այն իրադարձության ընթացքի վրա, ունկնդրի տրամադրության վրա:

Ալ. Մյասնիկյանը Վ. Ի. Լենինի վեկուցումներից մեկի մասին վերհիշում է ահա թե ինչ. «Կարմիրբանակայիններից շատերն առաջին անգամ էին լսում նրան... Լենինը հանգամանալից վեկուցում կարգաց Սովետական Ռուսաստանի միջազգային ու ներքին դրության մասին: Ճառը տևեց մեկ ժամից ավելի: Այն հենց միանգամից որոշակի բեկում առաջացրեց բավմահավարանոց լսարանի տրամադրության մեջ: Ճառը բոլորը հասկացան, յուրացրին և վերջում անկուսակցականների կոնֆերանսը բուռն օվացիա սարքեց ի պատիվ Լենինի»:

Զաղաքական նպատակալացություն, բարձր գաղափարայնություն, հստակություն, սրություն, ճշմարտացիություն՝ ահա ելույթի շարադրանքին ներկայացվող պահանջները: Շարադրանքի կարևորությունը որոշվում է բարձրացրած հարցերի մասշտաբայնությամբ, դրանց սոցիալական հնչեղությամբ, վերջին հաշվով նրանով, թե այն ինչքանով է արժանանում լսարանի ուշադրությանը: Հարկավոր է հաշվի առնել լսարանի բավմանությունը, ունկնդիրների հետաքր-

քրրությունը, նրանց կբաղմունքը, կրթությունը և կատրաստականության մակարդակը:

Դասախոսը պետք է որոնի և գտնի ոչ միայն ասելիքը, այլև ասելիքի շարադրման այնպիսի ձև, որը ելույթում առաջ քաշված մտքերն ու գաղափարները դարձնի հնարավորին չափ ակնառու, հնարավորին չափ տպավորիչ: Հարկավոր է խոսել, ապրել նրանով, ինչի մասին խոսում ես: Իսկ «ինչ վերաբերում է խոսքի ձևին,— ասում է Արիստոտելը,— ապա այն չպետք է լինի ոչ չափածո, ոչ էլ ոիթմից զուրկ: Առաջին դեպքում ճառը համոզականություն չի ունենում, քանի որ կթվա արտիստական և միաժամանակ կշեղի ունկնդիրների ուշադրությունը, ստիպելով նրանց հետևել նման բարձրացումներին և իջեցումներին: Ռիթմից զուրկ ոճն էլ ունի անավարտ տեսք և կարելի է նրան տալ ավարտուն տեսք, բայց ոչ վանկերով, այլ ներքին ոիթմով» (Об ораторском искусстве, стр. 37):

Ցիցերոնը, չանտեսելով ելույթի շարադրման ձևի դերն ու նշանակությունը, միաժամանակ ընդգծել է ելույթի բովանդակության կարևորությունը, ձևի և բովանդակության միասնության անհրաժեշտությունը: Բովանդակության իմաստությունը, ասել է նա, առանց պերճախոսության քիչ օգուտ է տալիս, իսկ պերճախոսությունն էլ առանց իմաստուն բովանդակության՝ օգուտ չի տալիս: Այդ առումով Ցիցերոնը հոգևորի առջև դրել է հետևյալ հիմնական խնդիրները. ապացուցել ելույթում առաջ քաշած իր դրույթները,

մեջ բերված փաստերի և փաստարկումների ճշմարտացիությունը, ունկնդիրներին գեղագիտական բավականություն պատճառել, ներգործել նրանց կամքի և վարքի վրա, մարդկանց մղել ակտիվ գործունեության:

Ելույթը պետք է ունենա կուռ կառուցվածք, կուռ տրամաբանություն: Սխալ են վարվում նրանք, ովքեր ձեռնամուխ լինելով որևէ հարցի լուսաբանմանը, սկսում են դրա մասին պատմել «Ադամի ժամանակվանից», խոսում են տղվալ թեմայի հետ առանձնապես առնչություն չունեցող բաների մասին:

Շարադրանքում հոետորը պետք է վերլուծի բուն նյութը, հիմնական թեման: Վ. Ի. Լենինի մասին իր հիշողություններում Ա. Ա. Անդրենը գրում է. «Նա միշտ խոսում էր գլխավորի մասին, ընտրում էր հիմնական օղակը, որի վրա և կենտրոնացնում էր ամբողջ ուշադրությունը: Նրա ճառն ամբողջական էր, կուռ ու միաձուլ: Նա դնում էր հիմնական խնդիրը, և մյուս բոլոր հարցերը, որը նա շոշափում էր, ելույթի գլխավոր թեմայի հետ գտնվում էին միասնության, սերտ կապի մեջ, մեկ թեպը սերտ, անխզելի կերպով կապված էր մյուսի հետ» (Андреев А. А., Воспоминания о В. И. Ленине, т. 2, стр. 32—34):

Կարևոր է նաև դասախոսության, ճառի, ելույթի եպրափակումը:

Այն բնականաբար պետք է բխի ասվածից, արտահայտի ավարտուն միտք, լինի որոշակի

հետևություն, հակիրճ ֆրազ, լույունգ, որոնք արձագանք գտնեն մարդկանց մտքերում ու սրտերում, որևէ նպատակի հասնելու կոչ անեն:

Ռուս ականավոր դատական հոետոր Ա. Տ. Կոնին գտնում էր, որ ելույթի վերջը պետք է լինի այնպիսին, որպեսզի ունկնդիրներն պզան, որ դասախոսն այլևս ասելու բան չունի: Ելույթը ձգձգելը համբերությունից հանում, ձանձրացնում է ունկնդիրներին և, հասկանալի է, զցում է հոետորի հեղինակությունը:

Դասախոսությունը, պեկուցումը, ճառը լավ է ավարտել կարճ, պարզ ու լակոնիկ. «ահա բոլորը, ինչ ես ուկում եմ ասել»՝ Մաքսիմ Գորկին այդպես է ավարտում իր ճառը սովետական գրողների համամիութենական առաջին համագումարում:

Չի կարելի նաև ասելիքը կիսատ-պոատ ավարտել, մտքի կեսից ընդհատել ճառի վերջը: Ձեկուցման, ելույթի վերջը պետք է լինի մտածված, հնչի բնական, առանց կեղծ ոգևորության և խանդավառության: Ընդհանուր առմամբ եկրափակումը պետք է ընդհանրացնի, հանրագումարի բերի ասածը, լսարանի առջև խնդիրներ դնի, դրանք իրականացնելու կոչ անի:

Ահա թե ինչպիսի ընդհանրացող վերջավորություն ունի ՍՄԿԿ Կենտկոմի քաղաքական պեկուցումը կուսակցության XXVII համագումարին: Նշելով, որ մեր լենինյան կուսակցությունը մեկ անգամ չէ, որ պատմական բարդ իրադարձություններում ցուցաբերել է առաջընթացի ճիշտ

ուղիներ գտնելու ընդունակություն, որ այդպես կլինի նաև առաջիկայում, պեկուցումն ավարտվում է ահա այսպես.

«Այդպես և միայն այդպես մենք կկարողանանք կատարել մեծ Լենինի պատգամը՝ եռանդով, կամքի միասնությամբ բարձրանալ ավելի վեր, ընթանալ առաջ: Պատմությունը մեզ ուրիշ ձևկատագիր չի տվել: Բայց դա, ընկերներ, ի՞նչ հիանալի ձևկատագիր է» (Գորբաչով Մ. Ա., ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի քաղաքական պեկուցումը Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXVII համագումարին, Երեվան, Հայաստան, 1986, էջ 164):

Ցանկալի է, որ պեկուցումը, ելույթն ունենան էմոցիոնալ, հուպական վերջավորություն: Ահա թե ինչպես է ավարտվում պատերազմի օրերին հայ ռազմիկներին ուղղված հայ ժողովրդի խոսքը. «Չգիտակցված մահը՝ մահ է, գիտակցված մահը՝ անմահություն»: Հանուն հայրենիքի, հանուն երջանիկ կյանքի արհամարհեցե՛ք մահը, հիշեցե՛ք մեր ժողովրդի պանծալի պավակի՝ Միքայել Նալբանդյանի խոսքերը.

Ամենայն տեղ մահը մի է.
Մարդ մի անգամ պիտ մեռնի,
Բայց երանի, որ յուր ազգի
Ապստության կպոհվի:

Դասախոսությունը, պեկուցումը, ձառը, ինչպես ասացինք, կարելի է վերջացնել ցիտատով.

լուսունգով. կոչով, ասացվածքով, բանաստեղծությամբ, երգի խոսքերով, թվով և փաստով:

Իսկ ինչպե՞ս թողնել լսարանը. կան դասախոսներ, որոնք, ավարտելով ելույթը, անմիջապես հեռանում են լսարանից: Դա լավ չէ: Ցանկալի է, որ փոքր ընդմիջումից հետո դասախոսը պեկուցման շուրջը կրույց սկսի. ունկնդիրներին առաջարկի հարցեր տալ կամ ինքն ինչ-որ բան հարցնի թեմայից: Դա հնարավորություն կտա պարզելու, թե ունկնդիրներն ինչքանով են յուրացրել նյութը, ինչ մույթ հարցեր են մնացել, որոնց հարկ կլինի պատասխանել: Դասախոսը դահլիճից պետք է հեռանա միայն այն ժամանակ, երբ ունկնդիրները բավարարված են կրույցով, հեռանա որպես բարեկամ և խորհրդատու:

Այժմ ցիտատների մասին: Դասախոսություն չի կարող լինել առանց ցիտատների: Հրապարակային ձառում, ելույթում ի՞նչ դեր է խաղում և ինչպե՞ս օգտագործել ցիտատը: Ցիտատն այս կամ այն աշխատությունից, այս կամ այն հեղինակից մեջ բերված քաղվածքն է, որը պետք է հաստատի ելույթ ունեցողի միտքը, առաջ քաշած դրույթը:

Ցիտատը պետք է մեջ բերել բառացիորեն, առանց որևէ փոփոխության: Իսկ այն դեպքում, երբ դասախոսը հնարավորություն չունի բառացիորեն մեջ բերելու ցիտատը, նա կարող է համոտոտակի շարադրել դրա բովանդակությունը: Երկու դեպքում էլ պետք է ուշադիր և զգույշ լի-

նել և այնպես անել, որ չաղավաղվի ցիտատի էությունը:

Ցիտատը պետք է օգտագործել տեղին և չափավոր, որքան հնարավոր է կարճ, որպեսզի չհոգնեցնի ունկնդիրներին և նրանց հնարավորություն տա խորհելու, մտածելու դրա մասին:

Եվս մեկ խորհուրդ. քանի որ ցիտատի դեպքում հեղինակը հենվում է ուրիշի խոսքի վրա, ապա ելույթ ունեցողն իր ձայնը կամ խոսքի տեմպը պետք է հարմարեցնի ցիտատին այնպես, որ ունկնդիրներն չզգան, որ դա ուրիշից մեջբերում է և ոչ թե խոսողի միտքն է:

Այնուամենայնիվ, ասենք, որ ցիտատի տեղին և նպատակահարմար օգտագործելը շատ կարևոր է, այն նպաստում է նյութի յուրացմանը: Ցիտատ կա, որ մի ամբողջ ասելիք արժե, մի ամբողջ միտք ու զգացում է պարունակում իր մեջ:

Ահա մի քանի օրինակ.

«Ուրիշ ժողովրդի ստրկացնող ժողովուրդը կոչում է իր սեփական շղթաները» (Կ. Մարքս):

«Աշխատանքն ամեն մի հարստության աղբյուրն է՝ հավաստում են տնտեսագետները... Բայց այն նաև ինչ-որ անսահմանորեն ավելի մեծ է, քան այդ: Նա մարդկային ամբողջ գոյության առաջին հիմնական պայմանն է,— և դա այն չափով, որ մենք որոշակի իմաստով պետք է ասենք՝ աշխատանքն է ստեղծել մարդուն» (Ֆ. Էնգելս):

«Մեր պատկերացումով պետությունն ուժեղ

է մասսաների գիտակցականությամբ: Նա ուժեղ է այն դեպքում, երբ մասսաներն ամեն ինչ գիտեն, ամեն ինչի մասին կարող են դատել և ամեն ինչ գիտակցաբար են անում» (Լենին Վ. Ի., ԵԼԺ, հ. 35, էջ 23):

«Ամբողջ մարդկությունը մի ընտանիք է: Ժողովուրդները էդ մեծ ընտանիքի անդամներն են: Գնում են մի նպատակի, և ամեն մեկն ունի իր դերը երջանիկ դարձնելու ամենքին, և ամենքի երջանկությունը դարձնելու ամեն մեկի երջանկությունը» (Հովհ. Թումանյան):

Ավելի լավ, քան մեջ բերված քաղվածքն է, չես ասի ժողովուրդների իրավահավասարության և բարեկամության մասին:

Մեծ նշանակություն ունի թվերի, փաստերի, տեղեկությունների, տվյալների օգտագործումը:

Ելույթը, անկախ նրանից, թե ինչ թեմայի է նվիրված, չի կարելի պատկերացնել առանց թվերի և փաստերի: Ելույթում առաջ քաշված դրույթներն ապացուցելու, ունկնդիրներին համոզելու և նրանց վրա էմոցիոնալ ազդեցություն գործելու համար համապատասխան թվերի, փաստերի, տվյալների հավաքելն ու դրանց հմտորեն օգտագործելը հոստորական արվեստի շատ կարևոր տարրերից են:

Ինչպե՞ս, օրինակ, օգտագործել թվերը: Թվերն ի՞նչ դեր են խաղում ելույթում:

«Թվերը չեն կառավարում աշխարհը, բայց նրանք ցույց են տալիս, թե ինչպես կառավարել»՝ այսպես է ասել հանձարեղ Գյոթեն:

ԹՎերը, վիճակագրական տվյալները, ամենից առաջ, ապացուցելու կամ հերքելու համոզիչ փաստարկներ են: Դրանք ելույթում հարկավոր է մեջ բերել հմտորեն, հստակ ու համոզիչ, այնպես, որ մեխվեն հիշողության մեջ, հասանելի և հասկանալի լինեն: Ըստ որում պետք է պահպանել չափի պահպանումը, չհարաշահել վիճակագրական տվյալները: Այնուհետև, պետք է խուսափել դասախոսության կամ պեկուցման մեջ երկար աղյուսակներ մեջ բերելուց, ինչպես նաև տվյալների միապաղաղ թվարկումից, մի բան, որը քրեցնում է լսարանը:

Հավաստի թվերն ու փաստերը, ինչպես ներքևում կտեսնենք, ահեղ մեղադրանք են բուրժուական պրոպագանդայի ստիճակ և կեղծիքին:

Պետք է ձգտել թվերի պատկերավոր մատուցման, ելույթի ժամանակ օգտագործելով պանավան ցուցադրական նյութեր՝ թվերը մեջ բերելով դիագրամների, սխեմաների, քարտեզների միջոցով:

Ունկնդիրներին չի կարելի համոզել, չի կարելի ապացուցել նաև առանց հավաստի փաստերի: «Փաստերը,— նշել է Վ. Ի. Լենինը,— եթե դրանք վերցվեն իրենց **ամբողջության**, իրենց **կապի** մեջ, ոչ միայն «համառ» են, այլև անվերապահորեն ապացուցիչ բան են» (Լենին Վ. Ի., ԵԼԺ, հ. 30, էջ 430):

Ելույթը պետք է շարադրել ստուգված, համոզեցուցիչ փաստերի վրա, այնպիսի փաստերի, որոնք վճռական են և հանգուցային ոչ միայն

այսօրվա համար, կարողանալ մասնակի փաստի մեջ տեսնել հասարակական նշանակության երեվոյթ:

Հարկավոր է օգտագործել դիպուկ, տվյալ ելույթին համապատասխան փաստերը, որոնք ծառայեն ընդհանուր մտքի, նրա առանձին դրույթների մեկնաբանմանն ու լուսաբանմանը: Ելույթը կարելի է կառուցել նույնիսկ մեկ փաստի, բայց համընդհանուր նշանակություն ունեցող փաստի վրա: Օգտագործել ոչ միայն դրական, այլև բացասական բնույթի փաստերը, խընդիր դնելով պայքարել մեր իրականության ստվերոտ կողմերի դեմ:

Լենինը միաժամանակ նախապգուշացնում էր, որ «մանր փաստերը, եթե դրանք վերցվում են ամբողջությունից դուրս, կապից դուրս, եթե դրանք կցկտուր և կամայական են, հենց միայն խաղալիք են կամ որևէ էլ ավելի վատ բան» (Լենին Վ. Ի., ԵԼԺ, հ. 30, էջ 430):

Պրոպագանդիստական աշխատանքի պրակտիկայում հանդիպում ենք երկու ծայրահեղության: Հանրապետության գործարաններից մեկում ինժեներ-պրոպագանդիստներից մեկը դասախոսություն է կարդում «Աշխատանքային և պետական կարգապահությունը մեր հաջողությունների գրավականն է» թեմայով: Ճիշտ շարադրելով այդ հարցի վերաբերյալ կուսակցության և նրա Կենտրոնական կոմիտեի որոշումների բովանդակությունը, սակայն և՛ դրական և՛ բացասական առումով գրեթե ոչ մի փաստ չի բերում հենց իրենց

ձեռնարկությունից, բավարարվում է ընդհանուր հայտարարություններով:

Լինում է նաև հակառակը. դասախոսության ընթացքում, առանց մեկնաբանելու, տեսականորեն ապացուցելու, առատորեն բերում են թվեր ու փաստեր, տվյալներ ու տեղեկանքներ, որոնք հոգնեցնում են ունկնդիրներին, թուլացնում են նրանց ուշադրությունը դասախոսության նկատմամբ:

Ահա թե ինչ է ասել ֆրանսիացի գրող Վոլվենարգը. «Քիչ բառերով ու տեղին բերված մի քանի օրինակները մտքերին տալիս են ավելի շատ փայլ, ավելի մեծ կշիռ ու հեղինակություն... օրինակների ավելորդ առատությունը և մանրամասների ավելորդությունը միշտ թուլացնում են խոսքը»:

Թիվը, փաստը, եթե կարելի է այսպես ասել, պետք է խոսեցնել, մեկնաբանել այնպես, որ նպաստի ասածի բացահայտմանը:

Ահա ձեզ օրինակներ.

«Գիտելիք» ընկերության դասախոսներից մեկը, խոսելով մեր մոլորակի վրա գիտության և տեխնիկայի վիթխարի առաջընթացի մասին, բերեց այսպիսի տվյալներ. թղթի գյուտի և ներդրման միջև ընկած ժամանակը տևել է 100 տարի, շոգեմեքենայինը՝ 80, հեռախոսինը՝ 50, ինքնաթիռինը՝ 20, տրանսպիստորային տեխնիկայինը՝ 3 տարի, լազերինը՝ 2 ամիս:

Այս տվյալները չեն կարող չգրգռել մարդ-

կանց երևակայությունը, չպահպանվել հիշողության մեջ:

Հիտլերյան Գերմանիայի դեմ սովետական ժողովրդի հաղթանակի 40-ամյակին նվիրված իր պուլսի մեջ Երևանի ավտոդոդերի գործարանի ազիտատոր Հովհաննիսյանը մեջ բերեց այսպիսի տվյալներ. Հայրենական պատերազմի ընթացքում հիտլերյան զավթիչները մեր տերիտորիայում ավերել են 1710 քաղաք, 70 հազար գյուղական բնակավայր, 31.850 արդյունաբերական ձեռնարկություն: ՍՍՀՄ-ի ռազմական ծախսերի և նյութական կորուստների ընդհանուր գումարը կազմել է մոտ 2 տրիլիոն 600 միլիարդ ռուբլի:

Այս թվերը լիակատար պատկերացում են տալիս պատերազմի հետևանքով մեր երկրի էկոնոմիկային պատճառված վիթխարի կորստի մասին, մի կորուստ, որին չէր դիմանա ուրիշ և ոչ մի երկիր, ուրիշ և ոչ մի պետություն:

Ամերիկյան մի մասնագետ հաշվել էր, որ համաշխարհային երկրորդ պատերազմի ուղղակի ծախսերը կազմում են մի այնպիսի գումար, որով կարելի կլիներ աշխարհի բոլոր երեխաներին տալ լրիվ միջնակարգ կրթություն, աշխարհում եղած ամեն մի ընտանիքի համար կառուցել հինգ սենյակից բաղկացած ամառանոց և երկրագնդի բնակչության յուրաքանչյուր 5000 մարդու համար կահավորել մեկական սքանչելի հիվանդանոց:

Մարդկային հասարակության գոյության 5,5

հապար տարում եղել է 15 հապար մեծ ու փոքր պատերազմ: Այդ պատերազմներում միայն սպանվածների թիվը կազմել է 3 միլիարդ 640 միլիոն մարդ:

Մեջ բերված թվերը և փաստերը ցայտուն վկայություն են պատերազմի ավերիչ նշանակության մասին և ահեղ նախազուշացում բոլոր նրանց, ովքեր վտանգում են խաղաղության վեհ գործը:

Տարիներ առաջ մենք ներկա եղանք «Բուրժուական դեմոկրատիայի սուտն ու կեղծիքը» թեմայով մի դասախոսության, որը շատ բան թողեց ունկնդիրներին հիշողության մեջ:

Դասախոսը բերեց ահա այսպիսի թվեր, փաստեր և տվյալներ, որոնք բացահայտում են բուրժուական դեմոկրատիայի հակաժողովրդական բնույթը, նրա մարդատյաց սկզբունքները:

Ամերիկայում ներկայումս 27 մարդու անձնական ունեցվածքը կազմում է 200—300 միլիոն դոլար, 5 մարդ ունեն 300—500 միլիոն, 6 մարդ՝ 500 միլիոնից մեկ միլիարդ, 2 մարդ՝ մեկից մեկուկես միլիարդ դոլար:

Միևնույն ժամանակ 32 միլիոն ամերիկացիների եկամուտն աղքատության սահմանից էլ ցածր է: ԱՄՆ-ում յուրաքանչյուր ընտանիք տեղի է ունենում լուրջ բռնություն, երեք և կես ընտանիքում՝ կողոպուտ, 21 ընտանիքում՝ բռնաբարություն, 48 ընտանիքում՝ սպանություն:

Իմպերիալիստական ռեակցիան,— շարունակեց նա,— «Հանուն մարդու իրավունքների պաշտ-

պանության» ավնիվ լուրնգն օգտագործում է մեր երկրի ներքին գործերին միջամտելու, համաշխարհային հասարակական կարծիքը թյուրիմացության մեջ գցելու համար:

Իմպերիալիստի ջատագովները բարբաջում են «անձի պատության» մասին այն ժամանակ, երբ կապիտալի աշխարհը կոպիտ կերպով ոտնահարում է անձի պատությունը: Այնուհետև դասախոսը մեջ բերեց դեռևս ամերիկյան կապիտալիստի արշալույսին Աբրահամ Լինկոլնի խոստովանությունը. «Մենք բոլորս պաղարարում ենք մեր կողմնակցությունն պատությանը, բայց, օգտովելով այդ բառից, մենք բոլորս ամենևին էլ նույն իմաստը չենք դնում նրա մեջ... Ապատությունը բարձր է սեփականությունից, մարդը բարձր է դուարից»:

— Վատ չի ասված,— ավարտում է իր խոսքը դասախոսը,— սակայն Ամերիկայի ներկայիս կառավարողներն իրենց հորջորջում են «Ապատության և դեմոկրատիայի ջատագովներ», իսկ իրականում... նորմալ է, արդյոք. ԱՄՆ-ի կոնգրեսում չկա և ոչ մի բանվոր: Կոնգրեսի 535 անդամից 243-ը իրավաբաններ են, 104-ը՝ բիզնեսմեններ, 47-ը՝ կրթության սիստեմի աշխատողներ, 30-ը՝ պետական ծառայողներ, 25-ը՝ ֆերմերներ, 18-ը՝ ժուռնալիստներ:

Այսպես, ուրեմն, թվերի և փաստերի տեղին օգտագործումը հոետորական խոսքի անբաժան մասն է և, ինչպես ասացինք, նպաստում է ասածի, մտքի բացահայտմանը: Այդ առումով դասա-

խոսին, պրոպագանդիստին, ագիտատորին շատ բանով օգտակար կարող է լինել նաև «ՍՍՀՄ-ը թվերում» ամենամյա վիճակագրական ժողովածուն, որը բովանդակում է հարուստ տվյալներ մեր երկրի տնտեսական և սոցիալական վարճացման մասին: Այստեղ պետեղված են նաև մյուս սոցիալիստական երկրների էկոնոմիկայի և կուլտուրայի վարճացումը բնութագրող որոշ տեղեկություններ: Իսկ մի շարք ցուցանիշներ համադրված են կապիտալիստական երկրների ցուցանիշների հետ:

Մի խոսքով, դասախոսը, պրոպագանդիստը պետք է ամեն ինչ անեն իրենց ելույթը գրավիչ և հասանելի դարձնելու համար:

Ելույթի վրա, անշուշտ, պատշաճ ներգործություն կունենան, եթե, օրինակ, տեղին օգտագործվեն նաև հետևյալ հետաքրքրաշարժ տրվյալները:

— թղթի մասին առաջին հիշատակությունը եղել է մ. թ. 12 թվականին, իսկ 76 թվականից թուղթն օգտագործվել է գիրք պատարաստելու համար: Հայաստանում թուղթն օգտագործվել է VIII—IX դդ.:

— ռուսերեն առաջին գիրքը լույս է տեսել 1564-ին, ուկրաիներենը՝ 1574-ին, բելոռուսերենը՝ 1517-ին, ուկրեկերենը՝ 1871-ին, վրացերենը՝ 1629-ին, ադրբեջաներենը՝ 1825-ին, լիտվերենը՝ 1499-ին, հայերենը՝ 1512-ին:

— գրողներից ամենաբեղմնավորը եղել է Լոպե Դե Վեգան: Նա ոտանավորներ սկսել է հո-

րինել 5 տարեկանից: Նա գրել է 1800 պիես, բոլորն էլ չափածո: Մի պիեսը նա ավարտել է մեծ մասամբ 24 ժամում:

— 37 տարեկան հասակում իրենց մահկանացուն են կնքել իտալացի մեծ նկարիչ Ռաֆայելը, անգլիացի մեծ բանաստեղծ Ջորջ Բայրոնը, ռուսական պոեզիայի պարծանք Ալեքսանդր Պուշկինը, հայ մեծ գրող և հեղափոխական դեմոկրատ Միքայել Նալբանդյանը, ֆրանսիացի ակադմիկոս Բանաստեղծ Արթուր Ռեմբոն, սովետական մեծ բանաստեղծ Վլադիմիր Մայակովսկին...

— ամենաերկար նախադասությունը Վիկտոր Հյուգոյի «Թշվառներ» վեպում է. այն կազմված է 823 բառից, որոնք միմյանցից բաժանված են 93 ստորակետով, 57 կետով և 5 գծիկով:

— ամենափոքր բանակն աշխարհում Սան-Մարինո պետության բանակն է՝ կազմված 11 մարդուց:

— Ճապոնիայի ազգային հիմնը աշխարհում ամենահինն է: Նրա տեքստը գրվել է IX դարում և բաղկացած է չորս տողից: Ամենաերկարը Հունաստանի ազգային հիմնն է, որը բաղկացած է 158 բառատողից:

— ամեն տարի աշխարհում ծնվում է 180 միլիոն մարդ, մահանում է 53 միլիոն: Մեկ օրում ծնվում է 200.000, մեկ ժամում՝ 8.000, մեկ րոպեում՝ 130, մեկ վայրկյանում՝ 2 մարդ:

Կամ այսպիսի ավարձալի մեջբերումներ.

— ամենաերկար ճառն արտասանել է ամերիկյան սենատոր Ռալֆ Ջեսկին:

Նա իր ճառն սկսել է 1968 թվականի ապրիլի 3-ի կեսօրին և ավարտել ապրիլի 5-ի առավոտյան Ժ. Յ-ին: Եվ ելույթի թեման եղել է այն նախագծի քննադատությունը, որը վերաբերում էր ակնոցների համար վճարելու կարգին:

Սակայն բանը միայն թվերը, փաստերը և տրվյալները մեջբերելը չէ. բանն ունկնդիրների ուշադրությունը դրանց գնահատման վրա կենտրոնացնելն է, այնպես, որ դրանք ինքնուրույն մտածելու, դատելու, խորհելու առիթ տան, կարծիքներ փոխանակելու, արտահայտվելու ցանկություն առաջացնեն:

Հաճախ հարցնում են. ինչպե՞ս է գերադասելի խոսել՝ գրավոր, թե բանավոր: Այստեղ որոշակի դեղատոմս առաջարկել չի կարելի: Նայած թե ում առջև ես հանդես գալիս, ինչ թեմայով, ինչ առիթով:

Կան դեպքեր, երբ արդարացվում է գրավոր խոսքը: Միանգամայն պատճառաբանվում է, երբ, ասենք, սկզբնական կուսկազմակերպության բյուրոյի քարտուղարը, կուսակցության շրջկոմի քարտուղարը հաշվետու զեկուցումը ներկայացնում են գրավոր, որովհետև այն ոչ թե իրենց անձնական, այլ կոլեկտիվի՝ կուսկազմակերպու-

թյան բյուրոյի, շրջկոմի բյուրոյի կարծիքն է: Ցանկալի չէ այլ կերպ, քան գրավոր հանդես գալ քաղաքական կամպանիաների առիթով, ինչպես նաև այս կամ այն տեսական և գիտական հարցի շուրջը ելույթ ունենալիս, երբ հարկավոր է լիակատար ճշգրտություն և այլն:

Ինչպես Ցիցերոնն է ասել անձնական փորձից ելնելով, «Գրիչն ամենալավ ուսուցիչն է»: Արժե մեջ բերել նաև Հնդկաստանի գրականության ակադեմիայի պրեզիդենտ Ումուշանկար Դժոդի հետևյալ միտքը. «Մենք հաճախ կրկնում ենք, թե գրիչը սրից ուժեղ է: Դրա իմաստն այն է, որ սուրը կտրում է, հատում, սպանում, իսկ գրիչը համոզում է, միավորում, ստեղծում»:

Գրավոր տեքստը բանավոր խոսքը կազմակերպում է, դարձնում մարդկային մարմնի պես կատարյալ: Դեմոսթենեսն, օրինակ, որպես կանոն գրում էր իր ճառերը:

Սակայն բանավոր խոսքը աշխույժ, կենդանի խոսք է, որը հնարավորություն է տալիս ավելի ազատ ու անկաշկանդ ձևակերպել մտքերն ու դարձվածքները, անմիջապես կապ ստեղծել խոսողի և լսարանի միջև: Ամենևին էլ ցանկալի չէ, երբ մեկ-երկու նախադասություն ասելիս դիմում են հուշաթղթի օգնությանը կամ, աչքերը չկտրելով իր առջև դրված թղթի կտորից, հայտնում հանդիսավոր նիստում, ժողովում հանդես եկողի անունը, ազգանունը, և պաշտոնը:

Ահա թե մի առիթով «Պրավդայում» ինչ է պատմում գրող Յուրի Գրիբովը:

«Հիշում եմ, թե ինչպես մի փոքրիկ քաղաքում տիեզերագնացին հյուր էին սպասում: Այդ իրադարձության մասին ես իմացա կուսակցության շրջկոմում, որտեղ վաղ առավոտից ինչ-որ լարվածություն էր տիրում:

— Տղաներ, բանն ինչո՞ւմն է: Հետաքրքրվեցի ինձ ծանոթ երիտասարդ հրահանգիչներից, որոնք, խիստ մտահոգված, կաբինետից կաբինետ էին վազվզում:

— Ողջույն ենք պատրաստում, ճառ... երկու ժամ է մնացել... ամեն մի բաժնից թանձրուկ մտքեր ենք հավաքում և թվական տվյալներ...

Ճաշից հետո հրապարակում ժողովուրդ էր հավաքվել, հիմնականում երիտասարդներ և դպրոցականներ: Արևավառ, համակրելի տիեզերագնացը ժպտաց և թափահարեց ձեռքը: Նա կանգնած էր շրջկոմի քարտուղարի կողքին, որը գրպանից հանեց թղթերի էջերը: Քարտուղարը, հավանաբար, չէր հասցրել նախօրոք ելույթի տեքստը նայել, և հիմա թռչկոտում էր տեքստի վրա, կարդում էր անվարժ՝ թույլ տալով շեշտի և բառերի սխալներ: Նրա փոխարեն անհարմարության զգացում էի ապրում: Եվ ինչի՞ էր պետ այդ հանպատրաստից «մտքերի թանձրուկը» Ողջագուրվեր տիեզերագնացի հետ, ասեր պարզ, սրտառուչ բառեր» և...

Բանավոր խոսքը կենդանի հաղորդակցման տարատեսակ է, երբ խոսողի և լսողի միջև չկա տարածական պատնեշ: Այն հնարավորություն է տալիս մտքերի և զգացմունքների նրբագույն

երանգներն անմիջականորեն հաղորդելու ունկընդիրներին, մի բան, որ հաճախ տպագիր խոսքի ուժից վեր է:

Բանավոր խոսք... Դու կանգնած ես մարդկանց դեմ-դիմաց, «երես առ երես», նրանք հայացքներով թափանցում են քո ներքնաշխարհը և քո խոսքը, նրանց քեզ ենթարկելը՝ քո նպատակն է:

Ցանկալի է, որ ամեն ոք կարողանա լսարանի հետ ազատ և անկաշկանդ շփման մեջ մտնել: Ամեն ոք, իսկ կուսակցական աշխատողի, և ընդհանրապես, ենթականեր ունեցող ղեկավարի համար դա շատ կարևոր է: Դա պարզապես ինքը կյանքն է, դա նրա հացն է: Եվ ոչ թե գրասենյակային խոսքը, ուրիշի խոսքը, այլ իր սեփականը, հոգուց բխած, սրտով շերմացած խոսքը:

Եվ, վերջապես, բանավոր խոսքն աշխատողի բանիմացության, խելամտության չափանիշն է: Իվուր չէ, որ Պետրոս Առաջինը 1722 թվականին հատուկ հրահանգով պարտադրում է, որ սենատորները ճառն արտասանեն ոչ թե գրված տեքստըն ընթերցելով, այլ բանավոր: Եվ դա անում էր, որպեսզի յուրաքանչյուրի խելամտության չափըն իմացվեր:

Բոլոր դեպքերում վճռողը դասախոսն է: Եթե խնդիրը լիներ միայն որոշակի ինֆորմացիա տալը, ապա կարելի կլիներ «յուլա գնալ» առանց դրա, մարդկանց տալով ելույթի տպագրված տեքստը կամ մագնիտոֆոնային ձայնագրություն:

նը: Բայց ինչպես որ ճարտարապետի լավ մտահղացումը ցանկալի արդյունք չի տա առանց շինարարի վարպետության, այնպես էլ ելույթի, դասախոսության նույնիսկ ամենալավ տեքստը չի կարող տեղ հասնել, մարդկանց մեջ ստեղծել որոշակի տրամադրություն, նրանց խանդավառել, համոզել և իր ետևից տանել առանց նյութի մատուցման դասախոսի վարպետության:

Իսկապես, ինչո՞ւ մեկի դասախոսությունը տպավորություն է թողնում, մյուսինը՝ ոչ: Մեկի խոսքն արտահայտվում է ավզու և տպավորիչ՝ լսողի ուշադրությունը գրավելով, իսկ մեկ ուրիշինը՝ անհույս ու միալար, և լսողը մնում է անտարբեր: Ո՞րն է գաղտնիքը: Այն, որ խոսքի իմաստը կախված է ոչ միայն նրանից, թե ինչ է ասվում, այլև նրանից, թե ինչպես է ասվում:

«Բանը ոչ թե խոսքի մեջ է, այլ այն երանգի, որով արտասանվում է այդ խոսքը» — ասել է Վ. Գ. Բելինսկին:

Այստեղից էլ շատ կարևոր են դասախոսությունը կարդալու **տեխնիկայի** որոշ հարցեր՝ **ինտոնացիան՝ հնչերանգը, շարադրման տեմպը, ժեստն ու միմիկան:**

Դասախոսի, պրոպագանդիստի, ագիտատորի, դերասանի, հաղորդավարի հաջողության շատ կարևոր պայմանն ուժեղ և հնչուն ձայնն է, որը լսվի լսարանների և դահլիճների ամենահեռավոր անկյուններում:

Ձայնը լսարանի վրա հոետորի ավզեցության գլխավոր միջոցն է և բնորոշվում է տեմբրի ուժով,

բարձրությամբ, մեղեդային հնչեղությամբ ու երանգներով:

Հիրավի, բանավոր խոսքում շատ կարևոր է բառն արտահայտելու ձևը, եղանակը: Եվ որքան մաքուր, հստակ ու պարզ արտասանվեն բառերը, այնքան ասելիքը հասկանալի և ըմբռնելի կլինի լսարանի համար: Թղթին հանձնված բառերը կարող են արտահայտել ամենևին ոչ այն բոլորը, ինչ պարունակվում է կենդանի խոսքում, որը հաղորդվում է ինտոնացիայով, դադարներով, խոսքի տեմպով, ժեստերով և միմիկայով:

Ձայնը լսարանի վրա ներգործելու հոետորի գլխավոր միջոցն է:

Սովետական գրող Ի. Լ. Անդրոնիկովը նկատել է, որ հասարակ «բարև» բառը կարելի է ասել չարախնդորեն, կցկտուր, սիրալիր, չոր, մոայլորեն, քնքշորեն, անտարբեր, կեղծավորաբար, մեծամտաբար:

Բառի արտահայտության միջոցները շատ-շատ են: Անգլիացի նշանավոր դրամատուրգ Բերնարդ Շոուի կարծիքով «այո» բառն ասելու հիսուն, իսկ «ոչ» բառն ասելու հինգհարյուր ձև կա: «Ոչ» բառը կարող է արտասանվել հանգիստ կամ սպառնալի, չարախնդ կամ վշտալի, ուրախ կամ թախծալի: Ձայնն այդ ժամանակ կարող է հնչել փափուկ կամ կոշտ:

Ինչքան էլ հոետորը շնորհքով լինի և նյութը լավ իմանա, ամեն ինչ չի ստացվի այնպես, ինչպես պետք է, եթե ինտոնացիան պարզ ու հստակ չէ: Որքան էլ լավ լինեն ձայնակաւն տվյալները,

մշակումն, այնուամենայնիվ, անհրաժեշտ է: Ահա թե անտիկ աշխարհի ականավոր հոգևոր Դեմոսթենեսն ինչպես էր համառությամբ հղկում իր հնչերանգը, ձայնը հասցնում պահանջված բարձրության, այնպես, որ վերջին շարքում նստածներն էլ հասկանան նրա ամեն մի խոսքը:

Դեմոսթենեսը բնությունից թուլակազմ էր, հիվանդոտ և նեղ կուրծք ուներ: Նրա մեջ այնքան վորեղ էր հոգևոր դառնալու ցանկությունը, որ համառությամբ և մեծ դժվարությամբ հաղթահարեց իր թոթովախոսությունը և ուսերի ցնցումը:

Պատմում են, որ ձայնը պարզացնելու և թոթովախոսությունը վերացնելու համար նա գնում էր ծովափ, բերանն էր առնում մանր ծովաքարեր և ձգտում էր պարզ ու հասկանալի ձևով արտասանել դժվար բառերն ու դարձվածքները, հեկկամետրով գրված բանաստեղծությունները: Ձայնն ուժեղացնելու, թոթերն ու կուրծքն ամրացնելու համար նա սար էր բարձրանում, ջանալով շնչել դանդաղ և խորը, վուզորդելով արտասանության հետ: Ուսերի ցնցումը վերացնելու համար առաստաղից կախում էր սրեր և ինքը կանգնում նրանց տակ: Երբ խոսելիս նա ականայից ցնցվում էր, սրերը ծակում էին նրա ուսերը. այդպիսով, շնորհիվ իր մեծ ջանասիրության և համառության, նա ավատվեց այդ թերություններից ևս:

Ինտոնացիայի օգնությամբ կարելի է փոխել նախադասությունների ու ֆրազների իմաստը,

դրանց տալով այլ բովանդակություն, այլ երանգ...

...Գյուղացին իր վինվոր որդուց նամակ է ստանում: Անգրագետ է լինում և այն կարդալ է տալիս հարևանին: Զինվորը հորից փող է խընդրում, և նամակի այդ տեղը հարևանը կարդում է այսպես. «Հայրի՛կ, փող չունեմ, փող ուղարկի՛ր»: Հայրը վրդովվում է՝ «Փող է ուլում քիչ է, մի բան էլ հրամայում է»:

Դե՛, ծնողը մնում է ծնող: Նամակը կարդալ է տալիս մեկ ուրիշ հարևանի, որը նամակի վերոհիշյալ տեղը այսպես է կարդում՝ «Հայրի՛կ, փող չունեմ, փող ուղարկի՛ր»: Հայրը սրտաշարժվում է, վրդովմունքն անցնում:

Ահա թե որքան մեծ է արտասանության, հընչերանգի, շեշտադրության նշանակությունը:

Կարևոր գործոն է **խոսքի տեմպը**: Խոսքի տեմպի և ձայներանգի փոփոխման միջոցով դասախոսը հնարավորություն ունի ուժեղացնել ունկնդիրների ուշադրությունն իր ելույթի առավել կարևոր դրույթների նկատմամբ:

Մարդիկ սովորաբար խոսում են մեկ ընդմիջում հարյուրքսան-հարյուրքսառասուն բառ արագությամբ: Դասախոսություններն իբրև կանոն կարգացվում են ավելի դանդաղ՝ մոտ հարյուր բառ արագությամբ:

Ամբողջ ելույթը չի կարող նույն կերպով ընթանալ: Հիմնական մտքերը, ելրակացությունները հարկավոր է արտասանել դանդաղ տեմպով, շեշտված: Վատ տպավորություն է թողնում ինչ-

պես չափազանց բարձր, այնպես էլ չափազանց ցածր ձայնով խոսելը:

Չափազանց դանդաղ տեմպը, արտասանվող բառերի միջև եղած չափից ավելի դադարները հոգնեցնում են լսողներին: Հատկապես ձանձրալի և տհաճ են այսպես կոչված «դատարկությունները»՝ ամեն տեսակի «հըմ»-երն ու «ըհը»-ները:

Իսկ խոսքի չափից ավելի արագ տեմպն էլ ունկնդիրներին հնարավորություն չի տալիս ընկալել ասածը, խորհել, մտածել ասածի մասին:

Հայ միջնադարյան խրատներից մեկն ասում է՝ «...խոսքը գոհարի է նման... շտապելով մի խոսիր, բարկությամբ ու լալկան դեմքով մի խոսիր, այլ, եթե ուզում ես, որ խոսքդ անցնի, մեղմորեն ու ժպտուն դեմքով խոսիր»: Կարևոր են խոսողի ձայնի բարձրացումն ու ցածրացումը, բացականչությունները: Պետք չէ բղավել: Ձայնը պետք է հարմարեցնել դահլիճին, ունկնդիրների քանակին: Չափից ավելի բարձր, ճղճղան ձայնը հոգնեցնում, տհաճ ազդեցություն է գործում լսողության վրա: Հարկավոր է տիրապետել իր ձայնին:

Ինչպես ասացինք, խոսքի տեխնիկայի տարրերից են նաև ժեստն ու միմիկան՝ բառերի արտասանության հետ դեմքի արտահայտության և մարմնաշարժության զուգակցումը: Դա ուժեղացնում է խոսքի հուզականությունը, արտահայտած գաղափարի տպավորությունը, գրավում լսարանի ուշադրությունը:

Այո՛, ամբիոնի մոտ չի կարելի անշարժ ու

անտարբեր, ցրված հայացքով և քարացած դեմքով կանգնել. հնարավոր չէ խոսել ոգևորված ու համոզված առանց ձեռքերի, գլխի, ուսերի, ոտքերի, մարմնի՝ խոսքին՝ համաչափ շարժումների, որոնք ընդգծում են նրա արտահայտիչ տեղերը:

Հին բուլղարի Դավիթ Սուլիաշվիլին, որը շատ անգամ է տեսել և լսել Վլադիմիր Իլյիչին, վերհիշում է... Լենինը «Ճառի ժամանակ առաջ էր հակվում: Ձեռքերն ամբողջ ժամանակ շարժման մեջ էին: Աջ ձեռքը մերթ բռնոնցք էր կապմում, մերթ բացվելով, վեր էր խոյանում և այդ շարժման մեջ զգացվում էր հաստատ հավատն իր ճշմարտացիության նկատմամբ»:

Միաժամանակ չի կարելի չարաշահել ժեստը և բոլոր ֆրազներն ընդգծել մարմնաշարժումով, վազվզել բեմում: Ժեստիկուլյացիան պետք է լինի տեղին, ոչ անընդմեջ, ինչպես նաև չի կարելի միևնույն ժեստն օգտագործել բոլոր դեպքերում:

Հարկավոր է զգույշ լինել. լսարանի կողմից ոչ մի բան աննկատ չի մնում: Ամենափոքր անզուշությունն անգամ ռեակցիա է առաջացնում: Ե. Ադամովի «Պրոպագանդիստի խոսքի կուլտուրան» գրքույկում կարդում ենք այսպիսի մի դեպքի մասին: Պրոպագանդիստներից մեկը ելույթ ունենալով և, ըստ երևույթին, դատապարտելով աշխատանքից խուսափողներին, պորտաբույծներին և ձրիակերներին, արտասանում է այսպիսի մի նախադասություն. «Պորտաբույծներըն ու լողերն անհանդուրժելի են կոմունիստ

կառուցող հասարակարգում», ընդ որում ցուցամատն ուղղելով լսարանին:

Երբ պրոպագանդիստն ավարտում է խոսքը, նրան է դիմում ունկնդիրներից մեկը և վրդովված հարցնում՝ «Իսկ Դուք ի՞նչ իրավունքով հրապարակայնորեն ինձ պորտաբույծ անվանեցիք»: Իսկ երբ պրոպագանդիստը վարմանք է հայտնում, ունկնդիրը բացատրում է. «Այո՛, այդ ինչպես Դուք բոլորի ներկայությամբ մատն ուղղեցիք ինձ և ասացիք, որ այդպիսի պորտաբույծներ մեր հասարակարգում անհանդուրժելի են»:

Ուրեմն, ինչպես Ցիցերոնն է ասել, «...հոետորը պետք է տակտ պահպանի ոչ միայն բովանդակության, այլև արտահայտությունների մեջ: Ամեն մի հասարակական դիրքի համար չէ, ամեն մի պաշտոնի համար չէ, մարդու ավոցեցության ամեն մի տեղի և պահի ու լսողի համար չէ, որ հարմար է միևնույն ոճը: Բայց խոսքի ամեն մի մասում, ինչպես որ կյանքում, պետք է միշտ նկատի ունենալ, թե ինչն է տեղին. սա կախված է թե այն գործի էությունից, ինչի մասին խոսվում է, և թե անձանցից՝ ինչպես խոսողից, այնպես էլ լսողից» (Об ораторском искусстве, стр. 35):

Դասախոսություն կարդալու հետ կապված ուրիշ «մանրուքներ» էլ կան: Շատ կարևոր է, թե ինչպես, ինչ տրամադրությամբ ես լսարան մտնում, ինչպես ես կանգնում ամբիոնի առաջ, ամբիոնը համապատասխանում է քո հասակին, լուսավորությունը հարմար է տեսողությանդ, ինչպիսին է դահլիճը:

Դահլիճը շուքի համար չէ: Դահլիճը պետք է տրամադրի խոսողին: Ի՞նչ է հարկավոր: Ամենից առաջ հարկավոր է, որ դահլիճի չափը, ինչքան հնարավոր է. համապատասխանի ունկնդիրների թվին: Իսկ երբ դահլիճը բավմամբող չէ և դատարկ տեղեր կան, ապա նպատակահարմար կլինի վերջում նստածներին հրավիրել տեղեր գրավելու առաջին շարքերում: Դահլիճի հավաք լինելը կարևոր է: Ավելի լավ է փոքր դահլիճ՝ լիքն ունկնդիրներով, քան մեծ դահլիճ՝ դատարկ նստարաններով: Չարժե, այնուհետև, դասախոսությունը, զեկուցումն անցկացնել նեղ, հեղձուցիչ, ծանրացած օդով հագեցված շենքում, գործարանի աղմկոտ ցեխերում: Սակայն եթե պահանջվում է, եթե ուրիշ հնարավորություն չկա, դասախոսը պետք է հանդես գա ցանկացած շենքում, ցանկացած պայմաններում: Այստեղ էլ սովետական հոետորի համար ուսանելի է Վ. Ի. Լենինի օրինակը, որը ոգեշունչ զեկուցումով, ճառով, ելույթով հանդես էր գալիս ամենուրեք՝ համագումարում և գործարանային ցեխում, պինվորական պորանոցում և մերձքաղաքային կայարանային հրապարակում ցանկացած պայմաններում: Հայտնի է, օրինակ, Վ. Ի. Լենինի 1917 թվականի ապրիլի 3-ի պատմական ճառը, որ նա արտասանեց պահապատի աշտարակից և որտեղից հնչեց պատմական լույունզը՝ «Կեցցե՛ սոցիալիստական հեղափոխությունը»:

Դահլիճի բեմն էլ նշանակություն ունի: Բեմում, ամբիոնի հետևում չպետք է լինի ավելորդ

ոչ մի բան, որը կշեղեր լսարանի ուշադրությունը: Զեկուցման, ելույթի ժամանակ ինչքան քիչ մարդիկ նստած լինեն նախագահության սեղանի շուրջը՝ այնքան լավ:

Կան էլի, առաջին հայացքից թվացող մանրուքներ, որոնք չեն կարող բացասաբար չազդել դասախոսության, ելույթի վրա:

Լինում է, օրինակ, այսպես. դասախոսությունը դեռ չսկսված, դասախոսություն վարողը բարձրաձայն դիմում է դահլիճին, ասելով. «Խնդրվում է ուշադրությամբ լսել, հետաքրքիր դասախոսություն է»: Այդ կոչը ամենևին էլ դասախոսի օգտին՝ չէ: Այդ կարգի կոչերը պետք չեն նույնիսկ այն դեպքում, երբ լսարանում դեռ կատարյալ լռություն չկա: Լռությունը պետք է հաստատի ինքը՝ դասախոսը: Իսկ թե ինչպես, արդեն ասել ենք:

Մանրուք չէ նաև դասախոսին ներկայացնելը:

Հիշում եմ. տարիներ առաջ մասնակցում էի շրջաններից մեկի կուսակցական ակտիվի ժողովին, որը քննարկում էր գաղափարախոսական աշխատանքի հարց: Շրջկոմի քարտուղարի պեկուցումից հետո ելույթներ եղան, և երբ հերթը հասավ ինձ, ժողովը դեկավարողն անունս դարձնելով ազգանուն, հայտարարեց, թե խոսքը տրվում է ընկեր Հովհաննիսյանին: Դահլիճում ծիծաղեցին. նախագահն իսկույն գլխի ընկավ, որ շփոթել է և վատ զգաց: Ես էլ, խոստովանում եմ, անհարմար պահ ապրեցի: Եկեք ընդունենք, որ այդպիսի, թեկուզև փոքր, շփոթմունքը չի

կարող չազդել ելույթ ունեցողի տրամադրության վրա: Կամ դասախոսությունն սկսվել է, բայց դռները ճոռալով բացվում են և ուշացածները խմբերով ներս են խուժում: Դահլիճի լռությունը խախտվում է, դասախոսությունն ընդհատվում է, դասախոսի մտքի թելը կտրվում է:

Իսկական հոետորը էմոցիոնալ մարդ է, և այդ կարգի մանրուքները չեն կարող իրենց բացասական ազդեցությունը չթողնել ելույթի վրա:

ՀՈՒՏՈՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Ամենից առաջ այն մասին, թե ո՞ւմ ենք համարում հոետոր:

Հոետորը պերճախոս մարդ է, որը տիրապետում է լայն հասարակայնության առջև հանդես գալու վարպետությանը, որի խոսքը բովանդակալից է, ներդաշնակ և գեղեցիկ, որը կարողանում է դժվարին հարցերի, ժողովրդի սրտին մոտ բաների մասին խոսել վառ ու պատկերավոր, հասկանալի ու մատչելի, լսարանը վարակում է որոշակի տրամադրությամբ, որոշակի էմոցիայով, ոգևորում կամ հուզմունք պատճառում ունկընդիրներին, նրանց մղում պրակտիկ գործողությունների:

Զաղաքական հոետորի կերպսրը սկզբից ևեթ կազմավորվել է որոշակի հասարակական պայմանների, օբյեկտիվ հանգամանքների ազդեցու-

թյան տակ, որոնք էլ հենց իր դարաշրջանին համապատասխան ձևավորել են հոետորի սոցիալական տիպարը: Հոետորի կենդանի, համոզիչ ու գրավիչ խոսքը մարդկության պատմության, քաղաքական, հասարակական հարաբերությունների բոլոր ժամանակներում հսկայական դեր է խաղացել, հանդիսացել է հզոր պենք ժողովուրդների և պետությունների ներքին ու արտաքին հարաբերությունների կազմավորման գործում:

Հոետորը ստեղծագործաբար մտածող մարդ է, ընդունակ ոչ միայն մեկնաբանել, պարզաբանել հանրահայտ իրադարձություններ, այլև խորապես վերլուծել դրանք և հասկանալի դարձնել լսարանին:

Հոետորական կադրերը՝ դասախոսը, պրոպագանդիստը, ազիտատորը, սեմինարավարն են ամենից առաջ տոն և ուղղություն տալիս գաղափարախոսական աշխատանքին: «Քաղաքական և, տնտեսագիտական ուսուցման հաջողությունները հիմնականում կախված են պրոպագանդիստական կադրերի տեսական և մեթոդական մակարդակից»՝ ընդգծված է «Գաղափարախոսական, քաղաքական-դաստիարակչական աշխատանքի հետագա բարելավման մասին» ՄՄԿԿ Կենտկոմի 1979 թ. որոշման մեջ:

Սովետական քաղաքական հոետորին բնորոշըն անբասիր կուսակցականությունն է, մարքսիստական լենինյան բարձր պատրաստականությունը, կոմունիստական համոզվածությունը,

կուսակցության քաղաքականության խոր իմացությունը, հանձնարարված գործի նկատմամբ պատասխանատվության բարձր պգացումը, կուսակցության գործին, կոմունիստական գաղափարներին, սոցիալիստական հայրենիքին անձնուրաց նվիրվածությունը:

Շարունակենք մեր միտքը հոետորի մասին: Հոետորը պետք է լինի վառվռուն, ինքնատիպ, ոչ ստանդարտ մտածելակերպ ունեցող մարդ, տիրապետի նորի պզգմանը, ընդունակ՝ ժամանակին և սրությամբ դնելու օրվա հրատապ պրոբլեմները:

Հրապարակախոսական վարպետություն՝ գաղափարական-բարոյական վեհ հատկանիշների կուզակցմամբ՝ ահա թե ինչպիսի հատկություններով պետք է օժտված լինի հոետորը: Ցիցերոնն ասել է. «Ճարտարախոս կարելի է համարել նրան, ով խոսելով... կարողանում է ապացուցել, հմայել և համոզել: Ապացուցելն անհրաժեշտ է, հմայելը՝ դուրեկան, համոզելը՝ դեպի հաղթանակ տանող ուղին»: (Цицерон М. Т., Три трактата об ораторском искусстве. М., 1972 г., стр. 103):

Այնուհետև, նա գտնում էր, որ «հոետորը պետք է ունենա դիալեկտիկի սրամտություն, փիլիսոփայի մտքեր, գրեթե բանաստեղծի՝ բառապաշար, օրինակելի հիշողություն, ողբերգուի ձայն, այնպիսի խաղ, ինչպես լավագույն դերասանները» (նույն տեղը, էջ 100):

Իսկական հոետորը նա է, ով իր խոսքով սովորեցնում է ունկնդիրներին, բավականություն է պատճառում և ուժեղ տպավորություն գործում նրանց վրա, ով հանդես է գալիս որպես ունկնդրի բարի խորհրդատու, բարեկամ ու ընկեր, լավագույն ուղեկից ու կրուցակից, ունկնդրի հետ խոսում է պարզ ու հասկանալի լեզվով, սրտաբաց ու բնական, այնպես, որ ասածը թափանցի մարդկանց սրտի խորքը, ունկնդիրը հավատա նրան, ճանաչի նրան, զգա նրան: Վերջապես հոետորը պետք է օգնի մարդուն հասարակության մեջ գտնելու իր կոչումը, կյանքում՝ իր տեղը:

Հոետորի հրապարակային ելույթը պետք է գրավի և համուկի կյանքի մեջ ներթափանցելու խորությամբ, փաստերի հիմնավորվածությամբ, մտքի և խոսքի թարմությամբ, մեր հասարակությունը կառուցողին, մեր ժամանակի իսկական հերոսին լայնորեն պրոպագանդելու և փառաբանելու հմտությամբ:

Պլատոնը հոետորին համեմատում է բժշկի հետ, գտնելով, որ վերջինս բուժում է մարդու ֆիզիկականը, իսկ հոետորը՝ հոգեկանը:

Ռուս մեծ գիտնական Մ. Վ. Լոմոնոսովը հետևյալ հինգ հատկանիշներն է նշում, որոնք պետք է պարտադիր լինեն հոետորի համար: Առաջին՝ հոգևոր և մարմնական բնածին ընդունակություններ. սրամտություն, հիշողություն, թավ ու դուրեկան ձայն, ճշգրիտ արտասանություն, հաճելի կեցվածք: Երկրորդ՝ հոետորական արվեստի

պատմության և տեսության իմացություն: Երրորդ՝ ճարտասանություն, կուտակված ավանդույթների կրկնություն և ստեղծագործական զգացում: Չորրորդ՝ համառ աշխատանք, վարժություններ: Հինգերորդ՝ լայն կրթություն, հարուստ գիտելիքներ, հարակից գիտությունների իմացություն:

Սովետական հոետորի համար դրանք լավ խորհուրդներ են նաև այսօր: Հոետորի, որը ոչ միայն լուսավորիչ է, այլև, ամենից առաջ, մարտիկ, մարքսիստ-լենինիստի գաղափարների կրթող պրոպագանդիստ:

Այսպես, ուրեմն, ի՞նչ պահանջներ են ներկայացվում հոետորին:

Գաղափարական դիրքերի հստակություն, տեսական և մասնագիտական բարձր պատրաստվածություն՝ ահա գաղափարախոսական կադրերին՝ դասախոսին, ագիտատորին, պրոպագանդիստին ներկայացվող հիմնական պահանջները: Նրանք պարտավոր են խորը գիտենալ աշխատավորների կոմունիստական դաստիարակության սկզբունքները, մարդկանց բնավորությունն ու հոգեբանությունը, գաղափարախոսական աշխատանքը հմտորեն կուգակցել մեր առջև դրված խնդիրների հետ, ժամանակին նկատել և պաշտպանել ամեն նորը, առաջավորը, պայքարել խորթ հայացքների և բարքերի դրսևորումների, հնամուլության, պահպանողականության և մանրբուրժուական սպառողական հոգեբանության դեմ:

Այսպիսով, խոսքը գնում է մեր սոցիալիստական հասարակության մեջ նոր մարդու դաստիարակության գործում հոնտորի խաղացած դերի, նրա քաղաքացիական պարտքի կատարման մասին:

Ո՞րն է հոնտորի աշխատանքի չափանիշը: Հոնտորի աշխատանքի ամենաճիշտ չափանիշն այն ներգործության իրական աստիճանն է, որ նրա ելույթներն ունենում են ժողովրդի գաղափարաբարոյական նկարագրի ձևավորման վրա, հասարակական գիտակցության, հասարակության հոգևոր կյանքի վրա:

Իսկ ինչպե՞ս հասնել դրան: Որո՞նք են հոնտորի հաջողության պայմանները:

Հոնտորի հաջողության, ունկնդիրների վրա նրա ելույթների ազդեցության և արդյունավետության հիմնական պայմանը **բանիմացությունն է, նյութին կատարելապես տիրապետելը:**

Նյութին տիրապետել, նշանակում է խորը, բազմակողմանիորեն իմանալ ասելիքը, այն, ինչին նվիրված է ելույթը, ավելի լավ, քան ունկընդիրները, իմանալ առարկան, որի մասին խոսում ես: Այլապես հնարավոր չէ համարձակորեն հանդես գալ լսարանի առջև, ունկնդիրներին հաղորդել նոր մտքեր, նոր պզգամունքներ, նոր տրամադրություններ, այլապես արդյունքում կստացվի միապաղաղ, ձանձրալի, տաղտկալի ելույթ, փաստերի սոսկ անկիրք արձանագրություն, որը չի կարող «չքնեցնել» լսարանը:

Այո՛, հոնտորի ասածը տեղ չի հասնի, նպատակին չի ծառայի, եթե նա կատարելապես չի տիրապետում այն առարկային, որի մասին ուլում է խոսել: Խոսքը պետք է բխի ու վարզանա առարկայի, ասելիքի, նյութի իմացությունից:

Սակայն ինչքան էլ դասախոսը լավ տիրապետի նյութին, այն ցանկացած արդյունքը չի տա, եթե նա հանգամանորեն չնախապատրաստվի ամեն մի ելույթի: Կարլ Մարքսի նման հանձարեղ մարդը նախքան հասարակության առջև հանդես գալը մինչև վերջ, մանրամասն մշակում և ուսումնասիրում էր ասելիքը:

Այդպիսին էր նաև Վ. Ի. Լենինը: Ահա թե ինչ է պատմում Դեմյան Բեդնին. «Մի անգամ Իլիչը պետք է փոքր ձառով հանդես գար Մոսկվայի երկու հրապարակում՝ այդ հրապարակներում հեղափոխական հուշարձաններ կանգնեցնելու կապակցությամբ: Մի ձառի թեման էր «Մարքսը և Էնգելսը», մյուսինը՝ «Փարիզի կոմունան»: Ի՞նչ եք կարծում. Վլադիմիր Իլիչը չգիտե՞ր ինչ ասել Մարքսի և Էնգելսի մասին, կամ Փարիզի կոմունայի մասին: Եվ, բայց և այնպես, մինչև հրապարակներում մասսաների առջև հանդես գալը նա ինչպիսի՞ բարեխղճությամբ և հանգամանորեն էր պատրաստում այն երկու ձառերի կոնսպեկտները: Ահա թե ինչ է նշանակում սիրել և հարգել իր ունկնդիրներին» (Քաղվածքը մեջ է բերված **Ножин Е. А.** «Основы советского ораторского искусства» գրքից, էջ 54):

Վերջապես, հոետորը միշտ պետք է հիշի մի անխախտ ճշմարտություն՝ հանուն ինչի է ինքը խոսում: Լավ և գեղեցիկ պետք է խոսել ոչ թե սոսկ հոետորական հաջողության համար, այլ հանուն բարձր նպատակի, հանուն այն բանի, որպեսզի գրավես մարդկանց, նրանց կոչ անես լավ և բարի գործերի:

Իսկ դրա համար անհրաժեշտ է, որ հոետորը սեփական մտքերը հստակ և կուռ շարադրելու, լսարանին իր հայացքների ճշմարտության մեջ համոզելու, ունկնդիրների հետաքրքրությունը մեծացնելու, նրանց սիրտը գրավելու կարողություն ունենա, հիմնովին տիրապետի հոետորական արվեստի հիմունքներին:

Հոետորին ներկայացվող շատ կարևոր պահանջ են **անկեղծությունն ու շիտակությունը**: Մարդու ամենամեծ արժանիքն անկեղծությունն է, շիտակությունը: Անկեղծ լինել ուրիշների հետ, ինքդ քեզ հետ: Երբ ուզում են մեկի բնավորության առավել լավ գիծն ընդգծել, ասում են՝ «Ինչ անկեղծ, ինչ ճշմարիտ մարդ է»: Միայն կամքով ուժեղ մարդիկ են ընդունակ անկեղծ ու ճշմարիտ լինել:

Հոետորը, և առհասարակ նա, ով հանդես է գալիս մարդկանց առջև և անկեղծության, ազնվության, ճշմարտության կոչ անում, պետք է ինքն օժտված լինի այդպիսի թանկարժեք հատկություններով: Հոետորը «չի կարող մարդկանց քարոզել այն, ինչ ինքը ժխտում է» (Մ. Գորկի):

Հոետորի մոտ եղած ամեն տեսակ արհեստականությունն ու թատերականությունն անմիջապես նկատելի են դառնում և վատ տպավորություն թողնում ունկնդիրների վրա: Վերին աստիճանի անկեղծություն՝ ահա հոետորի հաջողության պայմաններից մեկը: Մարդկանց հետ պետք է խոսել ճշմարտության և անկեղծության. անկեղծության և սկզբունքայնության լեզվով:

Դա է դաստիարակության ճշմարիտ ուղին, մեր հասարակության, մեր կուսակցության առողջության գրավականը:

Անկեղծության, սկզբունքայնության կնիքն է դրոշմված Վ. Ի. Լենինի բոլոր հրապարակային ելույթների վրա: Ամերիկյան հրապարակախոս Ալբերտ Ռիս Վիլյամսը պատմում է, թե ինչպես մի անգլիացի հիացել է Լենինի վարմանալի անկեղծությամբ: Անգլիացու հետ հանդիպման ժամանակ Վիլյամսը Իլլիչը նրան անկեղծորեն ասում է. «Անձամբ ես Ձեր դեմ ոչինչ չունեմ: Սակայն քաղաքականապես Դուք իմ հակառակորդն եք, և ես պետք է օգտագործեմ բոլոր միջոցները, որպեսզի Ձեզ պարտության մատնեմ»:

Լենինը պահանջում էր միշտ, բոլոր պարագաներում ասել ճշմարտությունը, ինչքան էլ որ այն դառը լինի:

Հետևելով լենինյան պատգամներին, մեր կուսակցությունն ըստ արժանվույն գնահատելով ձեռք բերած նվաճումները, միաժամանակ իր պարտքն է համարում ժողովրդին ազնվորեն ու շիտակ ասել քաղաքական ու պրակտիկ գործ»

ծունեության մեջ մեր վրիպումների, բացերի ու թերությունների, էկոնոմիկայում և կյանքի բոլոր ոլորտներում եղած աննպաստ միտումների, դրանց պատճառների մասին: Դա կրկին անգամ դրսևորվեց կուսակցության XXVII համագումարում: Այստեղ լիաձայն ասվեց այն մասին, որ... «տարիներ շարունակ, և ոչ միայն օբյեկտիվ գործոնների, այլև ամենից առաջ սուբյեկտիվ կարգի պատճառների բերումով, կուսակցական ու պետական մարմինների պրակտիկ գործողությունները հետ էին մնում ժամանակի, հենց կյանքի պահանջներից: Երկրի վարգազման պրոբլեմներն ավելի արագ էին աճում, քան լուծվում: Իներտությունը, կառավարման ձևերի ու մեթոդների քարացածությունը, աշխատանքում դինամիկ մի պահ իջեցումը, բյուրոկրատիկ մի ուժեղացումը՝ այս ամենը քիչ վնաս չէր հասցնում գործին: Հասարակության կյանքում սկսել էին նկատվել լճացման երևույթներ» (Գորբաչով Մ. Ս., ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի քաղաքական վեկուցումը Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXVII համագումարին, էջ 4—5):

Անկեղծության, ճշմարտության ոգով պետք է սոգորված լինի նաև դասախոսի, պրոպագանդիստի, կուսակցական, պետական աշխատողի ամեն մի ելույթ:

Ճշմարտությունն ամեն ինչից վեր է:

Լենինը գտնում էր, որ «մեր ուժը ճշմարտությունն ասելն է» (Լենին Վ. Ի., ԵԼԺ, հ. 11, էջ 403):

Ճշմարտությունն անելու, տնտեսության մեջ լճացման երևույթները, սոցիալական, հոգևոր ոլորտներում, մարդկանց բարոյական ըմբռնումների ու վարքագծի մեջ եղած վնասակար երեվույթները հմտորեն բացահայտելու մակարդակից է շատ բանով կախված մարդկանց մտքերի ու սրտերի վրա հռետորական խոսքի ներգործության աստիճանը և հեղինակությունը:

Ճշմարտության, քննադատության դերը պետք է պարզ պատկերացնի և հստակ գիտակցի հռետորը և սովորի այն կատարել լիակատար պատասխանատվությամբ:

Դասախոսի, պրոպագանդիստի պարտքն է, ըստ ամենայնի պրոպագանդելով կյանքի բոլոր ասպարեպներում մեր երկրի ձեռք բերած նվաճումները, միաժամանակ համարձակորեն ասել մեր կյանքում դեռևս իրենց պագսնել տվող բացասական երևույթների, մեր աշխատանքներում եղած առկա թերությունների ու բացերի, դժվարությունների և վրիպումների մասին: Եվ այն մասին, թե մեր կուսակցությունը և նրա Կենտրոնական կոմիտեն ինչ են անում դժվարությունները հաղթահարելու, վրիպումները շտկելու, թերությունները վերացնելու և երկրի առջև ծառայած նոր խնդիրները հաջողությամբ լուծելու համար:

Դասախոսն իրավունք չունի հաշտվել անպատասխանատվության, անպահանջկոտության, անտարբերության՝ բարեհոգություն ծնող այդ վնասակար երևույթների հետ: Մի խոսքով, պետք

է քննադատել և խարազանել այն, ինչ արժանի է քննադատելու և խարազանելու:

Դա սախոսին երբեմն հարկ է լինում գործ ունենալ սուր, նույնիսկ պրովոկացիոն հարցերի, անբարյա ցական բացականչությունների հետ: Եվ նա իրավունք չունի անցնելու դրանց կողքով, պարզ ու շիտակ չպատասխանելու դրանց:

Հարց տվողին չի կարելի ընդհատել: Պետք է ուշադիր լսել նրան, թույլ տալ, որ նա լրիվ արտահայտվի: Հարցերը պետք է տալ հերթով, այնպես որ կրույցը չվերածվի աղմուկի, խառնաշփոթ վիճակ չստեղծվի:

Հայտնի է, թե Վ. Ի. Լենինը մասսաների հետ հանդիպելիս, իր ելույթներում ինչպիսի համարձակություններ, անկեղծություններ և հնարամտություններ էր պատասխանում հարցերին: Կոմերիտմիության III համագումարում ունեցած ելույթից հետո Լենինը Չեռնիզովի պատգամավորից մի երկտող է ստանում հետևյալ բովանդակությամբ. «Վաղդիմիր Իլյիչ, ասացեք, ինչո՞ւ գյուղում անվաքսուկ չկա»: Հարցը բոլորովին կապ չունեի ելույթի թեմայի հետ և դահլիճում ծիծաղում են: Բայց Լենինը չի ծիծաղում: Նա ասում է, որ հարցն ուղղակի կապ ունի կոմերիտմիության խնդիրների մասին իր զեկուցման հետ: Կոմունիստը, շարունակում է Լենինը, պետք է իմանա, թե ինչու մեզ մոտ անվաքսուկ չկա և պետք է հոգա, որ գյուղացին ունենա այն: Կոմունիստի շահերը չի կարելի բաժանել աշխատավորների էական կարիքներից: «Ցավոտ» հարցերը հարկա-

վոր է չըջանցել, չաթողել, այլ դնել կտրուկ՝ թյուր մեկնություններից խուսափելու համար չուշացնել դրանց պարզաբանումը, չլռել: Ոչինչ այնքան վտանգավոր չէ, ինչքան հարցը լռության մատնելը» (См. Ленинский комсомол, М., Молодая гвардия, 1963, стр. 235—236):

Ահա և մեկ ուրիշ դրվագ Կալինինի պրոպագանդիստական պրակտիկայից: Միխայիլ Իվանովիչը ելույթ է ունենում Իվանովո-Վոսնեսենսկի նահանգի անկուսակցական գյուղացիների կոնֆերանսում: Կոնֆերանսում լինում են մեծ թվով էսեռներ, որոնք ձգտում են, ինչ գնով էլ լինի, վարկաբեկել «համամիութենական ավագին», և ի դեմս նրա՝ սովետական իշխանության քաղաքականությունը: «Ջեկուցումից հետո,— հետագայում վերհիշում է Միխայիլ Իվանովիչը,— ինձ շատ հարցեր տվեցին և դրանց թվում՝ ո՞վ է կարևոր սովետական պետության համար՝ գյուղացին, թե բանվորը: Դրան ես նույնպես հարցով պատասխանեցի՝ ինձ թող ասեն՝ որ ուղքն է կարևոր մարդու համար՝ ա՞ջը, թե՞ ձախը: Պատասխանը դիմավորվեց բուռն ծափահարություններով» (О корреспондентах и корреспонденциях, М., 1945, стр. 245):

Եվ այսպես, ով որևէ բան չի հասկանում և ուզում է հասկանալ ու համոզվել ճշմարտության նկատմամբ, նրան պետք է համբերատարությամբ պարզաբանել, իսկ ով ջուր է պղտորում, պետք է վճռական հակահարված ստանա:

ՍՄԿԿ Կենտկոմը «Գաղափարախոսական, քաղաքական-դաստիարակչական աշխատանքի հետագա բարելավման մասին» 1979 թ. որոշման մեջ դատապարտեց դեռևս հանդիպող վախճ՝ բացահայտորեն քննարկման դնելու մեր կյանքի հրատապ հարցերը, միտումը՝ կոծկելու, շըրջանցելու չլուծված պրոբլեմները, սուր հարցերը, լուռության մատնելու ռեալ կյանքում գոյություն ունեցող թերություններն ու դժվարությունները, մի բան, որ դժվարացնում է մեր առջև դրված խնդիրների լուծումը: «Պետք է կանոն դառնա. աշխատավորներին հուպող ոչ մի հարց անպատասխան չի մնում»՝ ընդգծված է Կենտկոմի որոշման մեջ:

Գաղափարախոսական աշխատանքին ներկայացվող այդ պահանջն ամենայն սրությամբ դրվեց նաև կուսակցության XXVII համագումարում: Համագումարը որոշակի և համոզիչ պատասխան տվեց սովետական մարդկանց հուպող հարցերին, պահանջեց վարկ տալ քննադատությանն ու ինքնաքննադատությանը, լայնորեն ծավալել հրապարակայնությունը հասարակական գործերում, բարձրացնել մասսաների ակտիվությունը:

Դասախոսի, պրոպագանդիստի, ագիտատորի համար չեն կարող լինել կարևոր և ոչ կարևոր հարցեր: Դրանց պատասխան տալը նրանց պարտքն է և պարտականությունը: ՍՄԿԿ Կենտկոմը հիշեցրել և հիշեցնում է, որ հրատապ պրոբլեմների լուսաբանման նկատմամբ ուշադրության

թուլացումը, անբավարար օպերատիվությունը, անպատասխան թողնված հարցերը շահավետ են միայն մեր դասակարգային հակառակորդի համար, վնասում են մեր մարդկանց դաստիարակությանը:

Բոլոր դեպքերում հարցերի պատասխանները պետք է լինեն հիմնավորված, պատճառաբանված, տրամաբանված, այլապես պատասխանը կլինի անհամոզեցուցիչ, վստահություն չի ներշնչի սպատասխանողի նկատմամբ: Հարցերի պատասխաններում պետք է ավելի շատ օգտագործել վիճակագրական պերճախոս տվյալներ, համոզիչ փաստեր, մեջբերումներ՝ հեղինակավոր աղբյուրներից:

Հարցերին կարելի է պատասխանել տարբեր ձևերով: Լինում է, երբ դասախոսը ելույթի ժամանակ գրավոր հարց է ստանում. այդ դեպքում փորձված դասախոսը, աչքի անցկացնելով այն, պատասխանը կարող է տալ հենց ելույթի ընթացքում: Անփորձ դասախոսին խորհուրդ չի տրվում ելույթի պրոցեսում դիմել հարցատուներին: Դա կարող է շեղել ուշադրությունը: Բոլոր դեպքերում, ավարտելով ելույթը, հարկավոր է հարցը (կամ հարցերը) ուշադրությամբ նայել և այնպես անել, որ առավել հաջող պատասխանները տրվեն վերջում: Ցանկալի է հարցատուներին պատասխանել կարճ ու կոնկրետ: Իսկ եթե հարցը լուրջ է և հետաքրքիր բոլորի համար, պետք է ավելի մեծ ուշադրություն նվիրել դրա պատաս-

խանին: Լինում են նաև անձնական բնույթի հարցեր, որոնց հրապարակայնորեն պատասխանել խորհուրդ չի տրվում: Ելույթից հետո դասախոսը հարց տվողին պետք է հրավիրի իր մոտ և ըստ էության պատասխանի նրան:

Վերջապես, պատահում է, որ պարապմունքի ժամանակ պրոպագանդիստին այնպիսի հարց են տալիս, որին տվյալ դեպքում դժվարանում է պատասխանել: Համեստաբար մտածող պրոպագանդիստն այդ դեպքում ասում է. «Գիտե՞ք ինչ, հարցը շատ կարևոր է, բայց ես հիմա պատրաստ չեմ դրան պատասխանելու. պատասխանը կլինի հաջորդ պարապմունքին»: Անհարմարության ոչինչ չկա: Պրոպագանդիստն էլ ամենագետ չէ:

Բայց կան պրոպագանդիստներ, որոնք՝ «հարցը դժվարին է, բայց, այնուամենայնիվ, ուզում եմ պատասխանել» և ինքն էլ չիմանալով, թե ինչ է ասում, տակից դուրս չի գալիս և ընկնում է անհարմար կացության մեջ: Նման ինքսաիրությանը պրոպագանդիստի օգտին չի խոսում: Այդպիսի ինքնագոհ պրոպագանդիստին չեն հարգում: Լավ է չիմանալ և ասել, որ չգիտի, քան թե չիմանալ և ցույց տալ, որ գիտի:

«Ամոթալի և վնասակար չէ չիմանալը: Ոչ-ոք չի կարող ամեն ինչ իմանալ, բայց ամոթալի և վնասակար է ձևանալ, թե գիտես այն, ինչ իրոք չգիտես»՝ խորհուրդ է տվել Լև Նիկոլաևիչ Տոլստոյը:

Այսպիսով, բոլոր դեպքերում խոսքը գնում է

կարդացվող դասախոսությունների որակի և մակարդակի մասին, հոետորի՝ լսարանին անմիջականորեն ուղղված այնպիսի կենդանի, վառ ու կրթոտ խոսքի մասին, որն աշխուժացնելու լսարանը, հուզեր, ոգևորեր և ոգեշնչեր ունկնդիրներին:

Ցավելով պետք է նշել, որ մեր ոչ բոլոր, նույնիսկ փորձված դասախոսների ելույթներն են գրավիչ ու հետաքրքիր, նպաստում լսարանի ակտիվությանը: Այսպես, դասախոսությունը սահմանված ժամին ավարտվում է. թվում է, թե ամեն ինչ լավ է. իսկ իրականում օգուտը քիչ է, որովհետև դասախոսը տվյալ դեպքում իր ֆունկցիան կատարած է համարել միայն նրանով, որ ունկնդիրների առաջ շարադրել է ընդհանուր գիտելիքների գումար, դրանք հագեցնելով զանազան ցիտատներով և մեջբերումներով: Դասախոսը ջանք չի թափել ելույթը գրավիչ ու արտահայտիչ դարձնելու, նյութի մատուցման հետաքրքիր ձևեր գործադրելու համար: Իսկ ձևերը շատ-շատ են:

Ինչու, օրինակ, դասախոսական պրոպագանդայից գրեթե դուրս է մղվել բանավեճը: Իսկ չէ որ դա աշխուժացնում, ակտիվացնում է լսարանը, կոնտակտ ստեղծում դասախոսի և ունկնդիրների միջև: Լենինն անհրաժեշտ և ցանկալի էր համարում բացահայտ բանավեճը, առանց որի, առանց մտքերի փոխանակության հնարավոր չէ կարծիքների պայքար, ինքնուրույն մտածելակերպ և ինքնուրույն մտածողություն:

Միաժամանակ բանավեճերը, այս կամ այն հարցի վերաբերյալ տարաձայնությունները պետք է լինեն ըստ էության, չշեղեն ճիշտ ճանապարհից, չհանգեցնեն անձնական թշնամանքի, հարաբերությունների սառնության և թյուրիմացությունների:

Հապվադեպ և երբեմն էլ ցածր մակարդակով են անցնում ստեղծագործական դիսկուսիաները, տեսական կոնֆերանսները, ընկերական պրուլցները, որոնք մտքեր են արթնացնում, կենդանի շունչ հաղորդում լսարանին:

Եվ այսպես, հարկավոր է աշխատել նորովի, ստեղծագործաբար, իր մեջ հաստատել և արմատավորել նորի սուր պագուում, նոր պահանջների և խնդիրների հստակ ըմբռնում, խորապես պալ ժամանակը, բռնել կյանքի պարկերակը, վճռականորեն հրաժարվել դասախոսական պրոպագանդայի այն ձևերից ու մեթոդներից, որոնք արդեն հնացել, սպառել են իրենց և կաշկանդում են մեր առաջընթացը. հրաժարվել ստերեոտիպերին գերի դառնալուց: Ահա թե ինչ է պահանջվում հոետորից, բոլոր նրանցից, ում հարկ է լինում հանդես գալ մարդկանց առջև:



Հոետորին ներկայացվում են նաև այլ պահանջներ: Ոչ պակաս կարևոր է, օրինակ, հոետորի՝ լսարանին ներկայանալը:

Իսկ մինչ այդ:

Մինչ այդ հոետորը պետք է իրեն նախապատրաստի, տրամադրի ելույթին, խորհի այն մասին, թե ինչպես բեմ բարձրանա, գնա դեպի ունկընդիրը, սկսի ելույթը, խոսի, իրեն ինչպես պահի ամբիոնի առջև և այլն:

Ն. Կ. Կրուպսկայան պատմում է, թե Լենինն ինչպես էր պատրաստվում իր հերթական հրապարակային ելույթին, պեկուցմանը: Երբեմն նա եռանդագին գնում- գալիս էր սենյակում, լարված մտածում և նույնիսկ բարձրաձայն արտասանում ելույթի առանձին տեղեր ու ֆրազներ:

Եթե մտքի տիտան Լենինն էր այդպես վարվում, ապա մենք՝ սովորական ընդունակությունների տեր մարդիկս, առավել ևս պարտավոր ենք այդպես անել:

«Սովետական հոետորական արվեստի հիմունքները» շատ արժեքավոր աշխատության հեղինակ Ե. Ա. Նոժինը հոետորին, նամանավանդ սկսնակին, խորհուրդ է տալիս նախքան ունկընդիրներին երևալը կանգնել հայելու առջև, բարձրաձայն արտասանել ելույթը, վարժվել սեփական ձայնին և խոսքին, շեշտադրությանն ու արտասանության ձևին: Ելույթը կամ նրա մի մասը նախապես ձայնագրել մագինիտոֆոնի վրա և ինքն իրեն լսել:

Եվ ահա հոետորն ունկնդիրների հայացքի տակ մոտենում է ամբիոնին: Յուրաքանչյուրն այդ պահին յուրովի է պահում իրեն. անփորձ հոետորը սովորաբար շտապում է սկսել դասա-

խոսությունը և գիտակցաբար, թե անգիտակցաբար, թաքցնում է հուլամունքը նրանով, որ մապերն է սանրում, կոճկում կամ արձակում պիջակի կոճակները, փողկապն է ուղղում, միկրոֆոնն է տեղից-տեղ դնում, ջուր է լցնում բաժակի մեջ և խմում, կոնսպեկտի էջերն է դասավորում: Փորձված հոետորի մոտ ամեն ինչ ինքնըստինքյան ստացվում է: Նա անմիջապես մըտնում է իր դերի մեջ, հանգիստ բարձրանում է ամբիոն, հայացքով ընդգրկում, աչքի է անցկացնում դահլիճը, տեսողական կոնտակտ է հաստատում ունկնդիրների հետ և փոքր-ինչ դադարով, որևէ հարցադրումով, նույնիսկ կատակով սկսում է ելույթը:

Լինում է և հակառակը. կան հոետորներ էլ, որոնք անտրամադիր բեմ են բարձրանում, արձանի նման անշարժ ու անկիրք, առանց կյանքի որևէ նշույլի, կանգնում են ամբիոնի ետևում և, առանց անհրաժեշտ դադարների, շարունակում են ելույթը: Այդպիսի հոետորը, ինչպես Ցիցերոնը կասեր, «արտասանելով իր ճառը, չի գըտնըվում շարքում, սուրը ձեռքին, այլ կարծես թե միայն վարժություններ է անում սուսերամարտության մեջ»:

Այնուհետև, հոետորը պետք է հարգանք տաժի դեպի ունկնդիրները. ամբիոն ես ելնում, գլուխդ վեր բարձրացրու, ջերմորեն բարևիր նրանց, այդ պահին մոռացիր անձնականը. ունկնդիրների գործը չեն քո տնային հոգսերը, գծառությունները, նույնիսկ վիշտը: Իմացիր, որ

քանի դեռ քեզ չեն ճանաչում, ընդունում և դատում են ըստ քո տեսքի և պահվածքի, որ ունկնդիրների վրա դասախոսի ավդեցությունն սկսվում է այն պահից, երբ նա երևում է նրանց (այդ մասին և առհասարակ մեր լեզվի և ոճի վերաբերյալ լավ խորհուրդներ կան Լևոն Հախվերդյանի «Ջրույցներ լեզվի մասին» արժեքավոր աշխատության մեջ):

Դասախոսի արտաքին կեցվածքը, հագնվելն անգամ դեր են խաղում: «Մարդու մեջ ամեն ինչ պետք է գեղեցիկ լինի՝ և՛ հագուստը, և՛ դեմքը, և՛ հոգին, և՛ մտքերը»,— ասել է Ա. Պ. Չեխովը: Դա առավել ևս վերաբերում է նրանց, ովքեր հանդես են գալիս լսարանի առջև, ովքեր կոչված են կուսակցության ճշմարտացի խոսքը հասցնել մասսաներին:

Իրոք, շատ պահանջներ են ներկայացվում սովետական հոետորին. շատ «մանրուքներ» կան, որոնք պարտավոր է նա հաշվի առնել ասածը տեղ հասցնելու, վրույցը հետաքրքիր դարձնելու համար:

Պատրաստվելով ելույթի, պետք է նկատի ունենալ ոչ միայն ճառի նպատակաուղղվածությունը, այլև իրեն դնել ունկնդիրների դրության մեջ, հաշվի առնել, թե իր ելույթից ինչը դուր կգա և ճիշտ կընկալվի ունկնդիրների կողմից և ինչը՝ ոչ:

Հոետորական արվեստի այդ կողմը Լենինը համարում էր մանկավարժական մաս, որի հիմքում ընկած էին ասելիքն ունկնդիրներին հաս-

կանալի և հասանելի դարձնելու հոետորի հըմ-տութլունն ու վարպետութլունը:

Հոետորին ներկայցվող ևս մի անխախտ պահանջ՝ չի կարելի թերագնահատել ունկնդրին և ամեն առիթով շեշտել իր խելոքութլունն ու կրթվածութլունը: Դա անհամեստութլուն է, որն ակնթարթորեն նկատվում է և բացասական ազդեցութլուն գործում: Տեսնենք, թե ինչ է ասել Լ. Ն. Տոլստոյը. «Միայն այն ժամանակ է հեշտ ապրել մարդու հետ, երբ քեզ չես համարում նրանից բարձր, նրանից լավը, ոչ էլ նրան՝ քեզանից բարձր ու լավը»:

Հարգանքը լսարանի նկատմամբ պետք է արտահայտվի նաև ելույթի համար սահմանված ռեզլամենտը պահպանելով: Ինչպիսի համբերատար լսարան էլ որ լինի, ժամանակի լիմիտը լրանալուց հետո նրա ուշադրութլունը թուլանում է. մարդիկ սկսում են ժամացույցներին նայել, ավելի անհամբերները տեղից բղավում են՝ «ռեզլամենտ»: Եվ դժվար չէ պատկերացնել, թե նման դեպքերում ինչ վիճակի մեջ է ընկնում ելույթ ունեցողը:

Դեռ հին ժամանակներից մարդկութլունը պայքարել է դատարկ ճոռոմախոսութլան դեմ, ռեզլամենտը չափել են ինքատիպ ջրային ժամացույցի օգնութլամբ, նայելով անոթից դուրս հոսող ջրին (երևի թե այդպես էլ առաջացել է «ջուր ծեծելու» արտահայտութլունը): Ինչ-որ տեղ ընդունված է եղել, որ ելույթ ունեցողը խոսի

մեկ ոտքի վրա կանգնած: Փորձել են ռեզլամենտի պահպանմանը հասնել տեխնիկական սարքերով: Եթե սահմանված ժամանակն ավարտվում է, սարքի մեջ ինչ-որ բան չխկում է, անջատվում և այլևս հնարավոր չէ խոսել: Ճապոնիայում, կարծեմ, ժողովների ժամանակ դահլիճում դնում են հատուկ ապարատ, որը որոշում է, թե ունկընդիրների որ տոկոսն է լսում ելույթ ունեցողին: Եվ երբ ապարատը ցույց է տալիս, որ խոսողին լսում է ունկնդիրների 50 տոկոսից պակաս, ապա նա ամբիոնի հետ անհայտանում է բեմի վրայից:

Այդպիսի տեխնիկական, վարչական միջոցները հնարավոր է, որ ներգործում են, բայց կարևորը ոչ թե դրանք են, այլ հասարակութլան առջև հանդես գալու կուլտուրայի դաստիարակութլունը:

Միայն կուլտուրայի պակասով, ունկնդիրների նկատմամբ ոչ հարգալից վերաբերմունքով պետք է բացատրել այն, որ ելույթ ունեցողը խախտում է սահմանված ռեզլամենտը, շարունակում է խոսել, ոչ մի կերպ չի կարողանում վերջացնել խոսքը, իսկ ունկնդիրները ձանձրացել են և սպասում են վերջակետին:

Հարկավոր է իմանալ, որ նույնիսկ լավ խոսելու դեպքում, երբ ասելիքը երկարացնում են, դա բացասաբար է անդրադառնում ելույթի վրա: Իր արժանիքն իմացող դասախոսը չպետք է թույլ տա, որ ժողովը ղեկավարողն իրեն հիշեցնի ռեզլամենտի մասին:

Ժամանակը գնահատելը, ռեզլամենտը պահպանելը հստակ տակտ է, որը խախտելը չի կարող բացասաբար չափել ելույթի վրա:

Վ. Ի. Լենինը, ինչպես ոչ ոք, գիտեր ժամանակի գինը: Նա ժամանակը հաշվում էր ոչ թե թուպենտով, այլ վայրկյաններով. ժամացույցները, որոնք հետ էին մնում կամ ուշանում թեկուպե մեկ թուպենով, Վլադիմիր Իլյիչը համարում էր վատ և չէր օգտվում դրանցից: Լենինը պահանջում էր, որպեսզի վեկուցումները և ելույթները կարճ լինեն: Նա չէր թողնում, որ ելույթ ունեցողները խախտեին ռեզլամենտը: «Ես Ձեզ տվեցի ավելի քան 30 վայրկյան», — մի անգամ ՌԿ(բ) Կենտկոմի քաղբյուրոյի նիստում դիմում է Լենինը Կալինինին, այո՛, Կալինինին, և ընդհատում նրա ելույթը:

Գերադասելի է ռեզլամենտը շատ սահմանել և սահմանվածից պակաս խոսել, քան քիչ սահմանել և սահմանվածից ավելի խոսել:

Իսկ ամենից գերադասելին կարճ ու հակիրճ խոսելն է: Այո՛, կարճ և հակիրճ խոսելը: Խոսել, իհարկե, կարող է ամեն ոք: Բայց խոսել էլ կա, խոսել էլ: Խոսքը ջինջ ու մաքուր լեզվով խոսելու մասին է, հիշելով, որ ինչպես ասում է ֆրանսիացի գրող Լ. Վոլվենարգը՝ «Քիչ բառերով ու տեղին բերված մի քանի օրինակները մտքերին տալիս են ավելի շատ փայլ, ավելի մեծ կշիռ և հեղինակություն... օրինակների առավել առատությունը և մանրամասների ավելորդությունը միշտ թուլացնում են խոսքը»:

Մենք ունենք ոչ քիչ դասախոսներ, պրոպագանդիստներ, որոնց ելույթները մինչև վերջ լավում են չթուլացող ուշադրությամբ, գոհունակության արձագանքներ են լինում, որովհետև խոսում են սահուն ու պատկերավոր, բոլորին մատչելի և հասանելի լեզվով:

Դժբախտաբար պրակտիկայում լինում է և հակառակը: Պատահում է և այնպես, որ դասախոսության ժամանակ ունկնդիրը ննջում է կամ խաչբառ է լուծում, որովհետև դասախոսը խոսում է հանրահայտ և անվիճելի ճշմարտությունների մասին, ելույթը հագեցնում է այնպիսի թվերով և փաստերով, որոնք լսողության համար ընկալելի չեն, դասախոսությունն սկսում է ոչ խնդրի էությունից, ոչ հետաքրքիր բանից, որ իսկույն ուշադրություն գրավեր: Պակասում է խոսքի, մտքի պատկերավորությունը, հրապարակախոսական կիրքը, որոնք գրավեին ունկնդրի ուշադրությունը, և ունկնդիրն անտարբեր չմնար դեպի դասախոսությունը:

Ելույթ ունեցողը պետք է հայացքով ընդգրկելի լսարանը, նայի ունկնդիրներին: Եթե նկատի, որ նրանք դադարել են իրեն լսել, անմիջապես փոխի խոսքը, վառ օրինակ բերի, ուշագրավ փաստ կամ փաստեր հաղորդի: Դասախոսի համար չկա ավելի տհաճ բան, քան այն, որ թեկուպե ունկնդիրների փոքր մասը չի լսում իրեն:

Մ. Ի. Կալինինը 1927 թ. նոյեմբերին, ճառով հսոնդես գալով Մոսկվայի նահանգային կու-

սակցական XV կոնֆերանսում, պատմում է նաև մի այսպիսի արտասովոր դիպվածի մասին: Մի ժողովի ժամանակ ժողովի նախագահը ժամանակ առ ժամանակ դիմում է լսարանին, խնդրելով ոտքի կանգնել: Բոլորը ոտքի էին կանգնում: Եվ դա պարբերաբար կրկնվում է ամբողջ նիստի ընթացքում: Ժողովին եկած հրահանգիչը վարմանում է այդ տարօրինակ սովորույթի վրա և նախագահին հարցնում, թե նա ինչո՞ւ է այդ անում: Իսկ նախագահը պատասխանում է. «Որպեսզի ընկերները խորը չքնեն» (տե՛ս Օժ օրаторском искусстве, М., Госполитиздат, 1963, стр. 224):

Մեզ մոտ կարդացվող որոշ դասախոսությունների համար էլ թերևս հարկ կլինի կիրառել այդ եղանակը:

Ելույթը պետք է այնպես լինի, որ մինչև վերջ հետաքրքրի լսարանին և չստացվի այնպես, որ դասախոսը բեմում ինքն իր համար, իսկ ունկընդիրները լսարանում իրենք իրենց համար և անհամբեր սպասեն, թե ե՞րբ կվերջանա դասախոսությունը:

Հոնտորական արվեստի լենինյան դպրոցի ներկայացուցիչների ելույթներն աչքի էին ընկնում վարմանալի գրավչությամբ և հետաքրքրությամբ: Ականատեսները պատմում են, որ Ա. Վ. Լուինաչարսկին կարող էր առանց նախապատրաստվելու հանդես գալ ցանկացած լսարանի առջև և փայլուն ճառ արտասանել: Եվ ինչքան էլ որ նա խոսեր, ոչ-ոք չէր հեռանում դահլիճից՝

այնքան որ գրավիչ էր այդ ամենը: Եղել է դեպք, երբ նրա ելույթի ժամանակ դահլիճի լույսերը հանգել են, բայց նա ոչ մի վայրկյան կանգ չի առել, շարունակել է իր վարմանալի ճառը և նույնիսկ թվացել է, որ այն դարձել է ավելի հետաքրքիր: Մի անգամ, ելույթ ունենալով գիտությունների ակադեմիայի հոբելյանական նստաշրջանում, նա խոսել է եվրոպական չորս լեզուներով և յուրաքանչյուրը հավասար հաջողությամբ (տե՛ս Наука убеждать, изд-во ЦК ВЛКСМ «Молодая гвардия», М., 1969 г., стр. 533):

Եվ, իրոք, ինչի նման է այն ելույթը, որը մինչև վերջ ուշադրությամբ չի լսվում, մտածելու, խորհելու առիթ չի տալիս, չի տպավորվում հիշողության մեջ:

Այն էլ ասենք, որ խոսքի ուժը քիչ բառերով շատ բան ասելու մեջ է: Միայն հակիրճ և բովանդակալից ճառն է ընդունակ առաջացնելու ուժեղ տպավորություն: Անգլիացի բանաստեղծ Ռ. Սաուտիի պատկերավոր արտահայտությամբ, «հակիրճությունն ուժ է տալիս լեզվին: Կան արտահայտություններ, որոնք արեգակնային ճառագայթների հատկություն ունեն՝ որքան շատ են նրանք խտացած, այնքան ուժեղ են այրում»:

Փորձը ցույց է տվել, որ շահում է այն դասախոսը, զեկուցողը, ելույթ ունեցողը, ով կարճ, դիպուկ մտքերով և ասույթներով շատ բան է ասում, և ասում է այն, ինչ պետք է:

Լավ է ասել ֆրանսիական գրող Ֆ. Լարոշֆու-

կոն. «Իսկական ճարտարախոսությունն այն է, որ ասես միայն անհրաժեշտը, բայց ոչ ավելին»:

Շատախոսությունը մտքի աղքատության նշան է: Իսկ հակիրճությունն էլ լավ է, երբ վուգակըցվում է պարզության հետ, որը խոսքի գլխավոր արժանիքն է:

Ավետիք Իսահակյանի հոբելյանական հանդեսին շատ ճառեր արտասանվեցին՝ հետաքրքիր, լավ ճառեր: Բայց դրանցից մեկը՝ Կաբարդինա-Բալկարիայի ժողովրդական բանաստեղծ Կայսին Կուլիկի ելույթն աչքի ընկավ իր հակիրճությամբ և պարզությամբ: Ահա այն. «Ես այս ամբիոնը բարձրացա, որպեսզի մեծ քնարերգու, Հայաստանի, Կովկասի, մարդկության զավակ Ավետիք Իսահակյանի մասին ասված հիանալի խոսքերին միացնեմ իմ ժողովրդի սիրո խոսքերը, նրա մեծ զգացման խոսքերը: Ես Հայաստան եմ եկել խոնարհվելու Ավետիք Իսահակյանի առջև, նրան սնած հողի առջև, խոնարհվելու այն ծառի առջև, որը մեծ քնարերգուի համար չի խնայել իր ստվերն ու իր պտուղները, այն ջրի առջև, որը նա խմել է, նայելու այն ամպերին, որոնք լողացել են նրա իմաստուն գլխի վերևով, այն կապույտ երկնքին, որը նա տեսել է: Ես եկել եմ Ձեզ հաղորդելու՝ ողջույն եղբայրներ, սուրբ ձեռքեր են բռնել հայոց հույսի ջահը, որը մարել չի կարողացել ոչ մի դաժանություն, և այն հասցրել այս օրվան: Այդ ջահը բռնել է նաև Ավետիք Իսահակյանի սուրբ ձեռքը»:

Ընդամենը երեք-չորս ֆրազ, բայց ինչքա՞ն

մտքեր ու պատկերներ, բառերի ինչպիսի՞ հաջող ընտրություն, էպիտետների ինչպիսի՞ ճշգրտություն և դիպուկություն: Այստեղ ամեն ինչ իր տեղում է. հնարավոր չէ որևէ բան փոխարինել մեկ ուրիշով:

Այո՛, ցանկացած դասախոսության, ելույթի արժեքը չի որոշվում ըստ քանակով, այլ, ամենից առաջ, սեղմ, պատկերավոր ձևով արտահայտված բովանդակությամբ: Գյոթեն գնահատում էր ամեն տեսակի կարճ ասույթները: Ցիցերոնը գտնում էր, որ «ուժեղ, կարճ արտահայտված մտքերը շատ են օգնում կյանքի բարելավմանը», «կարճ ասույթները մխրճվում են մարդկանց մտքերի մեջ, արմատներ են արձակում, ծաղիկներ ու պտուղներ տալիս և չեն դադարում ազդեցություն գործելուց»՝ ասել է գերմանական գրող Ֆ. Բոդենշտեդտը:

«Չկա միտք, որ հնարավոր չլինի պարզ ու հասարակ արտահայտել»՝ նկատել է Ա. Գերցենը: Սակայն, ինչպես ասում է Ֆ. Վոլտերը, «Գեղեցիկ միտքը կորցնում է իր ամբողջ արժեքը, երբ վատ է արտահայտված, իսկ եթե կրկնվում է, ապա ձանձրույթ է պատճառում»:

Ուրեմն հոետորի, դասախոսի համար բավական չէ նյութն ու ասելիքն իմանալը: Ասելիքը ներգործուն դարձնելու, այն տեղ հասցնելու համար հարկավոր է ասելու շնորհք ունենալ, նյութը մատուցելու առավել հետաքրքիր, առավել տպավորիչ ձև գտնել:

Խոսքի ուժով խորապես բացահայտել դժվարին պրոբլեմները, համուպիչ և պատկերավոր շարադրել իր մտքերը, ելույթը հագեցնել խոր բովանդակությամբ, բացահայտել աշխատանքում եղած թերությունները, նշել դրանց վերացման ուղիները՝ ահա թե ինչ է պահանջվում հոետորից, գաղափարախոսական ձևակառուցի բոլոր աշխատողներից:

Դրա վառ օրինակներ կան կոմունիստական կուսակցության և սովետական պետության ակադեմիկոս գործիչ Սերգեյ Միրոնովիչ Կիրովի ելույթներում: Հայտնի է, թե ինչպիսի պայրույթով և հեզնանքով էր նա խոսում նրանց մասին, ովքեր վատ էին աշխատում, անպատասխանատու վերաբերմունք էին դրսևորում հանձնարարված գործի նկատմամբ:

Ահա թե ինչ է վերհիշում ժողնալիստ Ս. Պոլենկը. «Տասնյակ տարիներ են անցել, իսկ ես չեմ մոռացել Սերգեյ Միրոնովիչի ձայնը, որում նա խոսեց, մոտավորապես, արտադրանքի որակի մասին:

Կիրովն սկսեց նրանից, որ արժանին հատուցեց երաժշտական ֆաբրիկաների արտադրանքի արտաքին հարդարանքին: Նայեցեք, ինչպիսի գեղեցիկ ֆլեյտաներ են նրանք բաց թողել առևտրական ցանց: Ձևով շատ գրավիչ են ֆլեյտաները: Հաճելի է ձեռքը վերցնել: Շոյում է անքը...

Մենք լսում ենք այդ գովասանքները, բայց

Կիրովի հավիվ նկատելի քմծիծաղից պզում ենք, որ վերջն անսպասելի է լինելու: Եվ, իսկապես, առատորեն հաճոյախոսություններ շնորհելով երաժշտական ֆաբրիկաների ղեկավարներին, Սերգեյ Միրոնովիչը ցավով նկատեց, որ ամեն ինչ հոյակապ կլիներ, եթե չլիներ ֆլեյտայի մենմիակ թերությունը՝ այն չի նվագում: Դահլիճում քրքիջ՝ Կիրովի խոսքերի առաջին արձագանքը: Բայց կուշտ ծիծաղելուց հետո մարդիկ սկսեցին խորհել... Կիրովն ասաց, որ չնվագող ֆլեյտաներին և խոխոացնող պատեֆոններին են նմանվում նաև երաժշտական արդյունաբերությունից հեռու կանգնած առանձին մարդիկ: Օրինակ, որոշ բնակելի շենքեր կառուցողները: Իսկ նրանք, խնդրեմ, բերում են ավելի շոշափելի վնաս, քան երաժշտական ֆաբրիկաների խոտանարարները: «Պատեֆոնը պետք է լինի լավ՝ դա անկասկած է: Բայց, խղճով ասած, լավ է, այնուամենայնիվ, նստել լավ բնակարանում՝ վատ պատեֆոնով, քան ծակծկված բնակարանում՝ լավ պատեֆոնով»

(բաղվածքը մեջ է բերված «Русская речь» ամսագրի 1986 թ. № 2-ից, էջ 20):

Ասածից երևում է, որ սվարձալի, պատկերավոր խոսքը, իրոք, պորեղ է, հասանելի և հասկանալի:

Սխալ է կարծել, թե խոսքի պատկերավորությունը հատուկ է միայն բանաստեղծներին և գրողներին: Պատկերավորությունը բնորոշ է նաև հրապարակախոսությանը:

Մարքսիստի կլասիկների, մեր կուսակցության և պետության, միջապագային կոմունիստական շարժման ականավոր գործիչների հրապարակալիին ելույթները ցույց են տալիս, թե ինչպես նրանք հմտորեն և ստեղծագործաբար են մատուցում նյութը, այն դարձնում հասանելի և հասկանալի ամեն տեսակ լսարանի համար: Կարլ Մարքսի մասին Լիբկնեխտն իր հիշողություններում գրում է. «Իր միտքը պարզ արտահայտելու մեծ ընդունակությունը, նրանից բացի, ոչ ոք չուներ» (Толмачев А., Об ораторском искусстве, М., 1958, стр. 8): Պարզ ու հասարակ, հստակ ու պատկերավոր, մատչելի և հասկանալի էր Լենինի լեզուն: Նրա քաղաքական ելույթները եղել են մասսաների հետ պարզ ու շիտակ, ալենիվ և ուղղակի խոսակցության օրինակ, այնպես, որ բանվորին ու գյուղացուն թվացել է, թե դա հենց իրենք են մտածել, միայն թե չեն կարողացել պլոքբան պարզ ու հասարակ արտահայտել: Լենինը պայքարում էր ամեն մի բառի, ձևակերպումների ճշտության համար:

Իվուր չի ասել Մարիետա Շահինյանը. «Լենինի յուրաքանչյուր բառը ալմաստի հետք է ապակու վրա, ճշգրիտ արձակի վարպետության անվիճելի դաս» (Մարիետա Շահինյան, Չորս դաս Լենինից, Երևան, 1975, էջ 173):

«Լսեք, ընկեր Լենին,— Կոմինտերնի 3-րդ համաշխարհային կոնգրեսում նրա պեկուցումից հետո նրան է դիմում Կլարա Ցետկինը,— մեկ մոտ

որևէ գավառային փոքր քաղաքում որևէ ժողովի նախագահ կվախենար խոսել այնպես հասարակ, այնպես հավակնոտ, ինչպես Դուք... խոսելու ձեր արվեստը կարող եմ համեմատել միայն մի բանի հետ՝ Տոլստոյի մեծ արվեստի հետ: Ձեզ մոտ միևնույն խոշոր, ամբողջական, ավարտուն գիծն է, ճշմարտության միևնույն անհողողող պագցումը: Դրանում է՝ գեղեցկությունը: Գուցե դա սլավոնական բնավորության յուրահատուկ տարբերիչ գի՛ծ է»:

— Ես այդ չգիտեմ,— պատասխանում է Լենինը:— Ես միայն գիտեմ, որ երբ ելույթ ունեցա որպես հռետոր, ամբողջ ժամանակ մտածում էի բանվորների ու գյուղացիների մասին՝ որպես իմ ունկնդիրների մասին: Ես ուզում էի, որ նրանք ինձ հասկանան: Որտեղ էլ որ խոսելու լինի կոմունիստը, նա պետք է մտածի մասսաների մասին, նա պետք է խոսի նրանց համար... (Հիշողություններ Վ. Ի. Լենինի մասին, մ. 2, էջ 583):

Լենինը խորհուրդ էր տալիս խոսելիս հաշվի առնել յուրաքանչյուր խավի, պրոֆեսիայի, սոցիալական խմբի առանձնահատկությունները, հոգեբանության յուրօրինակ գծերը և գիտակցականության աստիճանը: Կառապանների հետ պետք է խոսել այլ կերպ, ասում էր նա, քան նավաստիների, նավաստիների հետ այլ կերպ, քան գրաշարների հետ:

Այդ կանոնը Վլադիմիր Իլյիչն անշեղորեն

պահպանեց իր ամբողջ կյանքում: Ում առջև էլ ելույթ ունենար՝ Պուտիլովյան գործարանի բանվորների թե Իվանյիլովյան գնդի վինվորների, համամիութենական Կենտգործկոմի անդամների, թե արհմիութենական կոնֆերանսի մասնակիցների՝ նա միշտ կողմնորոշվում էր դեպի լսառանը, ոչ մի բույե չմոռանալով, թե ովքեր են իր առջև գտնվում:

Միաժամանակ Լենինը պայքարում էր էժանագին ժողովրդականություն վայելելու դեմ: Նա ինքը երբեք չէր ձգտում հարմարվել բանվորների խոսելաձևին, չէր նվազեցնում պրոպագանդայի գիտական ու գաղափարական բովանդակությունը. պրոպագանդան, սովորեցնում էր նա, չպետք է իջնի մինչև չարագացած ունկնդրի կամ ընթերցողի մակարդակին: Նրա պարտքն էր Կոլուշովյամբ, բայց անշեղորեն բարձրացնել այդպիսի ունկնդրի կամ ընթերցողի ընդհանուր և քաղաքական պարզացումը:

Պարզ և գոեհիկը նույն բաները չեն: Դասախոսը, պրոպագանդիստը իրավունք չունեն հարմարվելու առանձին ունկնդիրների լեզվական ցածր կուլտուրային, օգտագործելով կոպիտ, անհարկի բառեր ու տերմիններ:

Պարզությունը, պատկերավորությունն ու հակիրճությունը լեզուն պարզարում, լեզուն հարըստացնում են:

Կան հռետորական արվեստի բազմաթիվ ձե-

վեր, որոնք արտահայտչականություն և պատկերավորություն են տալիս ելույթին, նպաստում են նրա դինամիկությանը: Դրանցից է **անտիթեզը**՝ մտքերի և կերպարների հակադրումը, որն ուժեղացնում է ասածի տպավորությունը, ավելի վառ ու արտահայտիչ դարձնում այն:

Անտիթեզի՝ մեկը մյուսին խիստ հակասող մտքերի և արտահայտությունների հաճախ կարելի է հանդիպել Կ. Մարքսի աշխատություններում: Ահա թե նա ինչպես է խոսում փողի՝ որպես «...բոլոր բնական ու մարդկային հատկությունների վերափոխողի և նենգափոխողի» մասին: Նա գրել է. «Փողը հավատարմությունը դարձնում է դավաճանություն, սերը՝ ատելություն, ատելությունը՝ սեր, առաքինությունը՝ արատ, արատը՝ առաքինություն, ստրուկին՝ տեր, տիրոջը՝ ըստրուկ, տխմարությունը՝ խելոքություն, խելոքությունը՝ տխմարություն» (Маркс К., Энгельс Ф., Из ранних произведений, М., Госполитиздат, 1956, стр. 620):

Անտիթեզի շատ օրինակներ կան Ցիցերոնի մոտ:

Ահա դրանցից մեկը.

«Երբ ամեն ինչ հանգիստ է, դու աղմկում ես. երբ բոլորը հուզվում են, դու հանգիստ ես, անտարբեր գործերում տաքանում ես, կրքոտ հարցերում՝ սառն ես. երբ հարկավոր է խոսել՝ լռում ես»:

Ահա անտիթեզի մի այլ օրինակ.

Ես մի լուսավոր, ես մի խենթ լուսնոտ,
Դու ցուք, դու ցնորք հավիտյան խաբող,
Իմ քույր, իմ դահիճ, իմ սուրբ սիրեկան,
Ես քեզ սիրում եմ, դու դեռ չես մեռել...

(Վահան Տերյան)

Հոետորական ոճին հատուկ է այնպիսի եղանակ, ինչպես **կրկնությունը**՝ բառերի կամ բառակապակցությունների մի քանի անգամ կրկնելը դրանց կարևորությունն ընդգծելու, լսարանի ուշադրությունը դրանց վրա բևեռելու նպատակով:

Ահա վերևում ասածը հաստատող օրինակներ.

Մենք հույս ենք դնում բանվոր դասակարգի աջակցության վրա, քանզի կուսակցության քաղաքականությունը նրա քաղաքականությունն է:

Մենք հույս ենք դնում գյուղացիության աջակցության վրա, քանզի կուսակցության քաղաքականությունը նրա քաղաքականությունն է:

Մենք հույս ենք դնում ժողովրդական մտավորականության վրա, քանզի կուսակցության քաղաքականությունը նրա քաղաքականությունն է... (քաղվածքները մեջ են բերված ՍՄԿԿ XXVII համագումարին տված ՍՄԿԿ Կենտկոմի քաղաքական պեկուցման եզրափակումից):

Բառերի և բառակապակցությունների կրկնության ևս մի օրինակ.

— Կեցցե՛ նա, ով իր կյանքում փնտրել է միշտ ճշմարտությունը և ցանկացել է օգտակար լինել ժողովրդին;

— Կեցցե՛ նա, ով կարողացել է... երկար տարիներ պահպանել իր բարոյական մաքրությունը և գաղափարականությունը:

— Կեցցե՛ նա, ով պզալ է տվել մեզ հայրենի քաղցրությունը, և հասկացրել է, թե որտեղ են թաղված մեր տաղանդները, մեր ստեղծագործական ուժերը... (Ստ. Շահումյան):

Պակաս կարևոր չեն **երկխոսությունները**: Երկխոսությունը բանավոր խոսքի հատուկ ձև է՝ խոսակցություն կամ վրույց երկու կամ մի քանի մարդկանց միջև:

Ահա մի երկխոսություն, որ տեղի է ունեցել Վ. Ի. Լենինի և Պետրոգրադի մի գնդի պինվորների միջև 1917 թվականի ապրիլի 15-ի միտինգում: 1908 թ. կուսակցության անդամ, փետրվարյան և Հոկտեմբերյան հեղափոխությունների ակտիվ մասնակից Ա. Ի. Բալապուրովն այդ մասին պատմում է.

Միտինգին ներկա մեր դիվիզիոնի պինվոր, սիբիրցի բանվոր-կաշեգործ Գուսևը, կարծելով, թե Լենինը չպետք է խոսի հողի մասին, բարձրաձայն հարցրեց.

— Իսկ հո՞ղը:

Արագորեն շրջվելով նրա կողմը, Լենինը հարցին պատասխանեց հարցով.

— Իսկ հո՞ղը:

— Այո՛, ինչ-որ բան պարզ չէ,— պատասխանեց պինվորը:

— Նշանակում է հողի հարցը դեռ պարզ

չէ՞,— ուրախ ժպիտով հարցրեց Վլադիմիր Իլյիչը:

— Պարզ չէ, բոլորովին պարզ չէ, ընկեր Լենինին,— անմիջապես հնչեցին մի շարք ձայներ,— բոլոր հոետորները ժողովներում խոսում են տարբեր ձևով:

Սպասելով, թե երբ կդադարեն ռեպլիկները տեղից, Լենինն ասաց.

— Դե՛, հիմա բերեք պարզություն մտցնենք այդ, ինչպես դուք եք ասում, ոչ պարզ հարցում:

Վ. Ի. Լենինը շարադրեց բոլոր կուսակցությունների պլատֆորմները հողային հարցի վերաբերյալ, որից հետո, դիմելով ժողովին, հարցրեց.

— Ես ուզում եմ հարցնել ինձ առաջինը հարց տվող ընկերոջը, չգիտեմ նրա ազգանունը...

— Գուսև, Գուսև,— հնչեցին ձայները:

— Ընկեր Գուսև,— շարունակեց Վլադիմիր Իլյիչը,— իսկ ձեր կարծիքով ինչպե՞ս պետք է լուծվի հողային հարցը.

— Առանց ամեն կարգի հետզնման, ընկեր Լենին,— արձագանքեց Գուսևը:

— Իսկ ի՞նչ են մտածում մնացած ընկերները,— դիմելով բոլոր ներկաներին, հարցրեց Վլադիմիր Իլյիչը:

— Առանց հետզնման, առանց հետզնման. հողը պետք է հանձնել աշխատավոր ժողովրդին,— ընդհանուրի համերաշխ ծափահարությունների ներքո պատասխանեցին դահլիճից:

— Մենք՝ բոլշևիկներս,— բարձրաձայն ասաց

Վլադիմիր Իլյիչը,— նույնպես համամիտ ենք հողի հարցի նման լուծմանը: Մենք, ինչպես տեսնում եք, միասնական կարծիքի ենք:

Լենինի վերջին խոսքերն առաջացրին երկար ժամանակ չլռող ծափահարությունների տարափ (Ленин—мастер революционной пропаганды, Госиздат, М., 1965, стр. 83—84):

Երկխոսության հիանալի օրինակներ կան հայ դասական գրողների՝ հատկապես Բաժֆու, Պոռչյանի, Մուրացանի, Շիրվանյադեի գրվածքներում: Երկխոսության վարպետ էր Դերենիկ Դեմիրձյանը:

Հոետորական արվեստի կարևոր եղանակներից մեկը **համեմատությունն է**: Համեմատությունը պետք է լինի պարզ, հասարակ, հասկանալի. «Այնպես, ինչպես Դարվինը հայտնագործեց օրգանական աշխարհի վարճացման օրենքը, այնպես էլ Մարքսը հայտնագործեց մարդկային պատմության օրենքը»— Էնգելսի այս հակիրճ ու դիպուկ համեմատությունը բնութագրում է Մարքսին որպես հանձարեղ մտածողի, որպես մտքի տիտանի:

Համեմատվում են իրար հետ ոչ միայն առանձին բառեր և հասկացողություններ, այլև մեծ ու փոքր իրողություններ: Այսպես՝ «Ռուս մարդու հոգին լայն է՝ ինչպես իր ստեպը, վեհ՝ ինչպես Նևան, լեզուն՝ ինչպես ածելին», «Հայ ժողովուրդը կանգուն է, ինչպես իր հայրենի լեռները, հպարտ ու բարձր՝ ինչպես այդ լեռների արծիվները»:

Ահա համեմատությունների մի քանի այլ օրինակներ. «Մարդն առանձնացել է ինքն իր մեջ, ինչպես սարդն իր ոստայնի, ինչպես կրիան իր կեղևի մեջ». «Նա պեկոծված է գարնան ջրերի պես». «Այս մարդը սառն է, ինչպես սառույցը», «Հիտերը նույնքան նման է Նապոլեոնին, որքան կատվի ձագը առյուծին»: Հոյակապ համեմատություններով է խոսում Շեքսպիրի Օթելլոն. այդ սևամորթի համար՝ ամպիկներով ծածկված երկինքը մարմարիոն է, Դեպրեմոնայի մաշկը սպիտակ է որպես ձյուն, ողորկ՝ որպես մահարձանների՝ ավերաստր: Քնած Դեպրեմոնան կենդանի վարդ է, Դեպրեմոնայի սպանությունը՝ արևի և լուսնի խավարում:

Ահա համեմատության ևս մի օրինակ.

Կովի դաշտի մեջ ընկա վիրավոր,
Ռուս մի աղջիկ խոնարհվեց վրաս,
Եվ ապաքինվեց ասես վերքս խոր,
Երբ բացվեց կապույտ աչքերը վրաս՝
Թվաց՝ թե բացվեց հեռվում՝ հեռավոր
ոմ Հայաստանի երկինքը վրաս (Հովհ. Շիրազ):

Հարկավոր է ավելի հաճախ դիմել **հոմանիշներին**, այն բառերին, որոնք իրենց նշանակությամբ համընկնում են կամ մոտ են, բայց տարբերվում են իմաստային կամ ոճական երանգներով: Օրինակ, մշտապես օտագործվող «գրում է», բառի փոխարեն կարելի է ասել՝ «հիշատակում է», «հաղորդում է», «պարզաբանում է», «մատնանշում է», «նկատում է», «պնդում է», «հայտարարում է» և այլն:

Դասախոսության, ելույթի, ճառի որակը մրտքերի որակն է, չասված, թարմ մտքերը: Ֆ. Դոստոևսկին ասել է. «Լավ մտքերը փայլուն ոճից բարձր են դասվում: Ոճը, այսպես ասած, արտաքին զգեստն է. միտքն այն մարմինն է, որ թաքնված է զգեստի տակ»: Լև Տոլստոյը հավասարության նշան էր դնում խոսքի պղտորության և մտքի պղտորության միջև:

Այո՛, մտքեր են պետք, այնպիսի մտքեր, որոնք տեղ հասնեն, մտածելու, խորհելու առիթ տան, ունկնդիրներին հաղորդեն նոր զգացմունքներ, նոր տրամադրություն:

Ահա ձեզ հարուստ մտքեր բովանդակող առանձին քաղվածքներ.

«Մարդուն սովորեցնել երջանիկ լինել, չի կարելի, բայց նրան դաստիարակել այնպես, որպեսզի նա երջանիկ լինի՝ կարելի է» (Ա. Մակարենկո).

«Երջանկությունը հեշտ ու անհոգ կյանք չէ, երջանկությունը հոգեկան վիճակ է» (Ֆ. Չեր-ժինսկի).

«Աշխարհում չկան փոքր ժողովուրդներ... Ժողովրդի մեծությունը ամենևին չի չափվում նրա քանակով, ինչպես որ մարդու մեծությունը չի չափվում նրա հասակով» (Վիկտոր Հյուգո):

Պատրաստի ֆրազներով խոսելը, հանրահայտ տարրական ճշմարտությունների մեխանիկական կրկնությունը թուլացնում են ելույթի ուժն ու նշանակությունը, նրա ավելցողությունը:

«...Ի՞նչը կարող է ավելի անհեթեթ լինել,—

ասում է Յիցերոնը,— քան ֆրապների դատարկ հնչյունը, թեկուզ հենց ամենաընտրովի և ամենահետաքրքիր, բայց որևէ մտքի, գիտության հետ չկապված ֆրապները»:

Եվ այսպես, գաղափարախոսական աշխատանքում հարկավոր է իսպառ վերացնել դաստիարակչական աշխատանքի ներգործության արդյունավետությունը էապես նվազեցնող այնպիսի երևույթներ, ինչպիսին ձևամոլությունն է, հակումը բառային ճարձատյունի, ամեն տեսակ պրոպագանդիստական շտամպների նկատմամբ, խոսքի բյուրոկրատական ոճը, ընդհանուր ճըճ-մարտությունների բազմապատիկ մեխանիկական կրկնությունը:

Կենտկոմն անհանդուրժելի է համարում այն, որ «Տեսական ընդհանրացումները, ընթերցողին, ունկնդրին հարստացնող լուրջ, կշռադատված վերլուծությունը երբեմն փոխարինվում են ճոռոմաբանությամբ, լեզվի արտաքին գիտականակերպությամբ, իսկ լսարանի հետ տեղի ունեցող խոսակցության մեջ փաստարկների համուլությունը և արտահայտչական տոնի վստահությունը՝ խրատաբանությամբ և ճոճռան ֆրապներով» և պահանջում է այդ ամենը վճռականապես արմատախիչ անել պրակտիկայից:

Ո՛րն է, ուրեմն, լավ ճառը, լավ դասախոսությունը: Լավ է այն ճառը, որն ունկնդրին գրավում է ոչ թե իր արտաբուստ սահունությամբ, այլ հարուստ ներքին բովանդակությամբ, կենդանի, սեփական մտքերով:

«Մենից լավ տեղ է հասնում այն ճառը,— մի առիթով ասել է Մ. Բ. Կալինինը,— որն ամենապզայուն թելերին է դիպչում, հավանություն կամ առարկություն է առաջացնում: Դա առաջին նշանն է այն բանի, որ հոետորն ունի մի ինչ-որ ինքնուրույն, կենդանի միտք» (Կալինին Մ. Բ., Դաստիարակության և ուսուցման մասին, Ընտիր հոդվածներ և ճառեր, Հայպետհրատ, 1960, էջ 198):

Լավ է այն դասախոսությունը, որն ունկընդիրներին ոգևորում և ոգեշնչում է, ուրախացնում կամ տրամոլություն պատճառում, եթե հարկ կա՝ արցունքներ քամում: Թե չէ խոսում են 2-3 ժամ, բայց լսարանի ոչ մի արձագանք՝ հիացմունքի ոչ մի արտահայտություն, ոչ մի հուլմունք, ոչ մի ծափ, ոչ մի ծիծաղ: Խոսում են, բայց ելույթից հետո ունկնդիրների գլխում ոչինչ չի մնում, բացի առանձին բացակայություններից. այստեղից և այնտեղից պոկած փքուն խոսքեր, դատարկահնչուն ֆրապներ, ամպագոռոկո կոչեր, որոնք ոչինչ չեն տալիս ունկնդիրների ոչ սրտին և ոչ էլ մտքին: Մի խոսքով, ունկնդիրն ինչ տրամաբանությամբ որ եկել էր՝ նույն տրամաբանությամբ էլ գնում է:

Դասախոսը պետք է խոսի ոչ թե անգիր արած հանրահայտ ֆրապներով, այլ իր՝ բնական, սովորական լեզվով: Հարկավոր է խուսափել պատրաստի ձևակերպումներից, երբ մարդ հիշողությանն է վոռ տալիս և ոչ թե խելքով մտածում: Չափի պզացումն ամեն մի արվեստի, այդ թվում

հոետորական արվեստի օրենքն է: Ճոռոմ խոսքը, խոսողի ոչ բնական, արհեստական խանդավառությունը, ճոճոան տոնը՝ մտքի աղքատության նշան են և, ընդհակառակը, խոսքի պատկերավորությունը, պարզությունը, բնականությունը՝ մտքի հարստության նշան են, հոետոր լինելու առաջին պայմանը:

Պարզությունը լսարանի վրա հոետորի ելույթի ազդեցության կարևոր նախապայմանն է, ինչպես մեծ մտածող Արիստոտելն է ասել՝ հոետորի գլխավոր արժանիքը:

Իսկ ինչպե՞ս հասնել խոսքի պարզության: Պարզության կարելի է հասնել դասախոսության, պեկուցման, պրուցի հստակ կառուցվածքով, տրամաբանվածությամբ, պզացմունքայնությամբ, փաստարկումների համոզականությամբ, լեզվի անպաճուճությամբ և պատկերավորությամբ:

Վ. Ի. Լենինը գտնում էր, որ կոմունիստական կուսակցությունը, որն ուլլըմ է գործնականում լինել հեղափոխական դասակարգի, պրուլետարիատի ավանգարդը, առաջավոր ջոկատը, պարտավոր է կարողանալ և՛ պրոպագանդել, և՛ կալմակերպել, և՛ ազիտացիա մղել առավել հասանելի, առավել պարզ և կենդանի խոսքով:

Վ. Ի. Լենինի յուրաքանչյուր ելույթ, ինչի մասին էլ որ այն լինի, այդ բանի փայլուն օրինակն է: Նա կարողանում էր մարդկանց հետ խոսել պարզ ու սրտառուչ, նրանց գրավել ու գերել, հիացնել և պարմացնել:

Մարիետա Շահինյանն իր «Չորս դաս Լենինից» գրքում գրում է այն մասին, թե 1921 թվականի դեկտեմբերին Մեքսիկայից Սովետական Ռուսաստան ժամանած ճապոնական կոմունիստ Սեն-Կատայաման ինչպես է նկարագրել Լենինի պեկուցումը Մեծ թատրոնում՝ Սովետների համառուսաստանյան համագումարում: Սեն-Կատայաման ամենևին չգիտեր ուուերեն, նա պեկուցումից չէր հասկացել ոչ մի բառ, բայց նա ականջների փոխարեն աչքերով ընկալել էր և այն, թե ինչպես է Լենինը խոսում, և այն, թե ինչպես էին լսում: Ակներև է, որ դա նրա համար և նոր, և արտասովոր է եղել այն աստիճան, որ Սեն-Կատայաման երեք ժամ տևած պեկուցման ընթացքում, չհասկանալով ոչ մի բառ, այնուամենայնիվ, չի հոգնել և չի ձանձրացել:

Ժողովրդի հետ պարզ ու համոզիչ էին խոսում լենինյան դպրոցի հոետորներ Մ. Ի. Կալինինը, Ս. Մ. Կիրովը, Ա. Վ. Լուենաչարսկին և ուրիշներ: Նրանց հրապարակային ելույթները և ձառերը պերծ էին կեղծ ակադեմիզմից, գորշ և դժվարիմաց ժարգոնից, աչքի էին ընկնում տեսական խոր ընդհանրացումներով, լուրջ, մտածված վերլուծումներով:

Ճառը, պրուցն ու դասախոսությունը բովանդակալից և արտահայտիչ չեն լինի, պատշաճ ներգործություն չեն ուեննա առանց հաջող առածի և ասացվածքի, առակի և առասպելի, հումորի, կենդանի, դիպուկ, պվարձալի խոսքի, սրա-

մըտության, իմաստալից անեկդոտի և թևավոր խոսքի:

Առաձներն ու ասացվածքները ժողովրդական բանահյուսության տեսակներ են, որոնք ժողովրդի բանավոր և գրավոր խոսքում հանդիպում են սեղմ ու պատկերավոր ասույթների ձևով: Առաձներն ունեն այլաբանական-փոխաբերական իմաստ և իրենց բովանդակած միտքն արտահայտում են ոչ թե ուղղակի, այլ անուղղակի ձևով, կյանքից ու բնությունից վերցրած օրինակներով ու պատկերներով: Օրինակ՝ «Գեղ կանգնի, գերան կկոտրի», «Ունքը շինելու տեղ, աչքն էլ հանեց»: Առաջին առածում արտահայտված է այն գաղափարը, որ եթե ժողովուրդը միանա, մեծ գործեր կարող է կատարել: Երկրորդում փոխաբերաբար ընդգծված է այն գաղափարը, որ մի լավ բան անելու նպատակով մարդ ակամա կարող է վնասել եղած լավն ու առավել կարևորը: Ահա և առաձներ երիտասարդության մասին.

Երիտասարդությունը եթե գիտենա,
Օտրությունը եթե կարողանա...

(Ֆրանսիական)

Երբ երիտասարդ ես, խուսափիր հեշտամոլությունից,
Երբ ծեր ես, խուսափիր կծծիությունից:

(Չինական)

Երիտասարդությունը գինովություն է առանց գինու,
Օտրությունը գինի է առանց գինովության:

Երիտասարդության ժամանակ կորցրած ամեն ժամ
Ապագայի համար դժբախտության դուռ կբանա:

(Գերմանական)

Ով ցանկանում է որևէ բան անել՝ միջոց կգտնի.
Ով չի ցանկանում որևէ բան անել, պատճառ կգտնի:

(Արաբական)

Ի տարբերություն առաձների, ասացվածքներում միտքն արտահայտվում է ուղղակի ձևով, առանց այլաբանության: Այսպես, օրինակ՝ «Շատ մի սիրի՛ ատել կա, շատ մի ատի՛ սիրել կա», «Համբերությունը կյանք է», «Ուշ լինի, նուշ լինի» և այլն:

Իսկ առակը գեղարվեստական փոքրիկ ստեղծագործություն է, որում գովաբանվում և խրատվում են լավն ու բարին, գեղեցիկն ու մարդկայինը և, ընդհակառակը, ծաղրվում ու դատապարտվում են վատն ու չարը, տգեղն ու անմարդկայինը: Ըստ անգլիացի հումանիստ, գիտնական Ֆ. Բեկոնի «Ազգի հանձարը, խելքը և ոգին դրսևորվում են նրա առակներում»:

Այո՛, նույնիսկ ամենահետաքրքիր նյութի մատուցումը միապաղաղ և ձանձրալի կլինի, եթե մոռացության է տրվում կենդանի խոսքը, չեն օգտագործվում ժողովրդական խոսքի ամբողջ հարստությունը, նրա պատկերավորությունն ու դիպուկությունը:

Լենինի աշխատությունները հարուստ են գրական-գեղարվեստական ստեղծագործություններից վերցված քաղվածքներով, պատկերավոր այլաբանական արտահայտություններով, համեմատություններով, առածներով, ասացվածքներով, թեևավոր խոսքերով: Նրա երկերում բազմիցս հանդիպում ենք հաճախակի արտահայտությունների. «Մի թքիր ջրհորի մեջ, ջուրը խմելու պետք կգա». այս առածը Լենինն օգտագործել է նարոդնիկ հրապարակախոս Լ. Նադեժդինին ոչնչացնող քննադատության ենթարկելու համար. «Խեղդվողը ձեռքը ծղոտին է մեկնում» ժողովրդական առածը Լենինն օգտագործել է մենշևիկների անկայունությունը ցույց տալու համար, այնուհետև, «Փախչում են, ինչպես առնետները խորտակվող նավից», «Յոթ անգամ չափիր, մեկ անգամ կտրիր», «Կուշտը քաղցածին մանր կբրդի», «Առանց կրակ ծուխ չի լինում», «Ստիպիր հիմարին աստծուն աղոթել, նա ճակատն էլ կջարդի», «Եվ գայերն են կուշտ, և ոչ խարներն անվնաս»: «Նա ծառերի ետևում անտառը չի տեսնում» առածը Լենինը «Տնտեսական նոր շարժումներ գյուղացիական կյանքում» հոդվածում և այլ առիթներով օգտագործել է 18 անգամ: Վ. Ի. Լենինի երկերի լիակատար ժողովածուում կան մեջբերումներ և վկայումներ հայրենական և արտասահմանյան գրողների և բանաստեղծների ավելի քան 230 ստեղծագործություններից:

Այո՛, հոնետությամբ պաղվողը չի կարող

յուրա գնալ առանց գեղարվեստական գրականության օգտագործման:

Հայ դասական գրականության (և ոչ միայն հայ գրականության) վարպետների՝ Սունդուկյանի, Ռաֆֆու, Պոռչյանի, Պարոնյանի, Շիրվանյազեի, Մուրացանի, Նար-Դոսի, Թումանյանի, Իսահակյանի ստեղծած գեղարվեստական կերպարների ու պատկերների տեղին օգտագործումը դասախոսության, ելույթի հաջողության կարևոր պայման է, այն ներգործուն ու պատկերավոր է դարձնում ասելիքը, ապրում ունկընդիրների գիտակցության և զգացմունքների վրա:

Հայ շինականի անցած չարքաշ կյանքի մասին ասելիքը որքա՛ն շահած և տպավորիչ կլինի, եթե, օրինակ, մեջ բերվեն Ղապարոս Աղայանի «Ճախարակ» բանաստեղծության քառատողերը.

Տիգրանիկս գուպա չունի,
Հանդ է գնում ոտաբաց,
Գաթրիելս չուխա չունի,
Միշտ անոտ է սուզ ու լաց:

Մանի՛ր, մանի՛ր, ի՛մ ճախարակ,
Մանի՛ր սպիտակ փաթիլներ,
Մանի՛ր թելեր հաստ ու բարակ,
Որ ես հոգամ ի՛մ ցավեր:

Համաշխարհային գրականության՝ Հոմերոսի, Պանթեի, Սերվանտեսի, Շեքսպիրի, Բայրոնի, Մոլիերի, Գյոթեի, Պոլշկինի, Գրիբոյեդովի, Դոս-

տոնակու, Շչեդրինի, Տոլստոյի, Գոգոլի, Չեխովի, Գորկու, Մայակովսկու, Չարենցի կերտած կերպարների տեղին ու հմտորեն օգտագործումն արտահայտիչ, ցայտուն ու դիպուկ է դարձնում ասելիքը:

Ահա թե հակաֆաշիստական գրող Լիոն Ֆեյխտվանգերը «Օպենհայմների ընտանիքը» վեպում ինչպես է բացահայտում ֆաշիստների կեղծիքը. «Սուտ են նրանց խոսքերը, և սուտ՝ նրանց լուրջությունը: Ստով նրանք վեր էին կենում, ստով նրանք պառկում էին: Նրանց ամբողջ կարգը սուտ էր. սուտ էին նրանց օրենքները, սուտ էին նրանց դատավճիռները, սուտ էին նրանց գերմաներենը, գիտությունը, իրավունքը, հավատը, սուտ էր նրանց նացիոնալիզմը և «սոցիալիզմը»: Սուտ էր նրանց բարոյականությունն ու սերը: Ամեն ինչ սուտ էր: Եվ մի բան միայն ճիշտ էր— նրանց մարդատյացությունը»:

Խոսքի ճոխությանը նպաստում են նաև թևավոր խոսքերն ու մտքերը:

«Լինում են այնպիսի թևավոր խոսքեր,— ասում է Վ. Ի. Լենինը,— որոնք վարմանալի դիպուկությամբ արտահայտում են բավական բարդ երևույթների էությունը» (Լենին Վ. Ի., ԵԼԺ, հ. 25, էջ 166):

Այսպես՝

«Հոգու հարստությունն ամենամեծ հարստությունն է», «Խելքը վարդարում է մարդուն», «Ամենադժվար մասնագիտությունը մարդ լինելն է», «Աշխատանքը բերկրանք է, ծուլությունը՝ չարիք»,

«Դժվար գործի մեջ են գտնում փառքը», «Քո լեզուն թո ձին է, չպահեցիր՝ քեզ վայր կգցի», «Հաղթել բարկությանը՝ նշանակում է հաղթել մեծագույն թշնամուն», «Խրատը դեղի նման է, որքան դառը՝ այնքան բուժիչ», «Մարդն առանց հայրենիքի սոխակ է առանց երգի», «Ավելի լավ է պատվով մահը, քան անարգ կյանքը», «Հայրենի ծուխն ավելի լավ է, քան օտարության կրակը», «Խիպախությունը հաղթանակի կեսն է», «Եթե թշնամին անձնատուր չի լինում, նրան ոչնչացնում են», «Եթե երկու խելոք մարդ են խոսում, ապա կվերջացնեն չավարտած գործը: Եթե խոսեն երկու հիմարներ, ապա կփչացնեն արդեն ավարտածը», «Գիտունին՝ գերի, հիմարին՝ ոչ սիրելի», «Անվորի վենքը՝ վայրույթն է»:

Հոնետորական խոսքի հարստացմանը նպաստում են **աֆորիզմները**, որոնք հակիրճ ու դիպուկ արտահայտում են խորիմաստ մտքեր:

Այսպես, օրինակ.

«Լավ է կույր աչքով, քան կույր մտքով» (Եղիշե):

«Ազատությունն ամենամեծ գանձն է» (Սերվանտես):

«Ով մեկ մոտ սրով գա, նա սրից էլ կընկնի» (Ալ. Նևսկի):

«Սողալու համար ծնվածը թուչել չի կարող» (Մ. Գորկի):

Ըստ Լ. Ն. Տոլստոյի, «Աֆորիզմները փիլիսոփայական դատողությունների շարադրման գրեթե լավագույն ձևն են»:

Այս առումով հռետորին, հրապարակախոսին շատ օգտակար կլինի Վ. Վորոնցովի «Բանակա-նության սիմֆոնիա» աֆորիզմների և ասուլիսների ժողովածուն, որը հրատարակվել է նաև հայերեն, 1981 թ.:

Դա, իրոք, մտքի գանձարան է, որը սեղմ, պատկերավոր ձևով արտացոլում է տարբեր երկրների ու ժողովուրդների շատ սերունդների խոհերն ու փորձը: Նրանում ամփոփված հայրենական և արտասահմանյան հեղինակների աֆորիզմները, ասուլիսները, թևավոր արտահայտությունները, պատկերավոր դատողությունները վերաբերում են բարոյական դաստիարակության պրոբլեմներին, սովորեցնում իսկական մարդ լինել:

Այս կամ այն աֆորիզմը լավ հասակնալու և արտահայտելու համար պահանջվում է մտքի որոշակի լարում, լուրջ մտորում, սեփական վերաբերմունք կյանքի նկատմամբ, իր գործերն ու վարքագիծը քննադատաբար գնահատելու ունակություն և կարողություն:

Վերջապես հումորի մասին, որը հռետորական խոսքի էական տարր է և նպաստում է խոսքի մատչելիությանը, աշխուժացնում լսարանը: Մեծ մտածողներն ու գրողները բարձր են գնահատում հումորն ու երգիծանքը, որպես հասարակական պրոցեսի չափազանց կարևոր մի մասը:

Այսպես՝

«Հումորը մեծ ուժ է: Ոչ մի բան այնպես չի

մերձեցնում մարդկանց, ինչպես լավ, անմեղ ծիծաղը» (Լ. Ն. Տոլստոյ):

«Հումորը խոր պզգամունքի սրամտությունն է» (Ֆ. Մ. Դոստոևսկի):

«Լավ ծիծաղը հոգեկան առողջության ճշմարիտ նշան է» (Մ. Գորկի):

«Ծիծաղն արև է, նա մարդկային դեմքից հեռացնում է ձմեռը» (Վ. Հյուգո):

Հռետորն իր ականջին օղ պետք է անի հույն գրող և փիլիսոփա Բիոնի խորհուրդն ու խրատը.

Առողջ կատակն էլ նման է դեղի—
Զգույշ կիրառիր, ծիծաղիր տեղին,
Որ քեզ չհասկանան սխալ ու պատիք
Ու լինեն քո դեմ մարդիկ դավադիր:

Կամ պարսկատաջիկական X դարի բանաստեղծ Շուքուրի խորհուրդը.

Թեկուզ մի կաթիլ թույն կա լեզվիդ տակ,
Թունոտ բառերով մի արա կատակ:

Վերջապես, ինչպես Արիստոտելն է ասել՝ «Սրամիտը նա է, ով կատակում է համով»:

Մարքսիզմ-լենինիզմի դասականները մեծ նշանակություն են տվել հումորին և երգիծանքին, «ծիծաղի պենքին» և այն հմտորեն օգտագործել գաղափարական հակառակորդների դեմ պայքարելու համար:

1894 թվականին իր «Ի՞նչ են «ժողովրդի բարեկամները» և ինչպես են նրանք մարտնչում սոցիալ-դեմոկրատների դեմ» գրքում Լենինը,

խիստ քննադատության ենթարկելով մարքսիստի հակառակորդներին՝ Միխայլովսկուն և մյուսներին, որոնք անտեղի բանավեճ և արշավանք էին սկսել մարքսիստների դեմ, գրում էր. «Տեսե՛ք, քոթոթն ինչպե՛ս քաջ է, որ փղի դեմ էլ կհաչե՛» (Լենին Վ. Ի., ԵԼԺ, հ. 1, էջ 185):

Հումորի, հեզնանքի և կատակի մեծ վարպետ էր Միխայլովսկուն Կալինինը: Նրա ելույթները, հատկապես երիտասարդության հետ ունեցած հանդիպումներն ու վրույցները գրավիչ էին և հետաքրքիր: Նա գտնում էր, որ միշտ պետք է լսարանը ինչ-որ չափով գրգռել, շարժման մեջ դնել՝ նրան տիրապետելու համար: Դա կարող է ոչ բոլոր դեպքերում հաջողվել, ասում էր նա, բայց, այնուամենայնիվ, պետք է ձգտել դրան:

Այն էլ, սակայն, ասենք, որ այստեղ էլ չափի պահում է հարկավոր: Հումորը պետք է լինի տեղին, այլապես իր դերը չի խաղա և ի վնաս հռետորի, ի վնաս առողջ դատողության կլինի:



Հոետորին ներկայացվող շատ կարևոր, ես կասեի վճռական պահանջ է **լեզվին հիմնովին տիրապետելը:**

«Բոլոր ժամանակներում լեզվի հարստությունը և հոետորական արվեստն ընթացել են կողք կողքի»՝ ասել է Ա. Պ. Չեխովը:

Ի՞նչ է լեզուն:

Լեզուն մարդկային հաղորդակցման անփոխարինելի միջոց է, հասարակության գոյության և պարզացման արգասիք, հասարակական պարզացման ծանրաչափ:

Եվ ոչ միայն դա:

Լեզուն մտածողության գործիք է, մեր մտքերը, գաղափարներն ու պահանջներն արտահայտելու միջոց: Այն հնարավորություն է տալիս թափանցելու աշխարհի գաղտնիքների մեջ, իմանալու բնության և հասարակության օրենքները, առաջ մղելու գիտությունը, տեխնիկան, գրականությունը, արվեստը:

Գլխավորը, սակայն, այն է, որ լեզվի շնորհիվ ազգը պահում և պահպանում է իր հարատևությունը, իր ոգու կայունությունը, դեմքն ու դիմագիծը: «Ա՛խ, լեզուն, լեզուն որ չլիներ, մարդ ինչի նման կլինի... մի ազգի պահողը, իրար միացնողը լեզուն է ու հավատը» (Խաչատուր Աբովյան):

Իսկ ոչ չի ասել ոուս ականավոր մանկավարժ Կ. Ուշինսկին: «Խլեցեք ժողովրդից ամեն ինչ, նա ամեն բան կարող է վերադարձնել: Սակայն խլեցեք լեզուն, և նա այլևս լեզու չի ստեղծի, կարող է նույնիսկ նոր հայրենիք ստեղծել, բայց լեզու՝ երբեք. մեռավ լեզուն ժողովրդի շուրթերում՝ կմեռնի և ժողովուրդը»:

Դասախոսի, պրոպագանդիստի աշխատանքը գաղափարախոսական աշխատանք է: Իսկ «գաղափարները, — ասում է Կարլ Մարքսը, — գոյություն չունեն լեզվից կտրված, լեզվից անկախ»:

Չկա մտածողություն առանց լեզվի: Իսկ լեզվի հարստությունն արդյունք է հստակ մտածողության: «Կարելի է վստահորեն ասել,— գրում է Ալեքսեյ Տոլստոյը,— որ այն մարդը, որը խոսում է լավ լեզվով, մաքուր, լավ, հարուստ լեզվով, ավելի լայն է մտածում, քան այն մարդը, որը խոսում է վատ լեզվով՝ աղքատիկ լեզվով»:

Լեզուն սրտի թարգմանն է: Լեզվի հարստությունը մտքի հարստություն է: Խոսքն, իհարկե, պատկերավոր լեզվի մասին է, քիչ բառերով ու դարձվածքներով շատ բան ասելու, թարմ մտքեր և խոր պզգմունքներ արտահայտելու ընդունակ լեզվի մասին: Լեզվի արժանիքը պաճուճապարդության, ճոռսմաբանության մեջ չէ, ոչ էլ վարժ ու սահուն բառերի առատության: Կարևորը լեզվի պարզությունն ու հստակությունն է, իմաստային, ճշգրտությունը, մատչելիությունը, հնչեղությունը, պահանջներ, որոնք վերաբերում են բոլորին անխտիր, բայց հատկապես դասախոսին, որի խոսքը պետք է հնչի քերականորեն անսըխալ և ճիշտ շեշտադրությամբ, լինի համոզիչ և տրամաբանված:

Ինչպե՞ս գրողը, այնպես էլ հոռետորը պետք է որդնի և չարչարանքով ու տառապանքով գտնի իր միտքն արտահայտելու համար հարկավոր և համապատասխան բառը, բառերի ընտրությունը խոսքում, դրանց դասավորությունն ու արտահայտման ուղիքը ծառայեցնի ասելիքի բազմակողմանի դրսևորմանը, հիշելով հանձարեղ Թուամայանի այն խորիմաստ միտքը, թե «ամեն մի

հնչյուն, ամեն մի բառ, ամեն մի ձև կամ ոճ մի մեծ ստեղծագործություն է, մի ամբողջ աշխարհք»:

Իր մտքերը, իր պզգմունքները լավագույն ձևով արտահայտելու համար հոռետորը պետք է հարուստ բառապաշար ունենա, այլապես ասելիքը կստացվի սովորական, տաղտկալի և լսողի վրա ոչ մի ազդեցություն չի թողնի:

Բառապաշարը մարդու կուլտուրայի չափանիշ է:

Ջարգացման տարբեր աստիճանների վրա կանգնած մարդկանց բառապաշարը տարբեր է լինում: Այդ առումով հետաքրքրական են հետևյալ տվյալները: Ավստրալիական վայրենիին գործածում է մի քանի տասնյակ բառ. անգլիական անգրագետ գյուղացին՝ ոչ ավելի, քան 300 բառ: Ժամանակակից մտավորականը կենցաղում գործածում է 1000—1500 բառ: Գեղարվեստական ստեղծագործություններում գործածել են: Մոլիերը՝ 7.000 բառ, Միլտոնը՝ 8000, Հոմերոսը՝ ավելի քան 9000, Պուշկինը՝ մոտ 10000 բառ:

Ամենահարուստ բառապաշար ունեցել է Շեքսպիրը՝ 15000 բառ, իսկ ոմանց հաշվով՝ 24000 բառ (տվյալները մեջ են բերված Սուրեն Արևշատյանի «Հոռետորական արվեստի հիմունքները» գրքից, էջ 117):

Ունենալով հարուստ բառապաշար, հոռետորը կկարողանա հեշտությամբ, ինչպես Մ. Գորկին է ասել, «այնտեղից ընտրել ամենաճիշտ, ամենապարզ և ամենաուժեղ բառերը»:

Բայց բառապաշարը դեռ բավական չէ: Հար-

կավոր է բառերը տեղին և նախատակահարմար գործադրել, նախադասությունները քերականորեն ճիշտ կապակցել և շարահյուսել: Ղրանից է կախված մտքի ճշտությունը:

Իրավացի է Ռուբեն Զարյանը, երբ ասում է. «Մարդու բառապաշարը որքան հարուստ լինի, այնքան լավ: Բայց ավելի ցանկալի է, որ նա իր բացատրած նյութի զգացողությունն ունենա նաև, նույն բառապաշարով չխոսի Տերյանի և Զարենցի մասին ելույթ ունենալիս, նյութի զգացողությունը մղի խոսողին տարբեր բառերի դիմել «Մթնշաղի անուրջները» և «Ամբոխները խելագարվածը» բնորոշելիս»:

Մտքերը հստակ արտահայտելը, խոսքի մեջ բառերի ճշգրիտ ընտրությունը ձևավորում են մարդու մտածելակերպը, նրա պրոֆեսիոնալ հրմտությունը մարդկային գործունեության բոլոր բնագավառներում: Իսկ խոսքի ճշտությունն ապահովվում է՝ առաջին՝ բառերի ճշմարիտ օգտագործմամբ, երկրորդ՝ դրանց ճիշտ արտասանությամբ, երրորդ՝ նախադասության գրավիչ կառուցմամբ:

Ղասախոսը և պրոպագանդիստը պետք է պատշաճ ուշադրություն դարձնեն իրենց լեզվական կուլտուրային, գտնեն նյութի մատուցման նոր, առավել հետաքրքիր ձևեր ու եղանակներ, հրաժարվեն շաբլոնից, միապաղաղ, տաղտկալի և ստանդարտ նախադասություններից, օգտագործեն այնպիսի բառեր և բառակապակցություններ, որոնք առավել տպավորիչ են, արտահայտիչ,

առավել հասկանալի և մատչելի յուրաքանչյուր ունկնդրի համար:

Հանրահայտ բառերի ու արտահայտությունների, պատրաստի բանաձևերի ու ֆրազների չափից ավել օգտագործումն աղքատացնում, հրնչեղությունից զրկում են լեզուն:

Մ. Ի. Կալինինը մի առիթով դիմելով ուսուցիչներին, ասել է. «Ինչու դուք, երբ պատմում եք, ձգտում եք խոսել պատրաստի բանաձևերով: Չէ՞ որ դուք ուսուցիչներ եք, դուք լավ գիտեք ուսաց լեզուն: Իսկ գիտե՞ք ինչ է նշանակում խոսել պատրաստի ֆրազով. սա նշանակում է, որ ձեր միտքը չի աշխատում, այլ աշխատում է միայն լեզուն: Պատրաստի ֆրազով դուք մարդկանց վրա տպավորություն չեք գործի: Չեք գործի այն պատճառով, որ այն առանց ձեզ գիտեն: Դուք վախենում եք, որ երբ ձեր ձևով ասեք, այնքան էլ գեղեցիկ չի լինի: Մխավում եք, այն ավելի լավ կլավի, նրա մատչելիությունը մեծ է»

(Калинин М. И., О коммунистическом воспитании, 1956, стр. 138):

Դա լավ խորհուրդ է նաև պրոպագանդիստներին ու ագիտատորներին:

Այո՛, բանավոր խոսքի ազդեցությունն ունկնդրի վրա շատ բանով կախված է լեզվի հրնչողությունից, պատկերավորությունից, նպատակադրմանը համապատասխան լինելուց:

Ասենք, սակայն, որ ոչ բոլոր դեպքերում են կարդացվում լեզվական բարձր կուլտուրայով դասախոսություններ: Ոչ ամենուրեք է հաղթա-

հարված լեզվական խոտանը՝ ականջ ծակող ճռճոցը, ընդհանուր բնույթի ճառերը, հանրահայտ, ջղայնացնող խրատներն ու քարոզները:

Այսպես, ուրեմն, լեզուն հոգետորի համար անհրաժեշտ աշխատանքային գործիք է, նա պարտավոր է կատարելապես իմանալ այն լեզուն, որով հանդես է գալիս, կարողանա գործնականապես կիրառել նրա արտահայտչական միջոցները: Չտիրապետելով լեզվին, նրա բազմազանությանը, հնարավոր չէ սովորել ճիշտ մտածել: Ասենք որոշակի. նա, ով վատ է տիրապետում լեզվին, չի կարող լինել լավ հոգետոր: Նույնիսկ ամենաճշմարիտ ու խոր միտքը, եթե այն շարադրվում է վատ լեզվով, կարող է գորշ և անհրապուրիչ լինել և վերջ ի վերջո չհասնել լսողի գիտակցությանը: Նույնիսկ ամենաջերմ զգացմունքի նկատմամբ, եթե համապատասխան բառեր չգտնվեն այն արտահայտելու համար, ունկնդիրը կարող է մնալ սառն ու անտարբեր:

Պուշկինն ասում էր, թե գրական երկում կա երկու տեսակի անհեթեթություն. «...Մեկն առաջ է գալիս բառերով փոխարինվող զգացմունքների և մտքերի անբավարարությունից, մյուսը՝ զգացմունքների ու մտքերի առատությունից և դրանք արտահայտելու բառերի պակասությունից»:

Դա ամբողջովին վերաբերում է նաև հոգետորական արվեստին:

Մեր ժամանակներում չի կարող հոգետոր լինել նա, ով հարուստ է հոգեպես, բայց անթափ լեզվից:

Այո՛, հոգետորի պենքը լեզուն է, խոսելու վարպետությունը: Միայն նա կարող է պարզ ու հըստակ մտածել, գրագետ կերպով և ճիշտ շարադրել իր մտքերը, ով տիրապետում է մայրենի լեզվին: «Մայրենի լեզուն սովորելը,— ասում է Մ. Ի. Կալինինը,— մեծ գործ է: Մարդկային մշտքի ամենամեծ նվաճումները, ամենախոր գիտելիքները և ամենավառ զգացմունքները մարդկանց՝ անհայտ կմնան, եթե նրանք պարզ և ճիշտ չձևակերպվեն բառերով» («Դաստիարակության և ուսուցման մասին», էջ 222):

Գլխավորը պարզ ու մատչելի խոսելն է, այնպես, որ խոսքը հասնի ամեն մի լսողի գիտակցությանը: Լեզվի պարզությունը պարզ դատողության արդյունք է: Վլ. Մայակովսկին թունդ ծաղրի էր ենթարկում բոլոր նրանց, ովքեր սառը, գրասենյակային, անկենդան լեզուն գերադասում էին կենդանի լեզվից:

Ով-ով, բայց հոգետորը պարտավոր է մշտապես կատարելագործել իր լեզուն: Այդ առումով խիստ ուսանելի է ռուս գրող և լեզվաբան Լև Ուսպենսկու օրինակը. «Լավ խոսել,— ասում է նա,— մարդ սովորում է ամբողջ կյանքում, առաջինից մինչև վերջին օրերը: Ես 76 տարեկան եմ, բայց դեռ էլի կատարելագործում եմ իմ խոսքի երկու տեսակն էլ՝ և՛ գրավոր, և՛ բանավոր»:

Ռուս նշանավոր մտավորականներից մեկն ասել է. «Լեզուն գործիք է, ջութակից էլ դժվար գործիք. միջակությունը թե՛ մեկ, և թե՛ մյուս գործիքի համար անհանդուրժելի է»:

Ուրիշ էլ ով, եթե ոչ դասախոսը, պրոպագանդիստը պետք է լինեն մաքուր, ճշգրիտ, արտահայտիչ ու պատկերավոր լեզվի ջերմ պաշտպաններ:

Մարքսիստականների, մեր կուսակցության և պետության, միջապգային կոմունիստական շարժման ականավոր գործիչների հրապարակային ելույթները ցույց են տալիս, թե ինչպես նրանք հմտորեն և ստեղծագործաբար են մատուցում նյութը, այն դարձնում հասանելի և հասկանալի ամեն տեսակ լսարանի համար: Մարքսի, էնգելսի, Լենինի աշխատություններն անաղարտ, պարզ ու հստակ ոճի, լեզվական բարձր կուլտուրայի անգերապանց օրինակներ են: Սովորենք նրանցից, համառորեն բարձրացնենք մեր լեզվական կուլտուրան՝ ահա խնդիրը:

* * *

Հայոց լեզուն, որ մեզ փոխանցվել է մեր նախորդներից, հարուստ և կենդանի լեզու է, աչքի է ընկնում իր կուռ կառուցվածքով և ընդունակ է արտահայտելու ամենանուրբ երանգները: Եվ հոետորը պարտավոր է կատարելապես տիրապետել մայրենի լեզվի ոչ միայն քերականական կառուցվածքին, այլև բառապաշարին, նրա արտահայտչական և արտասանական ազգային ձևվին, ազգային մտածողությանը:

Հայոց լեզուն եղել է մեր ազգի գոյատևման, նրան հոգևոր ստրկացումից փրկելու, նրա ազա-

տության և անկախության համար պայքարի հզոր զենք: Ո՛չ պատմական անբարենպաստ պայմանները, ո՛չ օտարերկրյա վավթիչների անհամար ասպատակությունները չկարողացան մեզ լեզվափոխ անել, վտանգել մեր լեզվի գոյությունը:

«Գալով անհիշելի ժամանակներից, անցնելով բազում դարերի միջով, շփվելով բավարժիվ ազգերի լեզուներին, հայոց լեզուն մի յուրատեսակ հանրագիտարան է անհիշելի ժամանակներից» (Պարույր Սևակ):

Հայ սոցիալիստական ազգի էկոնոմիկայի, գիտության և մշակույթի բուռն զարգացման հետ միասին հայոց լեզուն ևս զարգացավ, հարստացավ, դարձավ պետական լեզու: Հայկական ՍՍՀ սահմանադրության 72-րդ հոդվածում ասված է. «Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության պետական լեզուն հայերենն է: Հայկական ՍՍՀ-ն պետական հոգատարություն է իրականացնում հայոց լեզվի ըստ ամենայնի պարզացման նկատմամբ և ապահովում նրա գործածությունը պետական ու հասարակական մարմիններում, կուլտուրայի, լուսավորության և այլ հիմնարկներում»:

Լեզուն մեր ազգային անգնահատելի հարըստությունն է և նրա մաքրության ու զարգացման հարցը չի կարող չմտահոգել մեզանից ամեն մեկին:

Անդրադառնալով այդ հարցին, չենք կարող չասել, որ որոշ մարդիկ թուր պատկերացում

ունեն ժամանակակից հայ լեզվաշինության մասին: Եղել են և կան երկու իրարամերժ, ծայրահեղ միտումներ, որոնց մասին շատ է գրվել ու խոսվել: Ոմանք կողմնակից են օտար տերմինների և բառերի անհարկի գործածմանը, պաշտպանում են դրանց անթարգմանելիության «տեսությունը», այն ժամանակ, երբ մեր գրական լեզվում կան և կարելի է ստեղծել դրանց համարժեքները: Ըստ այդ սկզբունքի, հայերեն պետք է լիներ ոչ թե **աշխարհագրություն**, այլ **գեոգրաֆիա**, ոչ թե **գրականություն**, այլ **լիտերատուրա**, ոչ թե **համայնարան**, այլ **ունիվերսիտետ**, ոչ թե **երկրաչափություն**, այլ **գեոմետրիա**, ոչ թե **հեռախոս**, այլ **տելեֆոն** և այսպես...

Այդ «տեսությունը» մերժվել և մերժվում է: Ընդհանրապես մեր լեզվաբանների, գրականագետների, գրողների, ժուռնալիստների՝ հայերենում երբեմնի գործածվող օտարազգի մի շարք բառեր իրենց տեղը պիջեցին հայերեն համարժեքներին: Այսպես. **իդեա**, **իդեոլոգիա**, **պրոգրես**, **պանորամա**, **պալիլիդոն**, **ֆիլոլոգ**, **բիոլոգ**, **պրոպակտ**, **լաուրեատ**, **թեորիա** բառերի փոխարեն ընդունված են և գործածվում են **գաղափար**, **գաղափարախոսություն**, **առաջադիմություն**, **համայնապատկեր**, **տաղավար**, **բանասեր**, **կենսաբան**, **պոլոտա**, **դափնեկիր**, **տեսություն** բառերը, և դա լիովին համապատասխանում է մեր լեզվի ներքին օրենքներին:

Վերստին գործածության մեջ դրվեցին **կուսակցություն**, **հեղափոխություն**, **սահմանադրու-**

թյուն, **հանրապետություն**, **նստաշրջան**, **խորհուրդ պատգամավոր** և շատ ու շատ այլ բառեր:

Մեր լեզվի բառապաշարը հարստացավ **տիեզերագնաց**, **տիեզերանավ**, **տիեզերադաշտ**, **տիեզերակայան**, **տիեզերատեսություն**, **մեկնարկ**, **լուսանավ**, **լուսագնաց** և այլ գեղեցիկ ու բարեհնչուն բառերով:

Մեր գրողների ստեղծագործություններում հանդիպում ենք բազմաթիվ նոր տերմինների՝ համահնչուն մեր լեզվի ներքին կանոններին: Վերջին տասնամյակներում հայացվել և ճշգրտվել են գիտատեխնիկական հավարավոր տերմիններ, ճշգրտվել է բազմաթիվ բառերի ու տերմինների հայերեն տառադարձությունը:

Մայրենի լեզվի անաղարտության շահը պահանջում է, որ այսուհետև էլ անշեղորեն ղեկավարվենք լեռնիյան հայտնի դրույթով՝ պատերազմ հայտարարել օտար բառերի անհարկի գործածությանը, «...խոսել պարզ ու հասարակ՝ մասսային մատչելի լեզվով, վճռականապես դեն նետելով դժվար հասկանալի տերմինների, անգիր ասված, պատրաստի, բայց մասսային դեռևս անհասկանալի օտար բառերի, նրան անծանոթ լուզունգների, բնորոշումների, եզրակացությունների ծանր հրետանին» (**Լենին Վ. Ի.**, ԵԼԺ, հ. 14, էջ 115):

Վ. Ի. Լենինն իր հրապարակային ելույթներում օգտվում էր միայն այն օտար բառերից, որոնք արդեն դարձել էին հանրահայտ կամ առավել ճիշտ էին արտահայտում այս կամ այն հաս-

կացութիւնը: Բայց նույնիսկ նման դեպքերում նա սովորաբար օտար բառը թարգմանել էր տալիս ուսերեն կամ պարզաբանում նրա նշանակութիւնը:

Ամեն մի լեզու, այդ թվում և հայերենը, կարիք ունի և ընդունակ է ընկալելու և ստեղծելու նոր տերմիններ, նոր բառեր, և դա միանգամայն օրինաչափ է:

Ժամանակին հայերը մյուս ժողովուրդներից փոխ են առել շատ բառեր ու տերմիններ, և դրանում անբնական ոչինչ չկա:

Հայոց լեզվի վրա բարերար ազդեցություն է գործել ռուսաց հարուստ լեզուն, որից և որի միջոցով այլ լեզուներից փոխառվել և փոխառվում են այնպիսի տերմիններ ու բառեր, որոնց համարժեքը հայերենում չկա, և մեր լեզվի բառակազմական միջոցներով դրանք հաջողությամբ կազմել հնարավոր չէ: Այսպես, ռուսերենից և ռուսերենի միջոցով հայոց լեզվի բառապաշարի մեջ են մտել **ագիտատոր, ապարատ, ասպիրանտ, բալետ, բյուրոկրատ, դեմոկրատ, էլեկտրիֆիկացիա, էկրան, էպոս, իդեալ, լաբորանտ, լեյտենանտ, կինո, կոպեկ, մասշտաբ, մասսա, միլիցիա, սեմինար, սովխոպ, տեխնիկա, օպերա, ֆաբրիկա, ֆակուլտետ** և շատ այլ բառեր, որոնք հասանելի և հասկանալի են դարձել ամեն մի հայի համար:

Լեզուն կենդանի և կենսունակ օրգանիպ է:

«Ամեն մի լեզու,— գրում է «Պրավդան»,— արում է, անընդհատ փոփոխվելով, քանի դեռ ողջ է նրա ստեղծողը, նրա տերը՝ ժողովուրդը»:

Սովետական հասարակության առաջընթացը, գիտության և տեխնիկայի, մշակույթի աննախադեպ վերելքը, ինֆորմացիայի մասսայական միջոցների (մամուլի, հեռուստատեսության, ռադիոյի) պարզացումը խոր ազդեցություն են գործել սովետական ժողովուրդների գրական լեզուների վրա, փոփոխությունների հանգեցրել լեզվական միջոցների համակարգում, ընդլայնել լեզվի ֆունկցիաները:

Գիտատեխնիկական հեղափոխության շնորհիվ բուռն պարզացում է ստացել մասնագիտական տերմինաբանությունը: Բավական է ասել, որ տեխնիկայի միայն մեկ բնագավառի՝ էլեկտրոնիկայի բառապաշարի մեջ մտնում է 60 հազար անվանում: Ժամանակակից քիմիայի բառարանն իր մեջ ընդգրկում է մի քանի միլիոն տերմին:

Ուրեմն, չպետք է ընդդիմանալ բոլոր այն բաների ներմուծմանը, որոնք ժողովուրդների փոխադարձ կապերի, հասարակական նոր հարաբերությունների, ժողովրդական տնտեսության, գիտության և տեխնիկայի պարզացման արդի պայմաններում օրգանապես մերվում են մեր լեզվին և, անշուշտ, հարստացնում այն: Դա լեզվի պարզացման օբյեկտիվ պրոցես է, որն արգելակել չի կարելի:

Ոչ մի լեզու չի կարող հարստանալ և պարզանալ, եթե պարփակվի ազգային կեղևի մեջ,

ընդդիմանա այն բառերի և տերմինների ներմուծմանը, որոնք համապատասխանում են իր ներքին կանոններին:

«Ամեն մի լեզվի պատմություն,— ասում է Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս է. Աղայանը,— այդ լեզվի վարձագման, մշակման, հարստացման ու կատարելագործման վերընթաց պրոցես է... Իբրև օբյեկտիվ ռեալություն, լեզուն վարձացող երևույթ է: Ինքնավարձացումը տեղի է ունենում աննկատելի, մասնակի փոփոխությունների աստիճանական ծավալումով ու կուտակումով, որ ժամանակի ընթացքում հանգեցնում է որակական անցումների»:

Օտար տերմինների թարգմանությունը և հայերենի համարժեքներով դրանց ստեղծումը լեզվի վարձացման օրենք է: Աշխարհում գոյություն ունեցող ավելի քան երկու հազար լեզուներից յուրաքանչյուրը մինչև ժամանակակից ձև ստանալն անցել է տարբեր աստիճաններ, կրել է բավականին փոփոխություններ և հարստացել նոր անբնիկներով ու բառերով:

Այդ պրոցեսը, բնականաբար, տեղի է ունեցել նաև մեր լեզվում, որն այսօր ժամանակի առավել վարձացած լեզուներից է, աչքի է ընկնում ժողովրդական իմաստության գոհարներով, ճշգրտությամբ, մատչելիությամբ, հակիրճությամբ, իր բառադարձվածքային կայուն կառուցվածքով, հնչյունաբանական և քերականական ամուր համակարգով, ձևերի և երանգների բազմազանու-

թյամբ: Այն շարունակում է հարստանալ և կատարելագործվել՝ իր մեջ ներառելով այն ամեն լավը, ինչ կա մյուս լեզուներում:

Սակայն տեղի ունեցող լեզվական փոփոխությունները, ուրիշ լեզուներից բառամթերքի լայն ներգրավումը լեզուն բնավ էլ չեն զրկում ազգային յուրահատկությունից: Գիտատեխնիկական հեղափոխության դարաշրջանում նույնպես լեզուն մնում է իբրև ազգային մշակույթի բաղադրիչ, գոյություն ունի և վարձանում է սեփական հիմքի վրա, հաջորդայնություն պահպանելով անցյալի հետ: Լեզուն հավիտենական է:

«Տեխնիկական առաջադիմությունը,— նշում է ուսուցիչ Վ. Ս. Գորբաչևիչը,— չի հանգեցնում սկզբունքորեն նոր լեզվի ստեղծման: Փոխառյալ տերմինների ներհոսը և միջազգային բառերի տեսակարար կշռի մեծացումը բնավ էլ չեն նշանակում ազգային կողմերի վերացում» (Горбачевич К. С. Русский язык. Прошлое. Настоящее. Будущее. М., 1984, стр. 108):

Լեզուն կալուն համակարգ է և հասարակության մեջ տեղի ունեցող ամենահեղափոխական վերափոխումներն անգամ «լեզվի հեղափոխության» չեն հանգեցնում:

Միաժամանակ պետք է հաղթահարել փոխառման պրոցեսի տարերայնությունը՝ ամեն ինչ թարգմանելու, «հայացնելու» միտումը: Չի կարելի լեզուն փորձադաշտ դարձնել, սեփական ճաշակը պարտադրելով բոլորին:

Կան մարդիկ, որոնք հորինում են այնպիսի

բառեր, թարգմանում են այնպիսի տերմիններ, որոնց կարիքը մեր լեզուն ամենևին չի պզուտ: Այսպես, նրանք առաջարկում են կոմպոզիտորին կոչել **Էթգահան, դիրիժորին՝ նվագարար, չեմպիոնին՝ ակոյան, անսամբլը՝ համույթ, ռադիոն՝ ձայնասփյուռ, կոնյակը՝ բարկոդի** և այլն: Մշակույթը, որ կուլտուրա բառի թարգմանությունն է, չի կարող բոլոր դեպքերում համարժեք լինել և ամենուրեք գործածվել (հո չե՛ս ասի՝ արտադրության մշակույթ, աշխատանքի մշակույթ, մշակութային հեղափոխություն, մշակութային մարդ):

Օգտակար է հիշել, թե ժամանակին ինչ է ասել Ղապարոս Աղայանը. «Մայրահեղ մաքրասիրությունը ծայրահեղ օտարության չափ արհամարհելի է»:

Հայոց լեզուն անաղարտ պահելու, նրա բառապաշարը հարստացնելու մեծ ու շնորհակալ գործին սիրով և պատասխանատվությամբ են լծված մեր լեզվի և գրականության հավաքավոր ուսուցիչներն ու ուսուցչուհիները: Այդ գործում անուրանալի է մեր լեզվաբանների ու գրականության գործիչների աշխատանքը:

Հայոց լեզվի պարզացման գործում մեծ դեր են խաղացել և խաղում են հանրապետությունում լույս տեսնող հայատառ թերթերն ու ամսագրերը, մասնավորապես Հայաստանի կոմկուսի Կենտկոմի, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի և Մինիստրների խորհրդի օրգան «Սովետական Հայաստանը», «Ավանգարդը», «Գրական թերթը», «Երեկոյան Երևանը»:

Դրանց նյութերն աչքի են ընկնում ոչ միայն իրենց հարուստ բովանդակությամբ, այլև շարադրրանքի, դարձվածքների պարզ ու հստակ կառուցվածքով, մատուցման թարմ, մատչելի, ինքնատիպ ոճով, լեզվական պատշաճ կուլտուրայով:



Հայոց լեզուն, ինչպես որ սովետական բոլոր ժողովուրդների ազգային լեզուները, գնալով հարստանում և պարզանում է: Այսօր խոսք կարող է լինել միայն մեր լեզվի հետագա պարզացման, մաքրության և կուլտուրայի մասին:

Վատատես չլինենք և ասենք, որ մեր ժողովրդի կրթական մակարդակի բարձրացման շնորհիվ մարդկանց մեծ մասը գրում և խոսում է վայելուչ հայերենով. հաճախ մենք ակնատես ենք լինում, թե ինչպես շարքային բանվորը և գյուղացին ամբիոնից, մամուլի էջերից, ռադիոյով և հեռուստացույցով իրենց մտքերն արտահայտում են մաքուր ու գեղեցիկ հայերենով, մի բան, որ մեզ ուրախություն է պատճառում:

Միաժամանակ ընդունենք, որ ոչ բոլոր դեպքերում ուշադիր և հարգանքով ենք վերաբերվում մեր մայրենիին, ոչ բոլոր դեպքերում է մեր մարդկանց շուրթերից հայոց լեզուն հնչում կոկ ու սահուն, մաքուր և անաղարտ, բովանդակալից և պատկերավոր, ոչ բոլորն են կատարելապես տիրապետում մեր լեզվին, օգտագործում նրա հարուստ նրբերանգները և ժողովրդական իմաս-

տուխամբ հագեցած թևավոր խոսքը, միտքն ու աֆորիզմը, որոնք նպաստում են լեզվի ճոխությանը: Ավելին, հաճախ լեզուն խճողվում է տեղական բարբառով, անըմբռնելի դարձվածքներով, տուրք է տրվում մակաբույծ, պարապիտալին բառերի գործածությանը՝ «այսպես ասած», «հասկանում եք», «տեսնում եք», «կասկածից դուրս է», «կնշանակի» և այլն: Երբեմն էլ խոսքը խճողվում է շտամպած, գրասենյակային տաղտուկ բառերով, որոնք լեզուն պրկում են ինքնատիպությունից, կենդանությունից և աշխուժությունից:

Խորապես ցավալի է, որ երբեմն հեռուստացույցով և ռադիոյով հանդես են գալիս մարդիկ (այդ թվում պաշտոնատար անձնավորություններ) և խոսում աղավաղված հայերենով, որն ակընթարթորեն նկատելի է դառնում և արդարացի վրդովմունք պատճառում: Մի պարզ ու հասարակ միտք արտահայտելիս շփոթում են եզակիին ու հոգնակին, ռճական, շարահյուսական, շեշտադրական սխալներ են թույլ տալիս: Որոշ մարդկանց մոտ «աշխատանքը» դառնում է «ախշատանք», «բաշխումը»՝ «բախշում», «սեպտեմբերը»՝ «սեկտեմբեր», «իրավամբը»՝ «իրավմամբ», «արժանվույնը»՝ «արժանավույն», «թամադան»՝ «թամադիա», «պրոպագանդան»՝ «պրոպագանդիա», «թունավորը»՝ «թուլնավոր», «գունավորը»՝ «գուլնավոր», «մշակութայինը»՝ «մշակույթային», «հյուրասիրությունը»՝ «հույրասիրություն», «ֆիլիկան», արտասանվում է «ֆիլիկա», «կոմի-

տեն»՝ «կոմիտե», «Մոսկվան»՝ «Մոսկվա»: Ականջ է ծակում, երբ «հայրենիք» բառը որոշ դերասանների շուրթերից հնչում է «հայրենիք»:

Հարկավոր է զգուշ լինել: Բառի, խոսքի արտասանությունը, նրանց անձշտությունն ու աղտոտվածությունն ակնթարթորեն տեսանելի են դառնում և վատ տպավորություն թողնում, աննպաստ կարծիք ստեղծում արտասանողի մասին:



Այսպես, ուրեմն, մայրենի լեզվի մաքրության և կուլտուրայի համար պայքարը համահասարակական գործ է, ամեն մեկի և բոլորի գործը. մենք պետք է կոխվ հայտարարենք մայրենի լեզուն աղավաղողներին և աղձատողներին:

Ռուբեն Զարյանը պատմում է, թե ինչպես վահրամ Փափազյանը մի անգամ հանդիպում է ունենում Երևանի միլիցիայի աշխատողների հետ: Ջեկուցումից հետո միլիցիոներները ողջունում են աշխարհահռչակ դերասանին: Իր շնորհակալական խոսքում Փափազյանը նկատում է ահա թե ինչ.

— Ինչ լավ հայերենով էին խոսում այս ամբիոնից ինձ ողջունողները: Այն ընկերը, որ առանց թղթի կտորի խուսեց այդքան գեղեցիկ, նույնպես միլիցիայի աշխատող է:

Դահլիճում նստածներն ասում են, թե՛ այո՛, խոսողը միլիցիոներ է:

— Անցյալ օրը,— շարունակում է խոսքը Փափապյանը,— գնացել էի փոստ՝ մի ծրար արտասահման ուղարկելու: Կողքիս կանգնած էր մի կին, երիտասարդ հայ տիկին՝ մանչուկի ձեռքից բռնած: Եվ պատկերացնո՞ւմ եք, այդ գեղեցիկ, հրապույրով լի կինը իր մանչուկի հետ խոսում էր մի այնպիսի անձոռնի հայերենով, որ վարհուրեցի: Քանի որ ձեր մեջ լավ հայերեն իմացողներ կան, ապա աղբյուրագին խնդրում եմ ձեզ, չե՞ք կարող, արդյոք, մեր լեզուն այդպես անխնա աղավաղողներին, անձոռնի հայերենով խոսողներին կալանքի տակ առնել:

Դահլիճում ուրախ ծիծաղ է բարձրանում:

— Մի ծիծաղեք, լուրջ եմ ասում: Մի՞թե կարծում եք, որ դրանց հասցրած վնասը նվազ է գրպանահատի հանցանքից (տե՛ս, **Ռուբեն Զարյան**, Վահրամ Փափապյան, Երևան, Հայաստան, 1972, էջ 78—79):

Իսկապես ցավալի է, որ մարդ չի կարողանում իր միտքը, իր պագմունքը ճշգրիտ ձևակերպված բառերով ու նախադասություններով ուրիշներին ասել այն, ինչ որ կամենում է ասել: Ես գիտեմ մի գործարանի դիրեկտորի՝ լավ աշխատող, բանիմաց դիրեկտորի, որի ղեկավարած ձեռնարկությունն առաջավոր է ամեն տեսակետից: Բայց ինչ, երբ նրան հարկ է լինում այս կամ այն նիստի, ժողովի ամբիոն բարձրանալ, պատմել գործերի մասին, սկսում է կմկմալ, շփոթվել, մոռանալ

180

ասելիքը, որով և թուլացնում է կոլեկտիվի նվաճումների տպավորությունը:

Մեր ժամանակներում, երբ աշխատավորական ցանկացած կոլեկտիվում հապվագյուտ են այնպիսիները, որոնք միջնակարգից ցածր կրթություն ունեն, դժվար է պատկերացնել ինտելիգենտ մարդու, առավել ևս ղեկավարի՝ մեծ թե փոքր, որը կարող է յուր գնալ առանց գրելու և խոսելու հմտության, առանց մայրենի լեզվին տիրապետելու:

Ճիշտ է, կան այդպիսի մարդիկ, որոնք «յուր են գնում» և երբեմն նույնիսկ քմիծիծաղով ասում են՝ «Մենք հոետոր չենք, մենք գործի մարդիկ ենք, առանց ճարտարախոսության էլ կապրենք»:

Ինչ ասել այդպիսիներին: Նման մարդկանց ավելի լավ չես պատասխանի, քան Անտոն Պավլովիչ Չեխովը. «Ինտելիգենտ մարդու համար վատ խոսելը, ըստ էության, պետք է համարվի նույնպիսի անվայելուչ բան, ինչպես գրել-կարդալ չիմանալը»: Մարդ մտածում է միայն լեզվի միջոցով: Իսկ իսպանացի գրող Սերվանտեսի արտահայտությամբ, «առանց մտածելու խոսելը նույնն է, ինչ որ առանց նշանառության կրակելը»:

Հոետորին ներկայացվող պահանջների մասին մեր ասածից հետևում է, որ նա պետք է ունենա գաղափարական բարձր մակարդակ, մարքսիս-

տական-լենինյան խոր գիտելիքներ, նորի բարձր
վզացում, իրադրության, ժամանակի մեջ կողմնո-
րոշվելու հմտություն, այն բանի հիմնավոր իմա-
ցություն, ինչի մասին խոսում է, ստեղծագործա-
բար մտածելու կարողություն, ընթերցողին հե-
տաքրքրող թեմայի ընտրության ունակություն,
փաստերի խոր իմացություն և դրանց ճշգրիտ
շարադրում, բացարձակ գրագիտություն, ասելիքը
պատկերավոր, հստակ, պարզ, հակիրճ ու հաս-
կանալի շարադրելու կարողություն, վերջապես,
խոսքի տեխնիկային, հոեռորական արվեստին տի-
րապետելու անհազ ծարավ:

Դասախոսը և, առհասարակ, կուսակցական,
պետական և հասարակական աշխատողը, որը
գործ ունի մարդկանց հետ, պետք է անդադրում
աշխատի իր վրա, անընդհատ բարձրացնի իր
գաղափարական-քաղաքական մակարդակը, խո-
րապես իմանա պատմությունը, գրականությունը,
կողմնորոշվի կուլտուրայի և արվեստի հարցե-
րում, տիրապետի գիտելիքների հիմունքներին,
իմանա մարդկային բնավորությունն ու հոգե-
բանությունը, ինչպես արդեն ասել ենք, տիրապե-
տի ներդաշնակ, գեղեցիկ, բովանդակալից խո-
սելու արվեստին:

Դրա համար հարկավոր է սովորել և սովորել:
Երբ հեղափոխության փայլուն տրիբուն Սերգեյ
Միրոնովիչ Կիրովին հարցնում են, թե նա սովո-
րել է ելույթ ունենալ, նա պատասխանել է.
«Այո՛, ես սովորել եմ խոսքի տեխնիկան: Զանի որ
ինձ, աշխատանքի բնույթով, հարկ է լինում հա-

ձախ ելույթ ունենալ, ես պարտավոր եմ այդ
անել, որքան կարող եմ, լավ: Իսկ դրա համար
հարկավոր է իսկական ուսուցում»:

Սովորելու, իր միտքը հարստացնելու ան-
փոխարինելի միջոցը գիրքն է, ընթերցանությունը:
Ա. Ի. Գերցենն ընթերցանությունը համարում էր
բազմակողմանի կրթության լավագույն միջոցը:
Ըստ Մաքսիմ Գորկու՝ «Գիրքը թերևս առավել
բարդ ու մեծ հրաշալիք է այն բոլոր հրաշալիք-
ներից, որ մարդկությունն արարել է ապագայի
երջանկության՝ հպորության ճանապարհին»:
Այ-
նուհետև, ցույց տալով գրքի նշանակությունը
մարդու հոգևոր աճի, նրա բարոյական բարձրաց-
ման գործում, Գորկին գրում է. «Ամեն մի գիրքը
մի փոքրիկ աստիճան էր, որի վրա բարձրանալով
ես կենդանուց բարձրանում էի դեպի մարդը».

Հոեռորը պետք է անձնական գրադարան ունե-
նա, որտեղ մարքսիստի դասականների երկերի,
կուսակցության համագումարների, կոնֆերանս-
ների, Կենտկոմի պլենումների նյութերի հետ
միասին պետք է լինեն ուսումնական հատուկ
ձեռնարկներ, քաղաքական, փիլիսոփայական բա-
ռարաններ: Հայ հոեռորն իր ձեռքի տակ մշտա-
պես պետք է ունենա Հր. Աճառյանի «Արմատա-
կան բառարանը», Էդ. Աղայանի «Արդի հայերենի
բացատրական բառարանը», Հ. Խ. Բարսեղյանի
«Հայերեն ուղղագրական, ուղղախոսական, տեր-
մինաբանական բառարանը», Ա. Մ. Սուբիասյա-
նի, Ս. Ա. Գալստյանի «Դարձվածքաբանական

բառարանը» և այլ բառարաններ ու տերմինաբանական տեղեկատուներ:

Հայոց լեզվի պատկերավորությունը, գեղեցկությունն ու ճոխությունը երևան են գալիս Աբովյանի, Րաֆֆի, Մուրացանի, Շիրվանշահեի, Նար-Դոսի, Տերյանի, Թումանյանի, Իսահակյանի, Դեմիրճյանի, Զորյանի, Չարենցի, Շիրազի, Պ. Սևակի երկերում, որոնք հարուստ են խորագացումով և համոզվածությամբ, հագեցված են խոսքի, հրապարակախոսության, էպիտետների և պատկերավոր արտահայտությունների օրինակներով, որոնց տեղին ու հմտորեն օգտագործումը փայլ և աշխուժություն կտան ելույթին:

Սիստեմատիկ ընթերցանությունը խոսքի կուտուրային տիրապետելու, լեզուն կատարելագործելու շատ կարևոր պայման է:

Սակայն հոետորի համար ընթերցանությունը գիրքը սոսկ աչքի անցկացնելը չէ, թերթելը չէ, ընթերցանությունը չէ՝ հանուն ընթերցանության: Հարկավոր է խորանալ գրքի մեջ, մտորել նրա բովանդակության մասին, խնամքով գրի առնել յուրաքանչյուր գեղեցիկ ֆրազը, դիպուկ խոջըն ու միտքը, պատկերավոր արտահայտություն, հետաքրքիր ցիտատը: Դրանք եթե ոչ այսօր երբևիցե պետք կգան: Գրի առնել հուշատետրով, ինչպես գրողի, ժուռնալիստի, այնպես հոետորի հավատարիմ և անբաժան ուղեկից պետք է լինի: Հայտնի է, որ հուշատետրերի ծնունդ են առել գրողների շատ երկեր, ժուռնալիստների ակնարկներ, հրապարակախոսական

հոդվածներ: Հրաչյա Քոչարի «Մեծ տան զավակները», Սերո Խանվադյանի «Մեր գնդի մարդիկ», «Երեք տարի 291 օր» գրքերի, բազմաթիվ ակնարկների համար առատ նյութ են հանդիսացել նրանց պատերազմական տարիների հուշագրությունները, օրագրերը և գրառումները: Քոչարը հաճախ էր ասում, թե «հուշագրերը միշտ ինձ հետ էին և ես շատ բանով պարտական եմ դրանց»:

Այնպես որ հուշատետրը միշտ հոետորի գրպանում պետք է լինի:

Հոետորին, և ոչ միայն հոետորին, օգտակար կլինեն տիրապետել մարքսիզմի դասականների՝ գրքի վրա աշխատելու, նրանց ընթերցանության ոճին:

Ահա թե Մարքսի, որպես ընթերցողի մասին իր հուշերում ինչ է ասել Պոլ Լաֆարգը. Գրքերը դասավորելիս Մարքսը չէր ղեկավարվում արտաքին համաչափությամբ... Նա գրքերը դասավորում էր ոչ թե ըստ չափսի, այլ ըստ բովանդակության: Գրքերը նրա համար հոգևոր գործիքներ էին և ոչ թե պերճանքի առարկաներ: «Դրանք իմ ստրուկներն են,— ասում էր նա,— և պետք է ինձ ծառայեն, ինչպես ես եմ ցանկանում»: Նա ուշադրություն չէր դարձնում դրանց ծավալին, կազմին, թղթի կամ տպագրության գեղեցկությանը: Նա ծալում էր էջերի անկյունները, լուսանցքները լցնում մատիտի նշումներով և ընդգծում էր տողերը: Ոչ մի մակագրություն նա չէր անում, բայց շատ հաճախ չէր կարողանում իրեն պայել հարցական և բացականչական նշաններ

դնելուց, եթե հեղինակը սխալ բաներ էր գրում: Ընդգծման իր օգտագործած սխտեմը նրան թույլ էր տալիս գրքում հեշտությամբ գտնելու անհրաժեշտ տեղը:

Լավ խորհուրդ, լավ խրատ...



Հոետորի մասին մեր խոսքն ավարտելով ասենք. հոետորը գաղափարախոսական բնագավառի մարտիկ է: ՍՄԿԿ XXVII համագումարը բարձր գնահատեց այդ բնագավառին իրենց նվիրած մարդկանց աշխատանքը, նրանց գիտելիքները, փորձը, անձնվիրությունը, ամենաբարի խոսքն ասաց բոլոր նրանց, ովքեր պատվով են կատարում կուսակցության պատասխանատու հանձնարարությունը նրա գործունեության զլխավոր ուղղություններից մեկում:

Հոետորական արվեստին վարկ տալու, նրա մակարդակն այսօրվա պահանջներին բարձրացնելու համար անհրաժեշտ է սրտացավությամբ հոգ տանել պրոպագանդիստական, դասախոսական կադրերի մասին, որոնք իրենց նվիրել են այդ դժվարին և պատվավոր գործին: Կարևոր է, այնուհետև, որ ճանաչված հոետորների կողքին աճեն, փորձ կուտակեն, իրենց գործի մեջ վարպետանան նորերը՝ երիտասարդները: Այստեղից էլ հերթափոխի ստեղծման և դաստիարակության կարևորությունն ու անհրաժեշտությունը:

Դասախոսների երիտասարդ հերթափոխի պատ-

րաստման, նրա գաղափարական-քաղաքական մակարդակի, մասնագիտական վարպետության բարձրագույն ուղղությամբ օգտակար աշխատանք են կատարում հանրապետության «Գիտելիք» ընկերության վարչությունը, ՀԼԿԵՄ Կենտկոմը, Հայկական ՍՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստրությունը:

Ընկերությունում ստեղծվել է հասարակական հիմունքներով գործող դասախոսների կատարելագործման ինստիտուտ: Այստեղ, երկրում առաջինը, կազմակերպվել է վարպետ-դաստիարակների՝ խրատատու դասախոսների խումբ, որտեղ նրանք իրենց փորձը հաղորդում են նորեկներին:

Դասախոսների երիտասարդ հերթափոխի պատրաստման համար արդյունավետ աշխատանք են կատարում հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների հասարակական մասնագիտությունների ֆակուլտետները: Գործում են երիտասարդ դասախոսների դըպրոցներ, որտեղ ապագա մասնագետները՝ պատմաբանները, բանասերները, մանկավարժները, ինժեներները, բժիշկները ծանոթանում են հոետորական արվեստի սկզբունքներին:

Ավանդույթ են դարձել «Գիտելիք» ընկերության դասախոսական աշխատանքի համար նրանցից լավագույններին ընտրելու ամենամյա մրցույթները, որոնք մեծ հաջողությամբ են անցնում: Մրցույթները միաժամանակ կոչված են նպաստելու դասախոսական աշխատանքի հետագա կատարելագործմանը, երիտասարդ դասախոսների

դաստիարակության արդյունավետության բարձրացմանը, բանավոր խոսքի արվեստի միջոցների տիրապետմանը:

Մրցույթի ընթացքում լավագույններին շնորհվում է դասախոսի կոչում:

ՍՄԿԿ XXVII համագումարը խնդիր դրեց այսուհետև էլ գաղափարախոսական աշխատանքում ակտիվորեն առաջ քաշել այնպիսի ընկերների, որոնք անձնական օրինակով ապացուցում են իրենց համոզմունքները, ընդունակ են վերլուծական մտածողության, կարողանում են լսել մարդկանց, խոսել նրանց հետ, մի խոսքով՝ տեսական ու պրոֆեսիոնալ լավ պատրաստություն ունեցողներին, որոնք ընդունակ են հաջողությամբ լուծելու մեր ժամանակի նոր խնդիրները:

ՍՄԿԿ Կենտկոմը վերակառուցման կարևորագույն պրոբլեմներից մեկը համարում է դասախոսական, պրոպագանդիստական կադրերի պատրաստման և իրավեկման գործի բարելավումը և պահանջել ու պահանջում է նրանց կազմն ամրապնդել քաղաքականապես ու բարոյապես հասուն, բավակողմանիորեն պատրաստված մարդկանցով, այդ աշխատանքում ավելի լայնորեն ներգրավել կուսակցական, սովետական աշխատողներին, ստեղծագործական ու գիտական մտավորականությանը, փորձառու մասնագետների, տնտեսական մարմինների, արհմիութենական և կոմերիտական կոմիտեների ղեկավար աշխատողների: Միաժամանակ հարկավոր է հոգալ գաղա-

փարախոսական բնագավառի աշխատողների որակավորման բարձրացման մասին:

Հոետորական կադրերին կոչված են բավակողմանի օգնություն ցույց տալու ինֆորմացիայի մասսայական միջոցները՝ թերթերը, հանդեսները, ինչպես նաև հեռուստատեսությունը, ռադիոն, հրատարակչությունները: Կոչված են, բայց ինչու, օրինակ, հանրապետական թերթերում և հանդեսներում հավաղեպ են երևում դասախոսական, պրոպագանդիստական աշխատանքի փորձը լուսաբանող ծանրակշիռ հոդվածներ: Կարիք է պահանջում դասախոսական, հոետորական աշխատանքի պրակտիկային և մեթոդիկային նվիրված բրոշյուրների:

Հոգեբանական վերակառուցման կուսակցության պահանջը վերաբերում է նաև դասախոսին, պրոպագանդիստին, ագիտատորին, նրանց, ովքեր ամենից առաջ կոչված են նպաստելու մեր մարդկանց հոգեբանական վերակառուցմանը:

Հոետորի համար հոգեբանորեն վերակառուցվել ամենից առաջ նշանակում է խորապես գիտակցել մեր ապրած ժամանակի բարդությունը, նրա շրջադարձային մոմենտը, մոտ կանգնել կյանքին, մարդկանց, նպաստել մասսաների աշխատանքային և հասարակական ակտիվության բարձրացմանը, խոսքը ճիշտ հասցեագրել, հաշվի առնել կոնկրետ լսարանը, ունկնդիրների՝ շահերը, հակումներն ու տրամադրությունը:

Նա, ով գաղափարախոսական ասպարեզ է ոտք դնում, պետք է ջանասիրությամբ ուսում-

նասիրի հոետորական արվեստի պատմությունը, տեսությունն ու պրակտիկան, քաջ գիտակցի արդի պայմաններում զաղափարախոսական աշխատանքին ներկայացվող պահանջներն ու խնդիրները, սիստեմատիկաբար բարձրացնի իր պրոֆեսիոնալ մակարդակը:

Դասախոսի, պրոպագանդիստի աշխատանքը տեսանելի է դառնում ոչ միանգամից, այն չի կշռվում կշեռքով, չի չափվում մետրերով: Բայց նա նպաստում է այն բարիքների ստեղծմանը, որոնք կշռվում են կշեռքով, չափվում են մետրերով: Ուրեմն, կշեռքը, որով կարելի է կշռել հոետորական խոսքի ուժը, այդ այն կշեռքն է, որով կշռում ենք հացը հանապապօրյա, բամբակը, մետաղը, չուգունը, այն բոլոր նյութական բարիքները, որ ստեղծում է մարդը:

Եվ այսպես, հոետորի աշխատանքը, որն օրնիբուն կուսակցության խոսքը հասցնում է լայն մասսաներին, նրանց ոգեշնչում և խանդավառում հանուն աշխատանքային նորանոր սխրագործությունների, արժանի ավանդ է կոմունիստական շինարարության բոլոր ձակատներում սովետական ժողովրդի պատմական հաջողությունների մեջ:

Հարկավոր է, ուրեմն, հասարակական կարծիքը վերակառուցել նաև հոետորության և հրապարակախոսության նկատմամբ, ինչպես հարկն է գնահատել դասախոսի, պրոպագանդիստի, ագիտատորի՝ բանավոր խոսքին իրենց նվիրած մարդկանց՝ կուսակցական, թե անկուսակցական,

աշխատանքը, ըստ ամենայնի օգնել նրանց՝ իրենց վստահված պատվավոր և պատասխանատու խնդիրների իրականացման գործում:

* * *

Սովետական հոետորն էլ արագացման և վերակառուցման կուսակցության գծի ճիշտ ըմբռնման, նրա իրականացման նկատմամբ ճիշտ վերաբերմունքի օրինակ պետք է տա:

Դասախոսը, պրոպագանդիստը, ագիտատորը, իրենց կոլեկտիվների առջև հանդես եկող կուսակցական, սովետական, արհմիութենական, կոմերիտական ղեկավար աշխատողները պարտավոր են ունկնդիրներին մշտապես հիշեցնել ներկա պահի, վերակառուցման ժամանակաշրջանի կարևորությունը, դրա բեկումնային նշանակությունը երկրի համար, մեզանից ամեն մեկի բախտի և ձակատագրի համար, ցույց տալ, որ առանց վերակառուցման, առանց նոր ձևով աշխատելու, հնարավոր չէ արմատական փոփոխություններ իրականացնել բոլոր ոլորտներում, լուծել այն մեծ ու պատմական խնդիրները, որ այսօր առաջդրել է կուսակցությունը: Նրանց պարտքն է և պարտականությունը վառ ու համոզիչ բացա-

հայտել մեր ժամանակի հիրավի հեղափոխական բնույթը, սովետական մարդկանց մեջ դաստիարակել նոր ձևով մտածելու և գործելու հմտություն:

Կուսակցությունը պահանջում է մասսաների քաղաքական ու տնտեսագիտական ուսուցումը բարձրացնել XXVII համագումարի պահանջների մակարդակին: Այդ նպատակով ՍՄԿԿ Կենտկոմը հանձնարարել է առաջարկություններ նախապատրաստել քաղաքական և տնտեսագիտական ուսուցման համակարգի վերակառուցման հիմնական ուղղությունների վերաբերյալ: Այդ վերակառուցումը լուրջ քննություն կլինի ոչ միայն կուսակցական կազմակերպությունների, այլև գաղափարախոսական աշխատողների՝ հոետորի, դասախոսի, պրոպագանդիստի, ագիտատորի համար:

Հասարակական գիտությունների ամբիոնների վարիչների 1986 թ. հոկտեմբերին տեղի ունեցած խորհրդակցությունն ընդգծեց, որ սովետական հասարակության որակապես նոր վիճակի հասնելու կուրսի իրագործումն աներևակայելի է առանց գաղափարատեսական գործունեության ակտիվացման, երկրի հասարակագետների առջև խնդիր դրեց բուհական երիտասարդությանը սովորեցնել մտածել ու գործել նորովի, հասարակական գիտություններն ավելի մոտեցնել կյանքի պահանջներին, պրակտիկային, նշեց «մշակել կյանքի ժա-

մանակակից դիալեկտիկան արտացոլող նոր հետևություններ»:

Այդ պահանջը հավասարապես վերաբերում է հոետորական կադրերին՝ պրոպագանդիստներին, ագիտատորներին:

Հասարակության մեջ տեղի ունեցող իրոք հեղափոխական փոփոխությունները, արագացումը ու վերակառուցումը հոետորից էլ պահանջում են նոր մտածողություն, պրակտիկայի հետ տեսության ստեղծագործական կապի ամրապլնդում, նախաձեռնություն և համարձակություն: Պահանջվում է վճռականորեն ալատվել ձևամոլությունից, սխուրաստիկայից, վերացականությունից, որոնք թուլացնում են ունկնդիրների հետաքրքրությունը դասախոսի, պրոպագանդիստի ելույթի նկատմամբ, նվազեցնում խոսքի արդյունավետությունը:

Չփստելով մեր դասախոսական, պրոպագանդիստական կադրերի աշխատանքը սովետական մարդկանց մարքսիստական-լենինյան աշխարհայացքի ձևավորման գործում, միաժամանակ չենք կարող չասել, որ նրանցից շատերն իրենց աշխատանքը դեռ չեն վերակառուցել ժամանակի պահանջներին համապատասխան, նրանց մեծ մասին դեռ չի հաջողվել հաղթահարել սխուրաստիկայի և դոգմատիկամի երևույթները:

Ասենք նաև այն, որ մեր որոշ պրոպագանդիստներ, չհասկանալով երկրի սոցիալ-տնտեսական զարգացման վերակառուցման, արագաց-

ման բուն էությունն ու նպատակը, երկյուղ են արտահայտում այն մասին, թե վերակառուցումը կհանգեցնի կուտակված փորձի կորստյան, կամ էլ տասնամյակների ընթացքում ստեղծված համակարգի ոչնչացման:

Բնավ էլ ոչ:

«Առաջարկվող միջոցառումները,— գրում է «Պրավդան»,— անցյալի չմտածված ոչնչացում, մեխանիկական ժխտում չեն նշանակում, այլ, ընդհակառակը, ենթադրում են հաջորդայնություն, այն ամեն արժեքավորի նկատմամբ սըրտացավ վերաբերմունք, ինչ մշակել է պրակտիկան, բոլշևիկյան պրոպագանդայի հիանալի ավանդույթների հոգատար պահպանում: Այստեղ անթույլատրելի են ինչպես պահպանողականությունը, դանդաղկոտությունը, այնպես էլ հապճեպությունը, գործողությունների անկշռադատությունը... Այժմ գլխավորն է մասսաների քաղաքական լուսավորության մեջ ավելի համարձակորեն արմատավորել նորը, առաջավորը, այն ամենը, ինչը փորձության է ենթարկվել ամենախիստ ու անվիջում դատավորի՝ կյանքի կողմից»:

ԺԱՄԱՆԱԿԸ ԵՎ ՀՌԵՏՈՐԱԿԱՆ ԽՈՍՔԸ

Փոխվում են ժամանակները, փոխվում են մարդիկ, փոխվում է նրանց հոգեբանությունը: Հիմա ուրիշ ժամանակներ են, ուրիշ պայմաններ, ուրիշ պահանջներ:

ՍՄԿԿ Կենտկոմի 1985 թվականի ապրիլյան

պլենումը սահմանեց մեր երկրի սոցիալ-տնտեսական վարգացումն արագացնելու կուրսը, որը հաստատվեց, կոնկրետացվեց և բազմակողմանիորեն վարգացվեց Սովետական Միության կոմունիստական կուսակցության հերթական XXVII համագումարում: Համագումար, որն իրենով նշանավորեց մեծագույն իրադարձություն մեր երկրի կյանքում, միջապագային կոմունիստական շարժման պատմության մեջ:

Համագումարը հստակորեն սահմանեց տարիների և տասնամյակների մեր առաջընթացի՝ դեպի սովետական սոցիալիստական հասարակության նոր վիճակ կատարվող առաջընթացի թե՛ բնույթը, թե՛ տեմպերը, թե՛ խնդիրները, պատասխանեց երկրի, կուսակցության առջև կյանքի կողմից դրած արմատական հարցերին:

Համագումարը խնդիր դրեց լայնորեն, լենինաբար իմաստավորել ներկա ժամանակաշրջանը, մշակել գործողությունների իրատեսական, համակողմանիորեն կշռադատված այնպիսի ծրագիր, որը նպատակների վեհությունը և հնարավորությունների ռեալիվմը, կուսակցության պլաններն օրգանապես միացնելու յուրաքանչյուր մարդու հույսերի և իղձերի հետ:

Երկրի հասարակական կյանքի վերակառուցման, արագացման պրոբլեմներին էր նվիրված ՍՄԿԿ Կենտկոմի 1987 թվականի հունվարյան պլենումը, որը քննարկեց «Վերակառուցման և կուսակցության կադրային քաղաքականության մասին» հարցը:

Պլենումը սահմանեց արագացման և վերակառուցման մասշտաբային ծրագրի իրացման կոնկրետ միջոցառումներ և լենինիզմի ստեղծագործական վարձացման օրինակ տվեց:

Կուսակցությունը թանկ է գնահատում մեր երկրի 70-ամյա պատմության յուրաքանչյուր տարին, մեր ձեռք բերած վիթխարի նվաճումները սոցիալիստական վերափոխումների ճանապարհին: Այդ մասին հանգամանորեն խոսվեց մասսայական ինֆորմացիայի միջոցների և պրոպագանդայի ղեկավարների հետ ՍՄԿԿ Կենտկոմում տեղի ունեցած հանդիպման ժամանակ: Խորհրդակցության ամբիոնից ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովն, ի լուր ամբողջ աշխարհի, հայտարարեց. «Եղել է թե՛ այս և թե՛ այն, թե՛ ուրախալին և թե՛ վշտալին: Ինչ էլ որ մեկ հետ պատահել է, մենք առաջ ենք ընթացել... չպետք է մոռանալ անունները և առավել ևս բարոյավրկություն է ժողովրդի կյանքի ամբողջ ժամանակաշրջաններ մոռանալը, կամ լուրջան մատնելը, ժողովրդի, որն ապրում էր, հավատում և կուսակցության ղեկավարությամբ աշխատում հանուն սոցիալիզմի: Պատմությունը հարկավոր է տեսնել այնպիսին, ինչպեսին որ կա: Ամեն ինչ եղել է, եղել են սխալներ՝ և ծանր, բայց երկիրն առաջ էր շարժվում... ամենածանր ժամանակներում կուսակցությունն ապրում էր, պայքարում»:

Կուսակցությունը պահանջում է ստվերի մեջ չթողնել, բարձր գնահատել նրանց, ովքեր հե-

ղափոխություն են կատարել, ովքեր ակտիվորեն մասնակցել են երկրի ինդուստրացմանը և գյուղատնտեսության կուլեկտիվացմանը, ժողովրդական տնտեսության վերականգնմանը՝ հետպատերազմյան դժվարին տարիներին: Անհրաժեշտ է մարդկանց դաստիարակել նրանց օրինակով, ովքեր իրենց կյանքն են տվել հանուն հեղափոխության և սոցիալիզմի:

Կուսակցությունը XXVII համագումարում և համագումարից հետո տեղի ունեցած Կենտկոմի պլենումներում սահմանեց նաև նոր պայմաններում կուսակցության գաղափարախոսական աշխատանքի խնդիրները, ընդգծեց այդ բնագավառի աշխատողների՝ դասախոսների, պրոպագանդիստների, արվեստագետ մտավորականների՝ գրողների, նկարիչների, կոմպոզիտորների, ժուռնալիստների, կինոյի և թատրոնի գործիչների պատասխանատվությունը կուսակցության, ժողովրդի հանդեպ:

Կուսակցությունը պահանջում է աշխատավորների գաղափարաքաղաքական դաստիարակությունը, դրա բովանդակությունը, ձևերն ու մեթոդները համապատասխանեցնել մեր ժամանակի գլխավոր խնդրի՝ երկրի սոցիալ-տնտեսական վարձացման հետ: Արագացում, որն առաջին հերթին նշանակում է տնտեսական աճի տեմպերի արագացում, աճի նոր որակ, արտադրության ըստ ամենայնի ինտենսիվացում: Արագացման ստրատեգիան ենթադրում է ոչ միայն հասարակական հարաբերությունների կատարելագործում,

այլև քաղաքական և գաղափարախոսական աշխատանքի ձևերի ու մեթոդների նորացում, սոցիալիստական դեմոկրատիայի խորացում, ինտեգրացիայի, լճացման ու պահպանողականության այն ամենի վճռական հաղթահարում, ինչը կասեցնում է հասարակական առաջընթացը:

Այսպիսով, երկրի հասարակական կյանքի հեղափոխականացումը կապված է նաև հռետորական խոսքի արմատական վերակառուցման հետ: Դասախոսը, պրոպագանդիստը, ագիտատորը կոչված են կուսակցությանն օգնելու ժամանակի այնպիսի հասկացությունների իրականացման գործում, ինչպիսին են «վերակառուցումը», «արագացումը», «որակը», «նոր մտածողությունը», «մարդկային գործոնը»:

Հռետորն ինքը պետք է պարզորոշ պատկերացնի և խոր վերլուծման ենթարկի հասարակական զարգացման ներկա փուլի բնույթը և յուրաքանչյուր ունկնդրի գիտակցությանը հասցնի վերակառուցման մեծ գործի նպատակներն ու խնդիրները, դրանով իսկ ակտիվորեն օգնի կուսակցությանը սովետական հասարակության կյանքի բոլոր կողմերի վերափոխման հեղափոխական պրոցեսում: Կարևորը ոչ միայն վերակառուցման էությունը խորապես ու բազմակողմանիորեն բացահայտելն է, այլև անձամբ վերակառուցվելը, հասարակության մեջ ներկայումս ընթացող պրոցեսների մասին գործիմացությամբ, համոզվածությամբ և կրքոտությամբ խոսելը:

Երևուհի ներքին և միջազգային կյանքի ներկա-

յիս բարդ իրադրության պայմաններում լսարանի առջև հանդես եկող դասախոսի, պրոպագանդիստի, ագիտատորի, կուսակցական և պետական աշխատողի կենդանի խոսքը միայն այն ժամանակ կհասնի իր նպատակին, տեսական ու գործնական ցանկալի արդյունքներ կունենա, երբ հազեցված լինի կյանքի կենարար հյուսված տոգորված լինի մարդու ուրախություններով և հոգսերով, հոգատարությամբ՝ իր հողի, իր հարավատ երկրի բախտի և ճակատագրի նկատմամբ:

Գլխավորն, ուրեմն, կյանքի հետ գաղափարախոսության կապի ամրապնդումն է, կյանքում տեղի ունեցող վերափոխումներին զգայուն կերպով արձագանքելը, նոր երևույթները տեսողաշտում պահելը, մարդու հոգևոր աշխարհի հարըստացումը, այն բանին հասնելը, որ յուրաքանչյուր մարդ ըմբռնի ներկա մոմենտի սրությունը, նրա բեկումնային բնույթը:

Կուսակցության գաղափարական գործունեության հիմնական ուղղությունները սահմանված են ՍՄԿԿ ծրագրում. այնտեղ ասված է. «Գաղափարախոսական աշխատանքում գլխավորը ՍՄԿԿ-ն համարում է աշխատավորների դաստիարակումը բարձր գաղափարայնության և կոմունիստիկ նվիրվածության ոգով, սովետական հայրենասիրության ու պրոլետարական, սոցիալիստական ինտերնացիոնալիստիկ ոգով, աշխատանքի և հանրային սեփականության նկատմամբ գիտակցական վերաբերմունքի ոգով, մասսաների ավելի ու ավելի լրիվ հաղորդակցումը հոգևոր

մշակույթի գանձերին, սոցիալիստական ապրելակերպին հակասող բարքերի իսպառ վերացումը»:

Կուսակցությունը միաժամանակ ելնում է այն բանից, որ գաղափարախոսական աշխատանքը, մարդու դաստիարակումն անբաժանելի են ժողովրդի բարօրության օգտին կատարվող գիտակցական աշխատանքից, հասարակական կյանքին, սոցիալ-տնտեսական ու մշակութային շինարարության խնդիրների լուծմանը նրա պրակտիկ մասնակցությունից: «Բայց գաղափարները, որքան էլ հրապուրիչ լինեն,— ընդգծվեց ՍՄԿԿ XXVII համագումարում,— ինքնին ավտոմատ կերպով ամբողջական ու ակտիվ աշխարհայացք դեռևս չեն ձևավորում, եթե շաղկապված չեն մասսաների սոցիալ-քաղաքական փորձի հետ: Առաջավոր գաղափարների և նոր հասարակության կառուցման պրակտիկայի փոխադարձ կապից է եռանդ ու գործունեություն քաղում սոցիալիստական գաղափարախոսությունը»:

Կուսակցությունը դեմ է իրականությունից կտրված, վերացական, լուսավորչական, անբովանդակ, կոմունիստական շինարարության կենսական խնդիրներից շեղված գաղափարախոսական աշխատանքին: Նա ելնում է Վ. Ի. Լենինի այն հայտնի ցուցումից, որ գաղափարախոսական աշխատանքը պետք է կառուցվի «տնտեսական շինարարության քաղաքական փորձի վրա»:

Գաղափարախոսական աշխատանքի արդյունավետության չափանիշը կոնկրետ գործերն են:

Դասախոսի, պրոպագանդիստի, ագիտատորի խոսքն էլ պետք է փոխհատուցում տա, կոչը՝ գործնական արձագանք գտնի: Այլ կերպ ասած՝ խոսքը գործի վերածվի: Այլապես ինչ օգուտ, ասենք, «Տասներկուերորդ հնգամյակը կուսակցության տնտեսական ստրատեգիայի իրագործման վճռական փուլն է» թեմայով բանվորական կոլեկտիվում կարդացված դասախոսությունից, երբ այնտեղ արագացման առաջընթաց շարժման տեմպերն առաջվա նման խիստ անբավարար են, պլանները շարունակում են թերակատարվել, արտադրանքի որակը ցածր է:

Գաղափարախոսական բնագավառի աշխատողների գործունեությունից է մեծ չափով կախված երկրի տնտեսական, սոցիալ-քաղաքական և կուլտուրական վարգացման ընթացքը, վարգացած սոցիալիզմի հնարավորությունների լիակատար իրացումը:

Դասախոսը, պրոպագանդիստը կոչված են հետորական խոսքն առավելագույն չափով ի սպաս դնել յուրաքանչյուր սովետական մարդու մեջ անձնվեր հանրօգուտ աշխատանքի նկատմամբ խոր հարգանքի և պատրաստակամության, մասնավոր սեփականատիրական հոգեբանության և ընչաքաղցության նկատմամբ անհանդուրժողականության ձևավորմանը:

«Գաղափարաքաղաքական աշխատանքում,— ասված է «Անաշխատ եկամուտների դեմ պայքարըն ուժեղացնելու միջոցառումների մասին» ՍՄԿԿ Կենտկոմի որոշման մեջ,— կենտրոնական

տեղ պետք է գրավի այն բանի հստակ ըմբռնման դաստիարակումը, որ բարեխիղճ աշխատանքը յուրաքանչյուր քաղաքացու կարևորագույն պարտականությունն է և պատվի գործը, որ միայն աշխատանքն է որոշում մարդու տեղը կոլեկտիվում և հասարակության մեջ»:

Հարկավոր է ակտիվ պայքար մղել ըստ աշխատանքի բաշխման սոցիալիստական սկզբունքի ամեն տեսակ խախտումների, զուփոդության, սոցիալիստական ապրելակերպի հետ անհամատեղելի երևույթների դեմ, մարդկանց մեջ ամրապնդել այն խոր ըմբռնումը, որ այդ պայքարը բոլորի և ամեն մեկի պարտքն է:

Պասախոսը, պրոպագանդիստը, ազիտատորը միաժամանակ կոչված են մտքի, խոսքի թարմությամբ և կոնկրետությամբ ցուցադրել, բացահայտել և փառքի վահանին բարձրացնել աշխատանքի մարդուն, նրա պայքարն ու սխրանքը նոր կյանքի կառուցման, կուսակցության պլանների իրականացման համար: Չէ՞ որ, ինչպես ընդգծվեց ստախանովյան շարժման վետերանների, արտադրության առաջավորների և նորարարների հետ 1985 թ. սեպտեմբերին ՍՄԿԿ Կենտկոմում տեղի ունեցած հանդիպման ժամանակ, աշխատավոր մարդու համար ոչ պակաս, իսկ երբեմն ավելի կարևոր է բարոյական ազդակը, նրա վաստակի ճանաչումը հասարակության կողմից:

«...Ժամանակակից բանվորի համար,— այդ հանդիպման ժամանակ ասաց ստախանովյան շարժման ակունքների մոտ կանգնածներից մե-

կը՝ Դոնեցկի «Կենտրոնական Իրմինո» հանքի ՀամԿ (բ)Կ Կենտկոմի նախկին կուսկազմակերպիչ Կ. Գ. Պետրովը,— թանկ է ոչ այնքան ուրբլին, որքան խոսքն ու համբավը, որ նրա մասին ստեղծում է կոլեկտիվը... բարոյական խթանն անհրաժեշտ է մեր բանվոր դասակարգի ամբողջ եռանդը բարձրացնելու համար»:

Ռա առանձապես կարևոր է այսօր, երբ մեր կուսակցության XXVII համագումարը սովետական ժողովրդի առջև դրել է երկրի սոցիալ-տնտեսական վարգացումն արագացնելու, ամբողջ ժողովրդական տնտեսությունը գիտատեխնիկական առաջադիմության, ինտենսիվացման ռեյսերի վրա փոխադրելու, մեր հասարակական ու արտադրական կյանքի բոլոր օղակներում կարգուկանոն, բարձր կարգապահություն հաստատելու պատմական խնդիրները: Կուսակցությունը պահանջում է գործողության մեջ դնել կազմակերպական-տնտեսական ու սոցիալական ռեպերվներ և, առաջին հերթին, ակտիվացնել մարդկային գործոնը, հասնել այն բանին, որ յուրաքանչյուրն իր տեղում աշխատի բարեխիղճորեն և լիակատար հատույցով: Իսկ, ինչպես ընդգծվեց ՍՄԿԿ Կենտկոմի 1985 թ. հոկտեմբերյան պլենումում, միայն լավ կշռադատված տնտեսական ստրատեգիայի, ուժեղ սոցիալական քաղաքականության և նպատակամետ գաղափարադաստիարակչական աշխատանքի միջոցով՝ դրանց անխափելի միասնությամբ վերցված, կարելի է ակտիվացնել մարդ-

կային գործոնը, առանց որի չի կարող լուծվել առաջադրված խնդիրներից ոչ մեկը:

Մարդկային գործոնի ակտիվացման կարևորությունն ու անհրաժեշտությունը կրկին նշվեց կուսակցության XXVII համագումարում:

Համագումարը պաշտպանեց ՍՄԿԿ Կենտկոմի վարած այն գիծը, որ մարքս-լենինյան գաղափարախոսության հսկայական վերափոխիչ ուժն ուղղի երկրի սոցիալ-տնտեսական վարգացմանը, մարդկային գործոնի ակտիվացմանը, հաղթահարի իրենց սպառած մոտեցումների իներցիան, հաղթահարի լճացման, դոգմատիզմի, գործամոլության դրսևորումները գաղափարախոսական աշխատանքում, կամպանիականությունը, կյանքից պրոպագանդայի կտրվածությունը, հասունացած պրոբլեմների սրության թերսզնահատումը, սխուլաստիկայի և հայեցողականության տարրերը:

Ինչո՞ւ ներկայումս այսպես սրությամբ է դրվում մարդկային գործոնի ակտիվացման հարցը: Ինչո՞ւ կուսակցությունը մարդկային գործոնի ակտիվացումը համարում է երկրի սոցիալ-տնտեսական վարգացման արագացման անհրաժեշտ պայմանը, մեր առջև ծառայած խնդիրների հաջող լուծումը կապում է մարդկային գործոնի դերի բարձրացման հետ: Պատճառը պարզ է. կուսակցությունը տնտեսական ոլորտում հանգուցային խնդիրը համարել և համարում է աշխատանքի արտադրողականության բարձրացումը, դրա բարձրագույն համաաշխարհային մակրոակին հաս-

նելը: Իսկ երկրի գլխավոր արտադրողական ուժը մարդն է: Նրա աշխատանքային գործունեությունը: Ամեն ինչ վերջին հաշվով ստեղծվում է մարդու կողմից, կախված է մարդուց, նրա գիտակցությունից, սոցիալական և աշխատանքային ակտիվությունից, քաղաքացիական հասունությունից, բարոյական կերպարից: Մարդուց, և ամենից հաճախ մարդուց է կախված մեր բոլոր ծրագրերի, կոմունիստական շինարարության բոլոր պլանների բախտը, վերջին հաշվով՝ երկրի բախտը:

Վերջապես, երկրի սոցիալ-տնտեսական վերակառուցումն սկսվում է մարդուց: Կուսակցությունը, ինչպես ասացինք, դրանում է տեսնում մնացած բոլոր հարցերի լուծման հիմքը: Ուստի հոետորական արվեստի գլխավոր խնդիրներից մեկը մարդու ռեկերվների, հնարավորությունների և տրամադրությունների, նրան բնորոշ հատկությունների (սոցիալական, հոգեբանական, կենսաբանական) ամբողջության բացահայտումն է:

Մարդկային գործոնի կուսակցության կուրսի պրոպագանդան, դրա տոնն ու ոգին պետք է համապատասխանեն հասարակության առջև կանգնած խնդիրների բարդությանն ու մասշտաբայնությանը:

Կարևոր է այն է, որ յուրաքանչյուր մարդ ակտիվորեն ընդգրկվի ներկայումս տեղի ունեցող վերակառուցման մեջ, գործով, աշխատանքային բարձր արդյունքներով արձագանքի կուսակցության կոչին: Պա է պրոպագանդայի, այն մղողի՝ հոետորի գլխավոր խնդիրը: Հարկավոր է կոնկ-

րետ օրինակներով և փաստերով ցույց տալ աշխատավորական կուլեկտիվի դերը մարդկային գործոնի ակտիվացման գործում, կուլեկտիվի յուրաքանչյուր անդամի ռեալ մասնակցության անհրաժեշտությունն աշխատանքային և պետական կարգապահության, վերջին հաշվով արտադրության ամրապնդմանը, հասարակության գործերին: Հոետորը պետք է ելնի կուսակցության ծրագրի այն դրույթից, թե «որքան մասշտաբային են պատմական նպատակները, այնքան կարևոր է տնտեսատիրոջ նման միլիոնավոր մարդկանց շահամետ, պատասխանատու, գիտակից և ակտիվ մասնակցությունը դրանց իրագործմանը»:



Կոմունիստական դաստիարակության անխախտ պայմանը աշխատավորների մարքսիստական-լենինյան աշխարհայացքի ձևավորումն է: Եվ սովետական հոետորի համար չկա ավելի պատվավոր պարտականություն, քան խոսքի ու ծով մարքսիզմ-լենինիզմի վեհ գաղափարները մասսաներին հասցնելը, նրանցում սովետական մարդուն արժանի բնավորության գծեր պատվաստելը, դրանով իսկ նրանց հասարակական ակտիվությունն էլ ավելի բարձրացնելը:

Սովետական հասարակության որակական վերափոխման ներկա փուլը պահանջում է անշեղորեն բարձրացնել մարդու գիտակցությունը, հա-

րըստացնել նրա հոգևոր աշխարհը, գործի դնել ժողովրդի ստեղծագործական պոտենցիալը:

Գաղափարախոսական, դաստիարակչական աշխատանքն անհրաժեշտ է վճռականորեն բարձրացնել այդ պահանջների մակարդակին: Հոետորը պարտավոր է քայլել կյանքին համընթաց, իր ելույթներում պարպաբանել և խոր վերլուծման ենթարկել երկրի ներքին և արտաքին կյանքի՝ մարդկանց հուլող ամենօրյա հարցերը, անկեղծ ու սրտաբաց կրույցում ասել այն ամենի մասին, ինչով ապրում են մարդիկ, ինչը նրանց ուրախացնում ու հոգս է պատճառում, ջերմ, սրտաբուխ խոսքերով բանվորին, գյուղացուն, մտավորականին ոգեշնչել աշխատանքային նորանոր քաջագործությունների՝ հանուն մեր երկրի հետագա ծաղկման ու բարգավաճման, նրա տնտեսական և պաշտպանական հպորության հետագա ամրապնդման:

Ինչպիսին էլ որ լինի դասախոսության, ելույթի թեման, նրանում պետք է պզգվի օրվա շունչը, տրամագրությունը, արդիականության բաբախյունը:

Վ. Գ. Բելինսկին գտնում էր, որ «ճարտասանությունն արվեստ է,— ոչ լրիվ և ամբողջական, ինչպես պոեզիան. բայց ճարտասանությունը միշտ գործնական նպատակ ունի, միշտ պայմանավորված է ժամանակով և հանգամանքներով...» (Об ораторском искусстве, стр. 116):

Գաղափարախոսական աշխատանքը լինելով ստեղծագործական աշխատանք, բոլոր ժամանակ-

ների, կյանքի բոլոր դեպքերի համար ունիվերսալ միջոցներ չունի և պահանջում է մշտական պըրպըտում և որոնում, ասելիքի ոճը մշտապես կատարելագործելու հմտություն և կարողություն:

Ըստ որում պետք է ելնել այն բանից, որ դաստիարակչական աշխատանքի արդյունավետության հիմնական ցուցանիշը ոչ թե կարգացված դասախոսությունների և վեկուցումների, անցկացված Վրոյցների քանակն է, այլ դրանց ռեալ ազդեցությունը սովետական մարդկանց գիտակցության և տրամադրության, նրանց կենսադիրքի վրա:

Աշխատանքի ոճն ու մեթոդները ժամանակի պահանջներին համապատասխան փոխելու կուսակցության պահանջը վերաբերում է բոլորին, առավել ևս հոետորին, որի գեղեցիկ ու ազդու խոսքը պետք է նպաստի մասսաների նախաձեռնողական գործունեության ակտիվացմանը, երկրի սոցիալ-տնտեսական վարգացումն արագացնելու դժվարին, բայց ռեալ պլանների իրականացմանը:

Հարկավոր է խորապես ըմբռնել և գիտակցել ներկայումս մեր երկրում տեղի ունեցող բարերար վերափոխումների իմաստը, բարձրացնել կարգացվող դասախոսությունների, վեկուցումների, ելույթների նպատակաւացությունը պրակտիկ գործողություններում:

Աշխատանքի ոճի ու մեթոդների արմատական վերակառուցման և փոփոխման պահանջը մեծ չափով վերաբերում է նաև գաղափարախոսական

բնագավառի աշխատողներին: Վերակառուցվում է երկրի հասարակական-քաղաքական կյանքը, պետք է վերակառուցվի նաև գաղափարախոսական ամբողջ աշխատանքը: Ինչպես նշվեց ՍՄԿԿ Կենտկոմի 1986 թ. հունիսյան պլենումում, սոցիալ-տնտեսական և հոգևոր ոլորտների խնդիրների բարդության հետ մեկտեղ կմեծանան նաև գաղափարախոսական աշխատանքին ներկայացվող պահանջները:

Խոսքն, այսպիսով, գնում է ամեն մեկի քաղաքացիական ճիշտ դիրքորոշման, քաղաքական և աշխատանքային ակտիվացման, հանձնարարված գործի նկատմամբ պատասխանատվության ուժեղացման մասին, ամեն ինչ խղճի մտոք անելու, իր հանդեպ և ժողովրդի հանդեպ մեծ պատասխանատվության մասին:

Գաղափարախոսական բնագավառի բոլոր աշխատողներն են իրենց գործունեությունը վերակառուցել նոր պահանջներին համապատասխան, իրենց վստահած գործը կատարում ամենայն բարեխղճությամբ և պատասխանատվությամբ: Ցավոք, ոչ բոլորը: Փաստն այն է, որ հիմա էլ, համագումարից հետո, դեռ մեր շատ դասախոսներ աշխատում են իրենց դարն ապրած ձևերով ու մեթոդներով: Նրանց ելույթներին պակասում են գործարարությունը, նպատակամղվածությունը: Ցածր է նրանց խոսքի «օգտակար գործողության գործակիցը»: Հիմա էլ քիչ չեն ձանձրույթ պատճառող, ունկնդրի սրտին ու մըտ-

քին քիչ բան տվող դասախոսություններն ու վեկուցումները:

Այսօր, պատմական նոր պայմաններում, երբ պայքար է մղվում միլիոնավոր մարդկանց գիտակցության, մտքերի ու սրտերի, բևեռայնորեն հակադիր երկու գաղափարախոսությունների համար, հոգևոր հարստությունը, բարոյական մաքրությունը և ֆիզիկական կատարելությունն իր մեջ պուգորդող անհատի ձևավորման համար, առավել ևս զգացվում է հոետորական խոսքի՝ կենդանի խոսքի գնալով աճող ազդեցությունը մեր ժամանակակից հոգևոր աշխարհի վրա:

Ներկայիս վերափոխումների բեկումնային ժամանակներում, երբ կուսակցությունը պահանջում է վերակառուցել աշխատանքը, մեր ամբողջ գործունեությանը նայել յուրովի հայացքով, մեր գաղափարախոսական գործունեությունը պետք է համապատասխանի նոր իրադրությանը, նոր խնդիրներին: Ինչպես արդեն ասացինք, ամբողջությամբ վերցրած վերակառուցումը կախված է առանձին վերցրած ամեն մեկի վերակառուցումից: Այնպես որ, աշխատանքի վերակառուցման, մեր հասարակության վարձագման արագացման անհրաժեշտության մասին խոսելիս, դասախոսն ինքը պետք է սկսի իրենից, նոր պայմաններին ու պահանջներին համապատասխան, ինքն, ամենից առաջ, հոգեբանորեն վերակառուցվի, խորապես գիտակցի, որ նոր խնդիրներն ու նոր երևույթները պահանջում են աշխատանքի համապատասխան ոճ ու եղանակ, նոր մտածողություն՝ ատո-

մային դարի մարդու մտածողություն, միջակայքին դրության լարված պայմաններում ապրող մարդու մտածողություն: Դասախոսը և պրոպագանդիստը, բոլոր նրանք, ովքեր հանդես են գալիս մարդկանց առջև, պարտավոր են մշտապես հիշել Լենինի խոսքերը. «Քանի որ իրադրությունը փոխվել է և մենք պետք է այլ խնդիրներ լուծենք, ապա այստեղ չի կարելի ետ նայել և փորձել երեկվա եղանակով լուծել: Մի փորձեք՝ չեք լուծի» (Լենին Վ. Ի., ԵԼԺ, հ. 44, էջ 384):

Եվ այսպես, մեր ժամանակը, կյանքի բոլոր բնագավառներում նորացման և արմատական փոփոխությունների ժամանակը, հոետորից, գրավոր և բանավոր խոսքի բոլոր վարպետներից հրամայաբար պահանջում է ակտիվորեն նպաստել նոր աշխարհի մարդու՝ հայրենասերի և ինտերնացիոնալիստի, արարողի և պատմության կերտողի ձևավորմանը, կուսակցությանն օգնել իրականացնելու նրա տնտեսական և սոցիալական գործունեության բոլոր ոլորտներում արագացման կուրսը, ու նախ և առաջ, մարդկանց մտածողության, գործի նկատմամբ նրանց վերաբերմունքի վերակառուցման, կյանքի բոլոր ասպարեզներում կազմակերպվածության և կարգապահության բարձրացման կուրսը:

Միայն այն ժամանակ կարելի է հաջողությամբ իրականացնել այդ կուրսը, լուծել երկրի սոցիալտնտեսական պլաններն ու խնդիրները, երբ մեծանա մարդկանց ակտիվ գործունեությունը, և դրա համեմատ տեղի ունենա նրանց մտածողու-

թյան, մտածելակերպի վերակառուցում, նրանց գիտակցության շրջափոխում:

Սովետական հասարակական կյանքում ներկայումս կատարվող կտրուկ շրջադարձը, արագացման, վերակառուցման պրոցեսը, որն ընթանում է պատմական որոշակի ժամանակամիջոցի շրջանակներում, անկարելի է պատկերացնել առանց կտրուկ շրջադարձի մարդկանց մտածողության, մոտեցումների, գիտակցության մեջ:

Իսկ, ինչպես Կրասնոդարի և Ստավրոպոլի երկրամասերի աշխատավորների հետ հանդիպումների ժամանակ ասաց Մ. Ս. Գորբաչովը, «...Գիտակցությունը չի բեկվի կոչերով, գրքույկներով ու լուսուճաներով, թեև այդ բոլորը նույնպես անհրաժեշտ են: Եվ այդ մասին գրելն էլ է անհրաժեշտ: Մարդն իր դիրքորոշումը, գիտակցությունը, վերաբերմունքը փոխում է պայքարի ընթացքում: Ուստի և մենք պայքար ենք ծավալում բոլոր ձևերով՝ տնտեսական, սոցիալական, բարոյական, քաղաքական: Ծավալելով այդ բոլոր պրոցեսները, մենք հույս ունենք. կփոխվի մտածողությունը, կփոխվեն մոտեցումների եղանակները, կամրապնդվի մարդկանց սկզբունքայնությունը»:

Մարդկանց գիտակցության և մտածողության վերափոխման համար պայքարում մեծ, անչափ մեծ է սովետական հոետորի, գաղափարախոսական բնագավառի բոլոր աշխատողների դերն ու պատասխանատվությունը:



Հոետորական խոսքի մասին, իբրև ելրափակում, ասենք:

Սովետական հոետորական արվեստը կազմավորվել է սովետական իշխանության առաջին տարիներին և այդ ժամանակից դարձել է ագիտացիայի և պրոպագանդայի, գաղափարախոսական և քաղաքական պայքարի հզոր պենք, մասսաներին կուսակցության շուրջը համախմբելու, նրանց համոզելու և դաստիարակելու գործուն միջոց:

Սովետական հոետորական արվեստը կապված է անցյալի հոետորական արվեստի լավագույն ավանդույթների, արտասահմանի առաջադեմ ճարտասանության հետ: Այն իր սկզբնավորման օրից եղել է դասակարգային պայքարի պենք, ունեցել է գաղափարաքաղաքական վառ արտահայտված ուղղություն, հաջողությամբ նպաստել է հասարակական կարծիքի ձևավորմանը, սովետական մարդկանց օգնել է հմտորեն կողմնորոշվելու երկրի ներքին և միջպագային իրադարձություններում, բարձրացնելու նրանց հասարակական, քաղաքական և աշխատանքային ակտիվությունը կուսակցության կանխագծումների կենսագործման համար մղվող պայքարում:

Դասախոսի, պրոպագանդիստի, ագիտատորի կենդանի խոսքը, նրանց հրապարակային ելույթները նպաստել և նպաստում են մարդկանց քաղաքական լուսավորմանը, տեսական մակարդակի

բարձրացմանը, երկրի տնտեսական և պաշտպանական հզորության ամրապնդման համար նրանց ուժերի մոբիլիզացմանը:

Բանավոր խոսքի սովետական արվեստին բնորոշ են վառ արտահայտված կուսակցականությունը, հեղափոխական կրթոտությունը, գործարարությունը, կապն իրական կյանքի հետ և անհանդուրժողականությունը բուրժուական գաղափարախոսության, արտասահմանի ռեակցիոն ճարտասանության նկատմամբ, որը ստի և կեղծիքի վեճ է, մասսաներին ապակողմնորոշելու միջոց:

Հոետորական արվեստը, Մ. Ի. Կալինինի բնորոշմամբ, ամենադժվար արվեստն է, և մեր դասախոսները, պրոպագանդիստները, կուսակցական և պետական աշխատողները, և ոչ միայն նրանք, կարող են և պետք է տիրապետեն այդ արվեստին:

Ի՞նչ է հարկավոր:

Ամենից առաջ հարկավոր է, ինչպես որ ցանկացած ամեն մի պրոֆեսիայում, որոշակի ընդունակություն: Բայց նույնիսկ ակնառու ընդունակությունները ցանկացած արդյունք չեն տա, եթե մարդ լրջորեն չաշխատի դրանց վարձացման և կատարելագործման վրա:

Հարկավոր է, այնուհետև, հոետորական արվեստին տիրապետելու բուռն ցանկություն և հաստատուն կամք ունենալ: Առանց դրա հոետոր դառնալ անհնար է:

Այսքանն ահա:

Հոետորության մասին մեր խոսքն ավարտենք ականավոր հոետորի խոսքերով՝ «Բանաստեղծ ծնվում են, հոետոր՝ դառնում»:

ՏՐՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հեղինակի կողմից	5
Հոետորական արվեստի ակունքները	8
Հոետորությունը և նրա նշանակությունը	19
Հոետորական արվեստի հիմնական գծերը	56
Հոետորի ներկայացվող հիմնական պահանջները	107
Ժամանակը և հոետորական խոսքը	194

**Հովհաննես Մնացականի Բաղդաճարյան
ՀՌԵՏՈՐԱԿԱՆ ԽՈՍՔԻ ՈՒԺԸ
Համառոտ ակնարկ
Սովետական քաղաքական հոստոքական արվեստի
տեսության և պրակտիկայի ճասին**

**Ованес Мнацаканович Багдасарян
СИЛА ОРАТОРСКОГО СЛОВА**

Краткий очерк

о теории и практике советского политического
ораторского искусства
(на армянском языке)
Ереван «Айастан» 1987

Հրատ. խմբագիր՝ **Ա. Գ. Աթոյան**
Նկարիչ՝ **Հ. Մ. Մատուրյան**
Գեղ. խմբագիր՝ **Դ. Ա. Պապոյան**
Տեխն. խմբագիր՝ **Կ. Գ. Սարգսյան**
Վերստուգող սրբագրիչ՝ **Գ. Հ. Բաբաջանյան**

ИБ № 5610

Հանձնված է շարվածքի՝ 6.01.1987 թ.: Ստորագրված է
տպագրության՝ 21.04.1987 թ.: ՎՖ 00620: Ֆորմատ՝ 70×90^{1/32}:
Թուղթ տպագրական №1: Տառատեսակը՝ «Հայկական
նոր»: Տպագրություն՝ բարձր: 7,83 պայմ. տպագր. մամ.,
6,6 հրատ. մամ.: Տպաքանակ՝ 2000: Պատվեր՝ 58: Գինը՝
60 կոպ.:

«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Իսահակ-
յան 28:

Издательство «Айастан», Ереван-9, ул. Исаакяна, 28.
ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի
առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապար-
տի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91:
Полиграфкомбинат им. Акопа Мегяпарта Госкомите-
та Арм. ССР по делам издательств, полиграфии и
книжной торговли, Ереван-9, ул. Теряна, 91.